

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի Երևանյան մասնաճյուղ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԷԹԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2024

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան
մասնաճյուղ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԷԹԻԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2024

ՀՏԴ 342.53:328:94(479.25)
ԳՄԴ 67.400.621+66.033.111+63.3(5Հ)
Ս 504

Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի կողմից

Սիմոնյան Տ., Բալայան Ն.

Ս 504 Խորհրդարանական մշակույթը և էթիկան Հայաստանի Հանրապետությունում / Տ. Սիմոնյան, Ն. Բալայան.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2024.– 176 էջ:

Սույն գիտական ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորման և զարգացման առանձնահատկություններին: Այդ նպատակով խորքային պատմահամեմատական ուսումնասիրություն է կատարվել ոչ միայն հայկական պետականությունների անցած ճանապարհի, այլ նաև ոլորտում ձևավորված լավագույն փորձի բնագավառում: Առանձին վերլուծություն է կատարված նաև խորհրդարանական մշակույթի և էթիկային սոցիալ-քաղաքական ճգնաժամային պայմաններում, ինչպես նաև այն ճգնաժամներին, որ դրսևորվել են հենց խորհրդարանական մշակույթում և էթիկայում:

Գիտական այս ուսումնասիրությունը կարող է օգտագործվել խորհրդարանական մշակույթով և էթիկայով հետաքրքրվող իրավաբանների, քաղաքագետների, ուսանողների, ասպիրանտների, քաղաքական ու պետական գործիչների և այլ անձանց համար:

Աշխատանքում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել ԱՊՀ ՄԽՎ քարտուղարության պաշտոնական դիրքորոշումներին:

ՀՏԴ 342.53:328:94(479.25)
ԳՄԴ 67.400.621+66.033.111+63.3(5Հ)

ISBN 978-9939-887-54-8

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2024

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական
վեհաժողովի ժողովրդավարության զարգացման,
պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական
իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային
ինստիտուտի երևանյան մասնաճյուղի տնօրեն՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյան

Հեղինակներ՝

Տարոն Վարդանի Սիմոնյան
իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ
Գլուխ 1, Գլուխ 2 (2.1 և 2.5), Գլուխ 4

Նորայր Մարտիկի Բալայան
իրավաբանական գիտությունների թեկնածու
Գլուխ 2 (2.2, 2.3, 2.4), Գլուխ 3

Թարգմանիչ՝

Վլադա Լևոնի Ավետյան
Հայ-Ռուսական համալսարանի ռուսաց լեզվի և
մասնագիտական հաղորդակցության ամբիոնի հայցորդ,
Երևանի պետական բժշկական համալսարանի
օտար լեզուների ամբիոնի ասիստենտ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ.

ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ.....10

1.1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ.....10

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ27

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 44

2.1. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ
ՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ44

2.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....52

2.3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՕՐԻՆԱՍՏԵՂԾ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. 63

2.4. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....77

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ101

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ117

3.1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	117
3.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴԵՊԵՐԸ.....	127
3.3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	135
ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԷԹԻԿԱՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ	142
4.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ԷԹԻԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....	142
4.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	153
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	161
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	168

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակություններում և պետություններում ինչպես գրեթե բոլոր քաղաքական կառուցվածքները, այնպես էլ ժողովրդական ներկայացուցչական մարմիններն առերեսվում են լուրջ մարտահրավերների, որոնք իրենց բնույթով աննախադեպ են, իսկ արտահայտման ձևով՝ բազմատեսակ:

Աշխարհաքաղաքական փոփոխությունները, նախորդ աշխարհակարգի ու իրավակարգի կործանման արտահայտությունները, նորերի ձևավորման առաջնահերթությունները, տեխնոլոգիական սրընթաց զարգացումները, տեղեկատվության փոխանցման միջոցների և գործիքների մատչելիությունը, դրանցով պայմանավորված տնտեսական համակարգերի կերպափոխումները և անհատական ու կոլեկտիվ կենսիմաստների էական փոփոխություններն արմատական ազդեցություն են թողնում նաև քաղաքական համակարգի ու քաղաքական մշակույթի վրա՝ դրանով պայմանավորելով նաև խորհրդարանական մշակույթին և էթիկային վերաբերող հարցերի առաջնահերթությունները:

Այս աշխատանքի շրջանակներում փորձ է կատարվել անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից խորհրդարանական մշակույթի և էթիկայի հիմնահարցերին, աստորոշված խնդիրների լուծումներին և զարգացման միտումներին:

Այդ նպատակով նախ պատմահամեմատական մեթոդաբանությամբ ներկայացվել և վերլուծվել է խորհրդարանական մշակույթի և էթիկայի համաշխարհային փորձը, այնուհետև՝ հայ ժողովրդի պատմության ընթացքում (բրոնզեդարյան ժամանակներից մինչև մեր օրերը) ձևավորված խորհրդարանական մշակույ-

թի ու էթիկայի դրսևորումներն ու զարգացումները, ինչից հետո անդրադարձ է կատարվել խորհրդարանական յուրօրինակ մշակութային դրսևորումներին Հայաստանի Երրորդ Հանրապետության անկախացման գործընթացներում:

Հետազոտության երկրորդ գլխում մանրամասն վերլուծվել են նաև խորհրդարանական մշակույթի փոփոխությունները ՀՀ Սահմանադրության ընդունման (1995) և գրանցված սահմանադրական երեք փոփոխությունների (2005, 2015, 2020) համատեքստում, ինչպես նաև առանձին-առանձին անդրադարձ է կատարվել օրինաստեղծ, գործադիրի նկատմամբ վերահսկողության իրականացման և խորհրդարանական դիվանագիտության աշխատանքներում դրսևորվող խորհրդարանական մշակույթին:

Երրորդ գլխում ներկայացվել և վերլուծվել են Հայաստանի Հանրապետության խորհրդարանական էթիկայի օրենսդրական կարգավորումները, այդ էթիկայի պահպանության մարմիններն ու որոշակի նախադեպային նշանակություն ունեցող որոշումները, ինչպես նաև խորհրդարանական էթիկայի զարգացման միտումները:

Արդեն վերջին գլխում վերլուծվել են Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթի և էթիկայի առջև ծառացած մարտահրավերները սոցիալ-քաղաքական և այլ բնույթի ճգնաժամերի ժամանակ, որոնք հիմնականում դրսևորվել և դրսևորվում են անցումային հասարակական համակարգերի անկայունությամբ ու սոցիալական քառսի սահմանայնության որակներով:

Հաջորդ քայլով արդեն դիտարկվել են Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթի ու էթիկայի ճգնաժամերը՝ որպես արտաքին և ներքին ճգնաժամային գոր-

ծոնների արձագանք և/կամ հետևանք:

Աշխատանքը պատմական, իրավահամեմատական մեթոդաբանությամբ և իրավագիտական, քաղաքագիտական ու պետականագիտական դիտանկյուններից ամբողջացնում է բարդ սոցիալ-քաղաքական և պետաիրավական փոփոխությունների միջավայրերում Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, դրանց առջև ծառացող մարտահրավերների դիմագրավման փորձերը, ինչպես նաև ախտորոշում և առանձնացնում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթի և էթիկայի առանցքային խնդիրներն ու լուծման հնարավոր ճանապարհները:

Աշխատանքը կարող է օգտակար լինել իրավագիտությամբ, պետականագիտությամբ, քաղաքագիտությամբ, սոցիոլոգիայով, հանրային կառավարման գիտական ուղղություններով զբաղվող ուսանողների, ասպիրանտների, հետազոտողների, գիտական աշխատակիցների, ինչպես նաև փորձագետների, վերլուծաբանների, պատգամավորների, պետական կառավարմամբ զբաղվող անձանց համար:

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

1.1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Մարդկության պատմության ընթացքում ձևավորված մարդկային փոխհարաբերություններն ու համագործակցությունը ձևավորել են բարդացող համակեցության կանոններ, որոնք անհատական և կոլեկտիվ մակարդակներում մարդկանց զարգացմանը զուգահեռ քանակապես և որակապես աճել են: Այդ բոլոր նորմերն ամբողջության մեջ կազմում են հանրույթների և մարդկության սոցիալական նորմերը (սովորույթներ, ավանդույթներ, կրոնական նորմեր, բարոյական նորմեր, էթիկական նորմեր, իրավական նորմեր և այլն):

Ընդհանուր առմամբ, հենց այդ նորմերի համալիրն էլ ժամանակի մեջ ձևավորել և ձևավորում է այն, ինչ մենք անվանում ենք **մշակույթ**, որն էլ իր զարգացման բարձրակետում վերածվում է քաղաքակրթության և իմաստ ու բովանդակություն տալիս այդ նորմերի արժեքային հենքով առաջնորդվող մարդկանց, հանրույթներին ու պետություններին:

Գրեթե բոլոր ազգերի (հատկապես՝ հնագույն ազգերի) լեզվամտածողության մեջ «մշակույթ» տերմինը սկզբնավորվում է գյուղատնտեսության ու հողագործության մեջ, կարծես թե հենց այն պատճառով, որ հենց «հողը մշակելու» աշխատանքից էլ սկսել է մարդկության քաղաքակրթությունների պատմությունը (Միջագետք, Բերրի կիսալուսին, Հայկական լեռնաշխարհ, Կուր-Արաքսյան տարածաշրջան, Նեղոս գետի հովիտ, Ինդոս գետի

հովիտ, Հուանհե գետի հովիտ և այլն): Հետագայում այդ տերմինը սկսել են օգտագործել հանրության մեջ մարդկանց պահանջ-մունքների բավարարման և մարդկանց համակեցության կազմակերպման միջնորդավորված և կազմակերպված գրեթե բոլոր միջոցների առնչությամբ: Այդ տրամաբանության մեջ է նաև այն, որ մեծ թվով մարդկանց կյանքն արդյունավետ կազմակերպման և կարգավորման համար էլ ձևավորվեց քաղաքական իշխանությունը և նաև այդ քաղաքական/հանրային իշխանության կազմակերպման և հանրության հետ այդ նույն իշխանության փոխհարաբերության զարգացման որակն ու էությունը բնութագրող **քաղաքական մշակույթը**: Պատահական չէ, որ հույն մտածողներ Սոկրատեսը, Պլատոնն ու Արիստոտելը քաղաքականությունը համարում էին բարձրագույն արվեստ՝ որպես մարդկանց կյանքն ավելի երջանիկ դարձնելու բացառիկ գիտելիքների և դրանց կենսագործման ամբողջություն:

Ժամանակակից պետությունների և ժողովուրդների քաղաքական մշակույթի անբաժանելի մաս է կազմում նաև **խորհրդարանական մշակույթը**՝ որպես դրա բաղադրիչ և պետության օրենսդիր, ներկայացուցչական մարմնի աշխատանքների արդյունավետ կազմակերպման և դրանց որակի արտահայտման գաղափարական և գործառնական երևույթ:

Իսկ արդեն **խորհրդարանական էթիկան** նույն խորհրդարանական մշակույթի դրսևորման առանցքային կանոնների համալիր է: Խորհրդարանական մշակույթն ու էթիկան միմյանց հետ փոխկապակցված և միմյանց վրա ներազդող երևույթներ են: Ավելին, օրինակ, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդարանականների համաշխարհային կազմակերպությունը (GOPAC) շրջանառության մեջ է դրել «**էթիկական մշակույթ**» (Ethics

Culture) տերմինը՝ որպես հատուկ խորհրդարանական համակարգ, որի մեջ ներառվում է էթիկական և բարեվարքության ռեժիմը (ethics and conduct regime), ինչն ընդգծում է այս խնդրի կարևորությունը ժամանակակից ամբողջ աշխարհում¹: էթիկայի և բարեվարքության այս ռեժիմը՝ որպես խորհրդարանական մշակույթի մաս, իրենից ներկայացնում է «*խորհրդարանական գործունեության նորմերի, սկզբունքների և դրանց կենսագործման ու կանոնակարգման մեխանիզմների ամբողջություն*»²:

Սովորաբար, խորհրդարանական էթիկայի համակարգն իր մեջ ներառում է երեք բաղադրիչ՝ սկզբունքներ (օրինակ՝ Մեծ Բրիտանիայի «Հանրային քաղաքականության յոթ սկզբունքները» - Nolan Principles³), բարեվարքության կանոններ և մարմին, որ հսկում է էթիկայի նորմերի պահպանությունը:

Կարևոր է ընդգծել, որ քաղաքականության և քաղաքական գործիչների նկատմամբ հասարակության վստահության թուլացման և քաղաքական ինստիտուտների թուլացմանը զուգահեռ նկատվում է հանրային պաշտոնատար անձանց վարքագծի նկատմամբ ուշադրության աճ: Սա նշանակում է, որ առավել ուշադրության են արժանանում խորհրդարանականների վարքագիծն ու նրանց կողմից էթիկայի նորմերի պահպանումը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ խորհրդարանականների վարքագծի նկատմամբ վերաբերմունքն ու ակնկա-

¹ <https://www.gopacnetwork.org/parliamentary-ethics-conduct/>

² Ю.В.НАЗАРОВА, *Парламентская этическая культура – международный опыт*, Научные сообщения, Гуманитарные ведомости ТГПУ им. Л. Н. Толстого, No. 1-2(4-5), июль 2013, էջ 84:

³ Ազնվություն, Սկզբունքայնություն, Բացություն, Հաշվետվողականություն, Անաչառություն, Անշահախնդրություն, Առաջնորդություն. <https://www.good-governance.org.uk/publications/insights/the-nolan-principles>

լիքները ևս փոփոխվում են այնքանով, որքանով փոփոխության է ենթարկվում համաշխարհային օրակարգը: Ամբողջ աշխարհում փոփոխվում է քաղաքական կյանքի բովանդակությունը. ի հայտ են գալիս քաղաքական գործունեության նոր ձևեր և զանգվածային հարաբերությունների նոր միջոցներ, ընդարձակվում է քաղաքացիների մասնակցությունը քաղաքականության մեջ, կատարվում են հսկայական այլ սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական փոփոխություններ: Դրանք բոլորը ազդեցություն են թողնում էթիկական նորմերի և հասարակությունում դրանց քննարկումների վրա⁴:

Արդյունքում, խորհրդարանական մշակույթն ու էթիկան իրենց համալիրության մեջ դիտարկելու ու դրանցում փոփոխության բոլոր նրբերանգները ճիշտ արժևորելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել երևույթների ավելի լայն շրջանակ՝ ոչ միայն զուտ ձևի տեսանկյունից խնդրի իրավական և էթիկական ասպեկտները, այլ նաև բովանդակության համատեքստում գիտակցել ժամանակակից փոփոխությունների փիլիսոփայությունը՝ աշխարհաքաղաքականությունից մինչև մշակույթ և չորրորդ արդյունաբերական հեղափոխությունից⁵ մինչև լոկալ հանրույթների կենսիմաստ:

Խորհրդարանական մշակույթն ու էթիկան իրենց գործունեության զարգացման առանցքում են դրել ոչ միայն առանձին պետություններ, այլև մի շարք միջազգային կազմակերպությունների խորհրդարանական վեհաժողովներ, որոնց գործունեությամբ

⁴ Парламентская этика, Справочное руководство для реформаторов, ОБСЕ Варшава, 2022, էջ 10:

⁵ Մանրամասն տե՛ս T.V.SIMONYAN, *The Fourth Industrial Revolution and the New Path of Law*, Article, Journal of Yerevan University. Jurisprudence, YSU Press, 2023. No 2, էջեր 21-35:

յանը մասնակցում կամ առնվազն այդ գործունեության ազդեցությունն իր վրա է կրում նաև Հայաստանի Հանրապետությունը: Դրանցից են, օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան (վեհաժողով), ԱՊՀ անդամ երկրների խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպական միության խորհրդարանը, Եվրոպական միության Արևելյան գործընկերության խորհրդարանական վեհաժողովը (Եվրանեսթ), Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովը և այլն:

Խորհրդարանական մշակույթը ներառում է ոչ միայն ներկայացուցական մարմնի քաղաքական կյանքի կազմակերպման, դրա վրա ազդելու, հանրային կյանքի ճարտարապետության համար անհրաժեշտ իրավական ու քաղաքական ուղենիշներ տրամադրելու առաքելությունը, վերջինիս գիտակցումն ու կենսագործումը, այլ նաև քաղաքացիական հասարակության զարգացման ինստիտուցիոնալ և գործառական հեռանկարները, ինչպես նաև պատգամավորների քաղաքական ունակության մակարդակը, այն է՝ խորհրդարանական գործունեության արդյունավետ զարգացմանը նպաստելու հմտությունները, գիտելիքները և կարողությունները:

Պետք է նկատել նաև, որ «խորհրդարանական մշակույթը մարմնավորում է քաղաքական մշակույթի գործառության ղաղափուն. այն հիմնված է խորհրդարանի և հասարակության, ինչպես նաև քաղաքացիների միջև համագործակցային մշակույթի ձևավորման և զարգացման անհրաժեշտության վրա՝ անկախ նրանց քաղաքական-կուսակցական պարկանելիությունից: Գործառութային շրջանակը ներառում է քաղաքական շահերի համախընդման և ուղղորդման, լեգիտիմացման, քաղաքական սոցիալակա-

նացման, ներկայացուցչության, կողմնորոշման, ինքնգրման, կրթական և հաղորդակցման գործառույթները: Այս գործառույթների շնորհիվ խորհրդարանական մշակույթը արդիականացնում է հանրային երկխոսությունը՝ խաղային համագործակցության հաստատման շրջանակներում՝ ակնկալելով որոշումների կայացման մեթոդի կիրառում՝ որոշելու համար քաղաքական դերակատարների ռազմավարության և մարտավարության էությունը»⁶:

Խորհրդարանական մշակույթն անքակտելի է պառլամենտարիզմից: Հետևաբար, նախ պետք է հասկանալ պառլամենտարիզմի էվոլյուցիան ու էությունը, որպեսզի խորհրդարանական մշակույթը ևս ընկալելի լինի:

Վաղ պառլամենտարիզմի փուլն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը: Այստեղ կարելի է տեսնել պառլամենտարիզմի սաղմնային դրսևորումները: Ք.ա. 1-ին հազարամյակի կեսերին, օրինակ, Հին Հունաստանում և Հին Հռոմում ձևավորվել էին սկզբունքորեն նոր՝ բնույթով ժողովրդավարական իշխանական համակարգեր, որոնցում առաջին անգամ նկատվում էին իշխանության օրենսդիր ճյուղի դրսևորումներ («Չորս հարյուրի խորհուրդը» Սոլոնի օրոք, «Հինգ հարյուրի խորհուրդը» Կլիսթենեսի օրոք, Սենատը՝ Հին Հռոմում և այլն)⁷:

⁶ M.MARGARYAN, *The Development of Parliamentary Culture from an Axiological Perspective: Interview with Mariam Margaryan*, by Magda Arsenyan, EUCACIS in Brief, No. 7, May, 2019, Berlin, էջ 4, հասանելի հետևյալ հասցեով՝ <https://www.cife.eu/Ressources/FCK/EUCACIS%20inBrief%20Arsenyan.pdf> :

⁷ А.МАРТЫНОВ, А.КРЫЛОВ, Е.МАШКОВЦЕВА, *Современный европейский парламентаризм: парламентские республики Европы и тренд централизации власти*, Москва, 2017, էջ 9-10:

Պառլամենտարիզմի զարգացման 2-րդ փուլն ընդգրկում է 10-րդ դարի սկզբից մինչև 15-րդ դարն ընկած ժամանակահատվածը և բնորոշվում որպես «դասային-ներկայացուցչական» պառլամենտարիզմի շրջան. վաղ խորհրդարանները ձևավորվում էին որպես դասային ժողովներ: Այս շրջանում՝ 1215 թ-ին քաղաքական պայքարի շնորհիվ ընդունվել է «Ազատությունների մեծ խարտիան», երբ անգլիական բարոնները և հոգևորական բարձր դասը Անգլիայի թագավոր Հովհաննես Առաջին Անհողինին ստիպեցին ստորագրել «Ազատությունների մեծ խարտիան», որը փաստացիորեն սահմանափակեց կենտրոնական թագավորական իշխանության լիազորությունները: Ձևավորվեց ժամանակակից խորհրդարանի սաղմերից մեկը՝ «Թագավորական ընդհանուր խորհուրդը»: Այս շրջանի ծնունդ են Եվրոպայի ամենահին խորհրդարանը՝ իսլանդական Ալթինգը, որը հիմնադրվել է 930 թ., ինչպես նաև իսպանական կորտեսները, որոնք ի հայտ են եկել 1137 թ.: Պառլամենտարիզմի հայեցակարգային հայրենիքը, սակայն, Ֆրանսիան է: Այն ծագում է 12-րդ դարում կիրառում գտած հին ֆրանսերեն պառլամենտ բառից, որը նշանակում է «խորհրդակցություն», «ժողով», «բանակցություններ»⁸:

Եթե Անտիկ ժամանակաշրջանում ներկայացուցչական մարմինների մշակույթի հիմքում կանգնած էին հունական (ժողովրդական ժողով, 400-ի (հետագայում՝ 500-ի) ժողով, Արեոպագոս, Ստրատեգների ժողով և այլն) և հռոմեական (ժողովրդական ժողով (Տրիբունների ժողով), Սենատ) ներկայացուցչա-

⁸ Խ.ԱՋԱՏՅԱՆ, *Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը, Պատմություն և քաղաքականություն* գիտական հանդես, 2020, 6 (11), էջեր 118-130, էջ 121-122:

կան մարմինները, իսկ ֆեոդալական հասարակարգում դասային ներկայացուցչական մարմիններն էին, ապա Նոր Ժամանակաշրջանում ձևավորված խորհրդարանական մշակույթի հիմքերում մեծապես կանգնած են անգլիական և ֆրանսիական խորհրդարանների ձևավորած պրակտիկան (17-18-րդ դարեր)⁹, որոնք էլ պայմանավորեցին պառլամենտարիզմի զարգացման 3-րդ փուլը, ինչն էլ մեծապես հիմք է հանդիսացել մինչև օրս գործող 4-րդ փուլի զարգացման համար՝ 19-րդ դարից սկսած:

Այդ երկրներում տեղի ունեցած հեղափոխություններից (Անգլիա՝ 1640-ականներ, Ֆրանսիա՝ 1789-90-ականներ) հետո ձևավորված խորհրդարանական մշակույթները պայմանավորեցին Եվրոպական, իսկ այնուհետև՝ արդի համաշխարհային խորհրդարանական մշակույթի ծնունդն ու զարգացումը: Չնայած արդարության համար պետք է նշել, որ խորհրդարանական մշակույթի բավականին զարգացած տարրեր եղել են այդ երկրներում նաև հեղափոխություններից առաջ: Օրինակ՝ Անգլիայի թագավորը պարբերաբար կազմակերպել է խորհրդարանի գումարում հիմնականում պատերազմների ֆինանսավորման հարցերը լուծելու համար: Նման մի խորհրդարանի գումարում էլ ճակատագրական դարձավ անգլիական թագի համար 17-րդ դարում, երբ Շոտլանդիայի դեմ պատերազմը ֆինանսավորելու համար գումարված խորհրդարանը սկսեց Անգլիական Մեծ հեղափոխությունը:

Բրիտանական խորհրդարանի՝ դեռևս 17-18-րդ դարում ձևավորած ավանդույթներն այսօր դարձել են ոչ միայն բրիտա-

⁹ Մանրամասն տե՛ս GERHARD LOEWENBERG, *British and French Parliaments in Comparative Perspective*, 1st edition, Routledge, London-New York, 2017:

նական խորհրդարանի մշակույթի անքակտելի մասը (պահպանողականներ (տորիներ) և ազատականներ (վիգեր)), այլ նաև որպես օրինակ օգտագործվում են շատ պետությունների կողմից:

Կա կարծիք առ այն, որ «խորհրդարանական ինստիտուտները փաստացի անգլիացի ժողովրդի անհամեմատ ամենամեծ նվերն էր աշխարհի քաղաքակրթությանը: Քաղաքակիրթ մարդն իր կրոնական ներշնչանքը քաղել է Արևելքից, իր այբուբենը՝ եգիպտոսից, իր հանրահաշիվը՝ մավերից, իր արվեստն ու գրականությունը՝ մեծամասամբ Հունաստանից և իր օրենքները՝ Հռոմից: Սակայն իր քաղաքական կազմակերպություններով հիմնականում պարտական է անգլիական հայեցակարգերին, և աշխարհում գործող սահմանադրական համակարգերը ուսումնասիրվում են այն բառերով և արտահայտություններով, որոնք կարող են միայն բացատրվել՝ միջնադարյան անգլիական խորհրդարանի վրա հղում կատարելով: Այլ ազգեր ունեցել են իրենց բնիկ ներկայացուցչական համակարգերը, սակայն դրանք բոլորը մոռացության են մարնվել կամ հիմնարար փոփոխության ենթարկվել անգլիական գաղափարների ազդեցության ներքո»¹⁰:

Նույնը կարելի է ասել նաև Ֆրանսիայի դեպքում: Ֆրանսիայում ևս մինչև հեղափոխական խորհրդարանների ձևավորումը գործել են ներկայացուցչական մարմիններ, որոնցից ամենահայտնին Գլխավոր հաստիքներն էին, որտեղ ներգրավված էին բարձր ֆեոդալական, կղերական և երրորդ (բուրժուական)

¹⁰ A.F. POLLARD, M.A., LITT.D., *The Evolution of Parliament, Second Edition, Revised*, 1926, էջ 3, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://core.ac.uk/download/pdf/7048897.pdf> .

դասակարգերը: Թեև Ֆրանսիական հեղափոխական խորհրդարանը անցել է գրեթե հարյուրամյա հեղափոխական ու ճգնաժամային քաղաքական գործընթացների միջով (սկսած Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից մինչև Փարիզյան կոմունա ու Երրորդ Հանրապետություն), սակայն դրա ձևավորած քաղաքական ավանդույթները մինչ այսօր պայմանավորում են քաղաքական ուժերի դասակարգումն աջերի, ձախերի, հետագայում նաև՝ ցենտրիստների¹¹: Նման օրինակները բազմապիսի են:

Այստեղ կարևոր է ընդգծել, որ «խորհրդարանի վարքագծի և կազմի վրա ներկայացուցչական հայեցակարգի առանձնահատուկ ազդեցությունը կախված է այն բանից, թե կոնկրետ ժամանակահատվածում դրա անդամներն ու մասնակիցներն ինչ ի նկատի ունեն ներկայացուցչության ներքո»¹²: Ուստի շատ դժվար է եզրահանգումներ անել ներկայացուցչական մարմինների առաքելության և հիմնական գործառույթների մասին՝ հղում կատարելով միայն բառերի և ձևակերպումների վրա: Անհրաժեշտ է մտնել դրանց էության մեջ՝ խորանալով կոնկրետ ժամանակահատվածում գործած խորհրդարանների և դրանց անդամների մտածողության և ընդհանրապես՝ սոցիալ-պատմական միջավայրի առանձնահատկությունների մեջ, որոնք պայմանավորել են որևէ պետիրավական ու սոցիալ-քաղաքական մտածողությունը:

Մի բան կարելի է մշտապես հիշել. խորհրդարանը, անցնելով ֆեոդալական հասարակարգի միջով, կրելով դրա քաղաքա-

¹¹ Մանրամասն տե՛ս THOMAS CARLYLE, *The French Revolution. A History*, 2022 (Originally published in 1837):

¹² GERHARD LOEWENBERG, *British and French Parliaments in Comparative Perspective*, 1st edition, Routledge, London-New York, 2017, էջ 4:

կան, տնտեսական և իրավական ազդեցությունը, միևնույն ժամանակ կերպավորումների է ենթարկվել ժամանակակից սոցիալ-պատմական, աշխարհաքաղաքական, պետահրավական և ընդհանրապես՝ մշակութային առանձնահատկություններով պայմանավորված: «Քաղաքական արդիականության ամեն մի բնութագրիչ՝ արտոնության դեմոկրատացումը, ուրբանիզացիայով ու արդյունաբերությամբ գեներացված քաղաքական պահանջմունքների մեծ ալիքը, քաղաքական լեզվափոխության նոր հայեցակարգերը, առաջացրին մարտահրավերներ ավանդական ինստիտուտների համար՝ սկզբում Անգլիայում, իսկ շուտով նաև՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Եվրոպայի ավելի փոքր պետություններում: Խորհրդարանը հարմարվել է բոլոր այս մարտահրավերներին, սակայն հակասությունները հեղուկ են իր արդիականացման բոլոր փուլերում»¹³:

Երկու մեծ աշխարհամարտ, Սառը պատերազմ, Հայոց ցեղասպանությունով սկսված և չվերջացող ցեղասպանություններ, ապագադութացում, տեխնոլոգիական թռիչքաձև զարգացում, ֆաշիզմ, նացիզմ, կոմունիզմ, լիբերալիզմ, պոպուլիզմ և այլ մեծ մարտահրավերներ տեսած XX դարում խորհրդարանական մշակույթը կրել և 21-րդ դարում էլ շարունակում է կրել արտաքին և ներքին փոփոխությունների հսկայական ազդեցություն: Անփոփոխ մնում է այն, որ պետություններն իրենց խորհրդարանական մշակույթի և էթիկայի զարգացման գործում օգտագործում են հիմնականում նույն մեխանիզմները: Օրինակ՝ խորհրդարանական էթիկան գնահատելու կամ զարգացնելու գործում օգտագործվում է «վարքագծային սկզբունքներ - հատուկ ըն-

¹³ GERHARD LOEWENBERG, *նույն տեղում*, էջ 5:

թացակարգային կանոններ - վերահսկողության մարմին» մեխանիզմը, իսկ ընդհանուր խորհրդարանական մշակույթում՝ **«խորհրդարան-հանրություն, խորհրդարան-կառավարություն և ներխորհրդարանական հարաբերություններ»** հարթությունները:

Խորհրդարանական էթիկայի վերահսկողության մարմիններն, օրինակ, Հնդկաստանում և Թայվանում գտնվում են խորհրդարանից դուրս, իշխանության այլ թևերում (հիմնականում՝ դատական), իսկ ԱՄՆ-ում, Գերմանիայում և եվրոպական պետությունների մեծ մասում՝ խորհրդարանների ներսում: Մեծ Բրիտանիայում էթիկայի վերահսկողությամբ զբաղվում է անկախ մարմին՝ էթիկայի կոմիսարը¹⁴: Այս բոլոր մարմինները համադրում են հանրային ծառայողներին վերաբերող սկզբունքների, առանձին էթիկական կանոնների կարգադրագրերն ու խորհրդարանականների վարքագիծը: Խախտումների դեպքում առաջանում են էթիկական պատասխանատվության հետևանքները:

Հիմնվելով այդ փորձի վրա՝ կարող ենք առանձնացնել խորհրդարանական էթիկայի վերահսկողության երեք տեսակի մոդել:

Առաջին՝ «ինքնակարգավորման» մոդելը նախընտրելի տարբերակն է եղել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հունաստանը, Գերմանիան և Լեհաստանը: Սա ենթադրում է օրենսդիր մարմնի մոդելի շրջանակներում կարգավորող համակարգի ստեղծում կա՛մ քաղաքական խմբերի միջոցով, կա՛մ խորհրդարանական վեհաժողովների մակարդակով: Այս մոդելը սովորա-

¹⁴ Ю.В.ХАЗАПОВА, նույն տեղում, էջ 86:

բար ներառում է հատուկ էթիկայի հանձնաժողովի ստեղծում, որը զբաղվում է բարեվարքությունը խախտող պատգամավորների նկատմամբ զեկույց մշակելու, հետաքննություն և պատասխանատվություն նշանակելու հարցերով: Նման մշտական հանձնաժողովները սովորաբար ներառում են անդամներ կամ նույնիսկ նախագահում են ընդդիմության անդամները: Խորհրդարանականներին կանչելու և հարցաքննելու իրավասությունները մեծապես տարբերվում են տարբեր երկրներում¹⁵: Վերահսկողության մեկ այլ ձև կարող է լինել այն, որ խորհրդարանի նախագահը կամ որևէ պալատի նախագահը վերահսկեն բարեվարքությունը, սակայն այս մոդելը լայն տարածում չունի:

Միացյալ Նահանգներում էթիկայի հատուկ հանձնաժողովը, որը բաղկացած է խորհրդարանականներից, վերահսկում է էթիկայի խախտումների բոլոր ասպեկտները՝ սկսած բողոքների ստացումից մինչև համապատասխան պատժամիջոցների առաջարկը: Այն իրավասու է պալատի անդամների և պաշտոնյաների նկատմամբ, կարող է հետաքննել անբարոյական վարքագծի վերաբերյալ մեղադրանքները, տրամադրել մեկնաբանական և խորհրդատվական որոշումներ և կարող է պատժամիջոցներ կիրառել, բայց հարցը հանձնում է ամբողջ պալատին՝ վերջնական քվեարկության համար¹⁶: Գերմանիայում խորհրդարանի նախագահին վերապահում են թեթև կարգապահական խնդիրները

¹⁵ Codes of conduct for parliamentarians: A comparative study, King Prajadhipok's Institute. 2009, հասանելի հետևյալ հասցեով՝ http://knjiznica.sabor.hr/pdf/E_publikacije/Codes_of_conduct_for_parliamentarians.pdf.

¹⁶ Legislative ethics: a comparative analysis, National Democratic Institute. 1999, հասանելի հետևյալ հասցեով՝ https://www.ndi.org/files/026_wv_legethics.pdf.

կարգավորելու իրավասությունը (օրինակ՝ պահվածքը պալատում, ոչ պատշաճ լեզվի օգտագործումը կամ ընթացակարգային կանոնները չկատարելը), իսկ արդեն ավելի լուրջ խախտումները վերահսկվում են հատուկ հանձնաժողովի կողմից:

Այս ամենով հանդերձ՝ էթիկայի հարցերի լուծման ինքնակարգավորման տարբերակը կարող է արդյունավետ տարբերակ լինել այն երկրներում, որտեղ գործադիրը հակված է գերիշխելու խորհրդարաններում և ավանդաբար եղել է նախընտրելի տարբերակը՝ պաշտպանելու խորհրդարանների անկախությունը գործադիր իշխանությունից: Այն երկրներում, որտեղ հանրային հաշվետվողականության քաղաքականությունն ու սկզբունքը արդեն իսկ ներդրված են պետական հատվածում, և հաստատությունները հասել են արհեստավարժության բավարար աստիճանի, խորհրդարանական էթիկայի հանձնաժողովները կարող են կենսունակ տարբերակ լինել՝ իրենց ոլորտի վերաբերյալ գիտելիքների և ավելի ուժեղ օրինականության շնորհիվ¹⁷:

Երկրորդ մոդելն արտաքին կարգավորման համակարգ է, որտեղ օրենսդիր մարմնից անկախ արտաքին մարմինն է վերահսկում խորհրդարանականների բարեվարքությունը: Այն կարող է ներառել դատական կամ քվազի-դատական մարմնի ստեղծում, որը պատասխանատու կլինի բարեվարքության կիրարկման համար: Սկանդինավյան երկրներում բարեվարքության կառավարումը վստահված է ինքնավար մարմիններին, ինչպիսին է օմբուդսմենը: Խարդախության և կոռուպցիայի լուրջ

¹⁷ Մանրամասն տե՛ս Parliamentary Ethics Committees, Good Practices in Organizing Parliamentary Ethics Commissions, Transparency International - Slovenia, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.transparency.si/wp-content/uploads/2017/01/TI_Slovenia_Ethics-committees.pdf

դեպքերի համար գործերը կարող են ուղարկվել դատարաններ, ոստիկանություն և հատուկ քննչական մարմիններ: Անկախ վերահսկողության համար պատասխանատու հաստատությունից՝ ամեն դեպքում, այստեղ կարևորն այն է, որ այդ առաքելության կենսագործման պատասխանատու հաստատությունները պաշտպանված լինեն քաղաքական կամ այլ անհարկի միջամտություններից ու ազդեցություններից¹⁸:

2006 թվականին ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը մասնակից պետություններին առաջարկեց ստեղծել «հանրային ստանդարտների գրասենյակ, որտեղ կարող են խորհրդարանականների և նրանց աշխատակիցների կողմից ստանդարտների խախտման վերաբերյալ բողոքներ ներկայացվել», որը մասնագիտացած կլինի խորհրդարանական բարեվարքության մեջ, կամ ընդհանուր հակակոռուպցիոն գործակալություն, որը զբաղվելու է հանրային պաշտոնատար անձանց բարեվարքության բոլոր չափանիշների պահպանությամբ¹⁹:

Երրորդ մոդելը միավորում է ինքնակարգավորման տարրերը անկախ հանձնաժողովի հետ: Սա ներկայացվում է որպես տարբերակ, որը թույլ է տալիս պահպանել ինքնակարգավորման որոշ առավելություններ՝ միաժամանակ ներմուծելով արտաքին կարգավորման տարրեր՝ գործընթացի նկատմամբ հանրությանը վստահություն ներշնչելու համար: Գործընթացի առանձին փուլեր իրականացնում են խորհրդարանական մարմինները (խոսնակ, մշտական հանձնաժողով կամ ժամանակա-

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Background study: professional and ethical standards for parliamentarians, OSCE. 2012, հասանելի հետևյալ հասցեով՝ <https://www.osce.org/odihr/98924?download=true>

վոր հանձնաժողով), սակայն մոդելը ներառում է անկախ վերահսկողության մարմնի ստեղծում, որը սովորաբար նշանակվում է խորհրդարանի կողմից և զեկուցում է նրան: Այն կարող է ունենալ խորհրդարանական հանձնաժողովի ձև, որը կազմված է անդամներից անկախ խորհրդարանական հանձնակատարով կամ հանձնաժողովով, ինչպես, օրինակ, Միացյալ Թագավորության դեպքում: Վերահսկողը հետաքննում է դեպքերը և խորհուրդ է տալիս պատգամավորներին կանոնների կիրառման վերաբերյալ, սակայն խորհրդարանական հանձնաժողովը որոշում և սահմանում է տույժեր:²⁰

Ամփոփելով կարող ենք նշել, որ խորհրդարանական էթիկայի զարգացման, դրա պահպանության և վերահսկողական մեխանիզմների առումով առկա է հարաբերական կոնսենսուս՝ ձևակերպված միջազգային կազմակերպությունների խորհրդատվական ակտերում և ազգային օրենսդրություններում, որոնք մեծամասամբ հանգում են երեք հնարավոր մոդելների՝ ինքնակարգավորում, արտաքին անկախ մարմին և խառը տարբերակ:

Իսկ արդեն ավելի լայն երևույթ հանդիսացող խորհրդարանական մշակույթի որակն ու զարգացման մակարդակը հասկանալու համար սովորաբար առանձին-առանձին դիտարկվում են հարաբերությունների նշված երեք հարթությունները՝ **«խորհրդարան-հանրություն, խորհրդարան-կառավարություն և ներ-խորհրդարանական հարաբերություններ»**, և դրանց համադր-

²⁰ Handbook on parliamentary ethics and code: A guide for parliamentarians, GOPAC. 2009, հասանելի է հետևյալ հասցեով՝ http://www.coe.int/t/dgh/monitoring/greco/evaluations/round4/GOPAC%20Handbook%202009_EN.pdf

ման արդյունքում գնահատվում է ընդհանուր առմամբ խորհրդարանական մշակույթը:

Ի վերջո, խորհրդարանական մշակույթի զարգացվածության աստիճանի գնահատական կարող է լինել այն, թե արդյոք խորհրդարանականներն իրենց վարքագծում ու աշխատանքում, և խորհրդարանն՝ ընդհանրապես, հասել են այն գիտակցմանը, որ «խորհրդարանը ոչ թե տարբեր և թշնամական շահեր ունեցող ներկայացուցիչների կոնգրես է, այլ ամբողջին պատկանող մեկ շահով միավորված խորհրդակցական ժողով»²¹:

²¹ SYDNEY D. BAILEY, *Parliamentary Diplomacy, Parliamentary Affairs*, Volume XVI, Issue 3, March 1962, էջեր 308–314, էջ 308:

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորումը կարելի է և միգուցե՝ նաև անհրաժեշտ է դիտարկել լայն և նեղ դիտանկյուններից:

Լայն իմաստով խորհրդարանական մշակույթն ու էթիկան Հայաստանում՝ որպես հանրապետություն, սկսել են ձևավորվել Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության կարճ ժամանակահատվածում (1918-1920), որոշակի կերպափոխումներով շարունակել են այդ ընթացքը Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում (Հայաստանի Երկրորդ Հանրապետություն (1921-1991))՝ իհարկե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության խորհրդարանական մշակույթի և էթիկայի ամբողջական ազդեցության ներքո, և վերջո՝ թևակոխել են ժամանակակից փուլ արդեն Հայաստանի Երրորդ Հանրապետությունում (<<):

Նեղ իմաստով դիտարկում ենք միայն Հայաստանի Երրորդ Հանրապետությունում այդ մշակույթի և էթիկայի ձևավորումն ու զարգացումը:

Միևնույն ժամանակ թե՛ լայն և թե՛ նեղ իմաստով դիտարկելիս չենք կարող անտեսել Հայոց պատմության ընթացքում խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորման ընթացքը, որն արտահայտվել է պետական կառավարման խորհրդատվական մարմինների, աշխարհաժողովների աշխատանքներում, եկեղեցական ժողովներում և այլն: Դրանք սովորույթների, ավանդույթների, պատմական (երբեմն՝ արխետիպային) հիշո-

ղության, արդարության պատկերացումների, համաժողովրդական կամքի բացահայտման, ազգային առկա մտավոր ներուժի արտահայտման և այլ դրսևորումներով խորքային ազդեցություն են թողել ժամանակակից խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորման և ընդհանրապես դրանց ընկալումների վրա:

Այդ ազդեցության շառավիղը կարելի է հայտնաբերել դեռևս հնագույն բրոնզեդարյան ժամանակաշրջանում, երբ Հայկական լեռնաշխարհում ձևավորվում էին առաջին պետական կազմավորումները՝ իրենց ներկայացուցչական մարմիններով:

Այստեղ փորձենք շատ կարճ անդրադարձ կատարել այդ ներկայացուցչական մարմինների դրսևորումներին և նրանց իրավագործությանը:

Շումերական աղբյուրները բավականին հետաքրքիր տեղեկություններ են պահպանել, օրինակ, Արատտա պետության (Ք. ա.28-27 դարեր) տիրակալին կից գործող ներկայացուցչական մարմնի՝ Ավագների ժողովի վերաբերյալ: Ըստ այդ աղբյուրների՝ Ավագների ժողովը լուծում էր արտաքին քաղաքականության, ռազմական և այլ հարցեր, երբեմն նաև վետո դնում քրմապետարքայի արտաքին նվաճողական արշավանքների վրա²²:

Ավագների ժողովի հետագա գոյության մի շարք վկայություններ պահպանվել են Հայկական լեռնաշխարհի նաև մյուս պետական կազմավորումներում՝ Սուբուր-Արմանի (Ք. ա. 21-րդ դար), Միտաննի (Ք. ա. 16-13-րդ դարեր), Հայասա-Ազգի (Ք. ա. 15-13-րդ դարեր), Նաիրյան պետական կազմավորումները (Ք. ա. 11-9-րդ դարեր) Վանի թագավորությունը (Բիայնիլի, Ուրար-

²² BERLIN A., *Enmerkar and Ensuhksdanna*, Philadelphia, 1979, էջ 48-51; ETCSL, 1.8.2.4, տող 140-169:

տու, Արարատ, Բ. ա. 9-7-րդ դարեր)²³:

Միտաննիում արքաներին, ովքեր կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը, շրջապատում էին «երկրի մարդիկ» կամ «երկրի որդիները», որոնցից կազմվում էր Ավագների ժողովը: Վերջիններս ունեին բավականին մեծ լիազորություններ և պատասխանատվություն՝ արքայի հետ լուծելով երկրի կարևորագույն խնդիրները²⁴:

Հայասա-Ազգիի թագավորության Ավագների ժողովի վերաբերյալ էլ ուշագրավ տեղեկատվություն են պահպանել խեթական բնագրերում: Խեթական թագավոր Սուպիլուլիումաս Ա-ի և Հայասա-Ազգիի արքա Խուկանայի միջև մ.թ.ա. 14-րդ դարում կնքված բարեկամության և փոխօգնության պայմանագրով կարգավորվում են երկու թագավորությունների հարաբերությունները: Այդ պայմանագիրը, ըստ խեթական աղբյուրների, հետագայում խախտվում է Հայասա-Ազգիի նոր արքա Անիայի կողմից: Վերջինս հրաժարվում է պայմանագրով ստանձնած պարտավորություններից, պատերազմում Խաթիի դեմ և ռազմավարով հետ վերադառնում՝ ընդունելով նաև մեծ քանակությամբ խեթահպատակ փախստականների: Խեթերի նոր արքա Մուսիլիս Բ-ն փորձում է բանակցություններով հարցը լուծել, անհաջողությունից հետո վերսկսվում են ռազմական գործողությունները՝

²³ Մանրամասն տե՛ս Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ, «Համակեցության մշակույթի տարրերը նախաքրիստոնեական Հայաստանում. աշխարհաժողովների պեղականագիտական դերն ու նշանակությունը», Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում / խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Ա. Մովսիսյան, Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Մելքոնյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2023թ., էջեր 25-39:

²⁴ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ, նույն տեղում, էջ 35:

փոփոխական հաջողություններով: Ուշագրավն այն է, որ Հայասա-Ազգիի կողմից բանակցություններին մասնակցել է ոչ թե արքան, այլ Ավագների ժողովը՝ իր վրա վերցնելով նաև արտաքին քաղաքականության այդ կարևոր գործառույթը²⁵:

Վանի թագավորությունում (Ուրարտու) արքային կից եղել են խորհրդականներ, որոնք ամենայն հավանականությամբ եղել են արքային կից գործող «Ավագների ժողովի», «խորհրդա-ժողովի» կամ «ծերակույտի» անդամները²⁶:

Խորհրդատուների ինստիտուտի մասին որոշ տեղեկություններ պահպանված են ասորական արձանագրություններում, որոնք հիմնականում կրում են Վանի թագավորության դեմ տարվող հետախուզական գրագրության բնույթ: Օրինակ, երբ Ռուսա Ա-ն, պարտություն կրելով կիմերական և ասորական զորքերի կողմից, խուսափում է գերեվարումից և կարողանում է փախչել, ուրարտական զորքին թվում է, թե արքան մահացել է, և Ավագների ժողովը նոր արքա է հռչակում Ռուսա Ա-ի որդի Մելարտուա արքայազնին, ով կարճ ժամանակ անց՝ ենթադրվում է՝ արքայի վերադարձից հետո, սպանվում է իրեն շրջապատող «մեծամեծերի» կողմից²⁷: Սա խոսում է այն մասին, որ ոչ թե զորքն էր արքա հռչակում, ինչպես, օրինակ, այդ ժամանակների կամ Անտիկ շրջանի շատ այլ երկրներում, այլ հենց Ավագների ժողովը՝ որպես բարձրագույն ներկայացուցչական մարմին:

Հայկազունիների շառավիղ Երվանդունիների արքայատոհմի ժամանակ (Ք. ա. 7-րդ դարի վերջից մինչև Ք. ա. 201թ.)

²⁵ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ, նույն տեղում, էջեր 36-37:

²⁶ Տե՛ս, օրինակ, А.Г. СУКИАСЯН, *Очерк истории государства и права Биаинили-Урарту*, Ереван, 1975, էջ 72-73:

²⁷ Մանրամասն տե՛ս LANFRANCHI G./PARPOLA S., *The Correspondence of Sargon II*, part II; *Letters from the Northern and Northeastern Provinces* // SAA, V, 1990, N. 90

բարձրագույն ներկայացուցչական կամ խորհրդակցական մարմնի մասին տեղեկություններ պահպանված չեն, սակայն կարելի է ենթադրել, որ նման կառույց առկա է եղել, քանի որ թե՛ Երվանդունիներից առաջ, թե՛ նրանցից հետո եղել է նման կառույց: Ավելին, նման կառույց եղել է նաև այդ նույն ժամանակաշրջանում Կոմնագենեի թագավորությունում, որտեղ իշխել է Երվանդունիների մեկ այլ ճյուղը:

Ք. ա. 190-189թթ. Երվանդունիներից սերված Արտաշես I-ի հիմնադրած Արտաշեսյան արքայատոհմի ժամանակ Մեծ Հայք պետությունը շատ ավելի կենտրոնացված էր, այդ թվում՝ պետական կառավարման տեսանկյունից: Միգուցե նաև այդ կառավարման արդյունավետության շնորհիվ է, որ այս արքայատոհմի ժամանակաշրջանում հայկական պետությունը հասնում է երբևէ իր ամենամեծ ազդեցությանը և հիմնադրվում է Տիգրան Մեծի (Ք. ա. 95-55թթ.) կայսրությունը:

Ինչպես Արտաշեսյանների (Ք. ա. 190-1թթ.), այնպես էլ նրանց հաջորդած արտաքին և ներքաղաքական խառնակ ժամանակաշրջանում (1-66թթ.), իսկ այնուհետև՝ Արշակունիների ժամանակաշրջանում (66-428թթ.) պետական կառավարման համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցրել Աշխարհաժողովը: Այն ունեցել է բավականին մեծ դասային ընդգրկում՝ արքայից մինչև նախարարներ, զորականներ, քրմեր, կրոնի մարդիկ, «ռամիկ շինականք» և «դասապետք շինականանց»: Իրավազորությունը բավականին ընդգրկուն է եղել՝ սկսած արքաներին գահ բարձրացնելուց ու գահընկեց անելուց մինչև քաղաքների հիմնադրում, պատերազմներին մասնակցելու ու ռազմական գործողություններն ավարտելու և երկրի համար կարևորություն ներկայացնող այլ հարցեր:

Սա յուրօրինակ «խորհրդարան» էր, որն ընդունում էր հա-

մապետական օրենքներ և կանոններ, որոշումներ կայացնում երկրի ճակատագրական հարցերի վերաբերյալ²⁸:

Արտաշեսյանների արքայատոհմի վերջին ներկայացուցիչ էրատո թագուհին հենց Աշխարհաժողովի համաձայնությամբ է գահին բարձրացվել, հետո՝ գահագրկվել: Կամ մեկ այլ դեպք, երբ 16 թվականին, Նպատ լեռան մոտ գումարվում է Աշխարհաժողով, որը որոշում է գահընկեց անել Պարթևստանի նախկին արքա Վոնոնես Արշակունուն, ով, փախչելով Պարթևստանից, Հռոմի օգնությամբ բազմել էր Հայոց գահին: Հովսեպոս Փլավիոսի վկայության համաձայն՝ Վոնոնեսը Նպատի ժողովից հետո «թագավորելու ոչ մի այլ հնարավորություն չունեի»²⁹, այսինքն՝ Հայոց Աշխարհաժողովի որոշումը վճռական էր³⁰:

Ամենից շատ վկայություններն Աշխարհաժողովի վերաբերյալ կան Հայ ժողովրդի կյանքի բեկումնային՝ 4-5-րդ դարերում: Աշխարհաժողովներ գումարվել են Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, ճանաչելու կապակցությամբ (301թ.), Տիրան թագավորին պարսից արքայի գերեվարումից հետո, երբ Աշխարհաժողովը որոշում կայացվեց պատերազմել Պարսից Շապուհ արքայի դեմ³¹: Արդյունքը 350 թվականի Բասենի ճակատամարտն էր և հայկական ուժերի հաղթանակը, արքայի վերադարձը և նոր արքայի՝ Արշակ 2-ին գահ բարձրացնելը: Նույն Արշակ 2-ին գահընկեց անելու նպատակով մեկ այլ Աշխարհաժողով է գումարվում. «Ապա Հայոց աշխարհի թագավորության բոլոր մարդիկ հավաքվեցին և եկան Հայոց մեծ եպիսկոպոսա-

²⁸ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ, նույն տեղում, էջ 58:

²⁹ ՀՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍ, Հրական հնախոսություն (հարվածներ) // ՀժԴՔ, հ.1, 1981, էջ 313-314:

³⁰ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ, նույն տեղում, էջ 54:

³¹ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Հայոց պատմություն, դպր., Գ., գլուխ ԻԱ (21):

պէս Ներսէսի մօտ, - մեծամեծեր, նախարարներ, կուսակալներ, կողմնակալներ, գավառապետեր, գործակալներ և շինականների դասապետներ»³²: Կաթողիկոսի ջանքերով արքան գահընկեց չի արվում:

Աշխարհաժողովով են ընտրվել մի քանի կաթողիկոսներ՝ Դանիել արքեպիսկոպոս, Շահակ, Ներսես Մեծ և այլն: Հենց Ներսես Մեծն էր, որ Աշխարհաժողովների նմանությամբ սկիզբ դրեց նոր տեսակի ժողովների, որոնք պատմության մեջ հայտնի են որպես Կանոնադիր ժողովներ: Առաջինը Աշտիշատի կանոնադիր ժողովն էր (354թ.), որ Մովսես Խորենացու խոսքերով «կանոնական սահմանադրությամբ հաստատեց ողորմածություն, արմատախիլ արեց անգթությունը ...»³³: Ժողովը որոշումներ կայացրեց այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ աղքատանոցներ և որբանոցներ հիմնելը, գյուղերում ու ավաններում հյուրանոցներ հիմնելը, որպեսզի հյուրերը և օտարները անօթևան չմնան, վանքեր և կուսանոցներ հիմնելը, հիվանդանոցներ ու ուրկանոցներ (բորոտանոցներ) բացելը, արգելել հեթանոսական սովորություններով մահացածներին թաղելը, հանդերձները պատռելը, բարձրաձայն ողբալը, ամուսնական կյանքում միմյանց հավատարիմ լինելը, մերձավորների հետ ամուսնությունից խուսափելը, հարբեցողությունից, անբարոյականությունից, սպանություն կատարելուց հեռու մնալը և այլն:

Աշխարհաժողովներն արդեն Կանոնադիր ժողովների տեսքով գումարվել են 444թ.-ին Շահապիվանում, 449թ.-ին Արտաշատում, երբ որոշվեց դեմ գնալ պարսից արքունիքի դավանափոխության պահանջին և պատրաստվել ապստամբության, որն

³² Նույն տեղում, գլուխ ԾԱ (51):

³³ ՄՈՎԱՅԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Հայոց պատմություն, գիրք Գ (3), գլուխ Ի (10):

ավարտվեց Ավարայրի ճակատամարտով (451թ.): Ի պատասխան պարսից Հազկերտ արքայի՝ Արտաշատի ժողովը որոշեց. «Այս հավաքից [քրիստոնեությունից – Տ.Ս.] մեզ ոչ ոք չի կարող բեկել՝ ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը, ո՛չ որևէ այլ բան ...»³⁴:

Ազգային եկեղեցական ժողովներ տեղի են ունեցել 506թ.-ին, 554թ.-ին, 607թ.-ին, 645թ.-ին, 648թ.-ին Դվինում, Հայոց իշխաններ կարգելու ժողովներ՝ 655թ.-ին և 661թ.-ին, նույն՝ 661թ.-ին արաբ խալիֆա Մուավիային պատասխանելու իշխանաց ժողով, 699թ.-ին և 771թ.-ին Պարտավում, 707թ.-ին Շամքորի Բերդո վանքում, 726թ.-ին Մանազկերտում, 862թ.-ին Շիրակավանում և այլն: Հայոց թագավորության՝ ի դեմս Բագրատունյանց ժառանգության (885-1045թթ.) վերականգնման ժամանակ ևս գումարվում էին ազգային-եկեղեցական ժողովներ՝ 949թ.-ին Արդախում, 961թ.-ին, 968թ.-ին, 973թ.-ին, 1038/1039 թվականներին՝ Անիում³⁵, որոնք էական նշանակություն ունեին ոչ միայն կրոնական, այլ նաև քաղաքական կյանքի վրա:

Աշխարհաժողովների և ազգային-եկեղեցական ժողովների կրոնական, քաղաքական, իրավական և ընդհանրապես՝ մշակութային, ազդեցությունը տարածվել է նաև Հայկական Լեռնաշխարհից դուրս ձևավորված մեկ այլ հայկական պետությունում՝ Կիլիկիայան Հայաստանում (1080-1375թթ.)՝ ի դեմս Կիլիկյան հայոց արքաներին կից գործող ներկայացուցչական-խորհրդակցա-

³⁴ ԵՂԻՇԷ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, 1989, էջ 56-80:

³⁵ Մանրամասն տե՛ս Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, «Ազգային եկեղեցական ժողովները Հայաստանում Դ-ԺԱ [4-11] դարերում», Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում / խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Ա. Մովսիսյան, Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Մելքոնյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2023թ., էջեր 79-118:

կան մարմինների: Վերջին հայկական թագավորության կործանումից հետո հանրային կյանքի կազմակերպման ամբողջ բեռը ծանրացավ Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու ուսերին:

Մինչև **Հայաստանի Առաջին Հանրապետության** հռչակումը (1918թ., մայիսի 28) եղել են որոշակի փորձեր ազգային ներկայացուցչական մարմիններ ունենալու, սակայն արդարության համար պետք է նշել, որ դրանք հիմնականում սահմանափակվել են մի քանի նվիրյալ անձանց աշխատանքով և ինքնանվիրումով: Որոշակի փորձեր եղել են նաև 19-րդ դարի վերջում՝ քաղաքական ավանդական կուսակցությունների ձևավորման պահից ի վեր (Արմենակյան կուսակցություն՝ 1885., Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցություն՝ 1887թ., Հայ Յեղափոխական Դաշնակցություն՝ 1890թ.), որոնք փորձել են համախմբել հայ քաղաքական գործիչներին և մտավորականությանը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի շուրջ:

Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի (նախ՝ խորհուրդ, ապա՝ խորհրդարան) ձևավորումը, կարելի է ասել՝ սկսել է դեռևս 1912թ.-ին Ազգային բյուրոյի (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրոյի) ձևավորմամբ: Այս մարմնում կային հայկական գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Բյուրոյի նպատակը Հայկական հարցի³⁶

³⁶ Օսմանյան կայսրության տիրապետումից Հայաստանի ազատագրության և հայ ժողովրդի ինքնորոշման և ամբողջ Պատմական Հայաստանում սեփական պետականության վերականգնման, իր Հայրենիքում, սեփական պետականության սահմաններում հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար հայ ժողովրդի մղված ազգային-ազատագրական պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ: Այս հարցը միջազգային հարաբերությունների ասպարեզ է բարձրացել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ որպես Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների իրավունքների պաշտպանության բաղկացուցիչ մաս:

լուծումն էր: Ազգային բյուրոյին 1917թ.-ին հաջորդել է Հայոց ազգային խորհուրդը կամ Արևելահայ ազգային խորհուրդը, որը ներկայացուցչական, սակայն ավելի շատ գործադիր մարմին էր: Դրա ձևավորումը ևս հետաքրքիր է եղել: Նախ տեղի է ունեցել Արևելահայերի ներկայացուցչական համաժողովը՝ Հայոց համազգային համախորհրդակցությունը Թիֆլիսում 1917 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 13-ը: Մասնակցել են քաղաքական և հասարակական տարբեր կազմակերպությունների 228 պատգամավորներ: Բազմազան է եղել քննարկված հարցերի շրջանակը՝ Առաջին Աշխարհամարտում ճակատի պաշտպանություն, պարենային, փախստականության գործեր, Հարավային Կովկասում ինքնակառավարման մարմինների հաստատում և այլն: Համախորհրդակցության ավարտից հետո ձևավորվեց 35 անդամներից կազմված օրենսդիր մարմին՝ Ազգային ժողով: Վերջինս իր կազմից ընտրեց 15 հոգուց կազմված գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդ:

Ցարական, այնուհետև՝ Կոմունիստական Ռուսաստանից անկախանալուց, Անդրկովկասյան սեյմի կազմալուծումից, Վրաստանի, Ադրբեջանի անկախության հռչակումից հետո, Հայոց ազգային խորհուրդը ևս հռչակում է Հայաստանի անկախությունը՝ իրեն հայտարարելով *«հայկական գավառների գերագույն միակ իշխանությունը»*:

Հայաստանի Առաջին Հանրապետության պետական կառուցակարգում օրենսդիր մարմնի գործառույթները Հանրապետության գոյության երկուուկես տարվա տարբեր ժամանակաշրջաններում իրականացրել են տարբեր մարմիններ: Այդ իմաստով *«օրենսդիր իշխանության համակարգի կայացման և ներքին զարգացման տեսանկյունից Առաջին Հանրապետության պետական կառավարման համակարգի պատմությունը կարելի է*

բաժանել կազմակերպման երեք փուլի՝ հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, հանրապետության բնակչության և քաղաքական հիմնական ուժերի (կուսակցությունների) նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչական համակարգով ընտրված խորհրդարանական կառավարման համակարգ»³⁷:

Անկախության հռչակումից հետո մինչև 1918թ.-ի օգոստոսի 1-ը խորհրդարանական կառավարումն իրականացրել է առանց ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանի, այլ միայն ազգային-ներկայացուցչական համակարգով, ասել է թե՛ ազգային խորհուրդների միավորման և դրանց համակարգման միջոցով: 1918թ.-ից օգոստոսի 1-ից մինչև 1919թ.-ի օգոստոսի 1-ը ևս ընտրություններով ձևավորված խորհրդարան չի եղել, այլ միայն Հայաստանի Հանրապետության բնակչության և քաղաքական կուսակցությունների նշանակովի-ներկայացուցչական խորհրդով (46 պատգամավոր): Հայաստանի խորհրդում ներգրավված էին իրավագետներ, բժիշկներ, գրողներ, մանկավարժներ, զինվորականներ, քիմիկոսներ, ինժեներներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ (մուսուլման, ռուս, եզդի), ինչպես նաև կուսակցությունների ներկայացուցիչներ: 1919թ.-ի օգոստոսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը (1920թ.-ի նոյեմբեր–դեկտեմբեր) երկիրն արդեն ուներ ընտրված խորհրդարան, որտեղ կային երկու կուսակցություն (Հայ Յեղափոխական

³⁷ Ա.ՎԱՂԱՐՇՅԱՆ, Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920), Երևան, 2012, էջ 266:

Դաշնակցություն (72), Սոցիալիստ-հեղափոխական կուսակցություն (4), մուսուլմաններ (3), Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միություն (1))³⁸:

Առաջին Հանրապետության խորհրդարանը միապալատ էր, ուներ մշտական հանձնաժողովներ և ավագների խորհուրդ: Գոյության 2.5 տարիներին կազմվել է 4 կառավարություն՝ վարչապետներ Հովհաննես Քաջազնունու, Ալեքսանդր Խատիսյանի, Համո Օհանջանյանի և Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Պառլամենտը ղեկավարել են Ա.Սահակյանը (01.08.1918-01.08.1919թթ.), Ա.Ահարոնյանը (01.08.1919-04.11.1920թթ.) և Հ.Քաջազնունին (04.11.1920-02.12.1920թթ.), ընդունվել են 1000-ից ավել օրենքներ և օրենքի ուժ ունեցող իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ հայերենը պետական լեզու հռչակելու, պետական համալսարան, դպրոցներ, գրադարաններ, թանգարաններ հիմնելու, գաղթականության, բանվորների աշխատավարձերը, թոշակները ավելացնելու, ազատագրական կռիվներում զոհվածների երեխաների ուսուցումը կազմակերպելու, հայ գրողներին, գիտնականներին նյութական օգնություն, արտասահմանում սովորող երիտասարդությանը նպաստներ հատկացնելու մասին և այլն:

Բնականաբար, այս կարճ ժամանակահատվածը բավարար չի եղել խորհրդարանական մշակույթ և էթիկա ձևավորելու համար, սակայն արդեն նշմարելի էին խորհրդարանական որոշ դրսևորումներ, որոնք կարելի է առանձնացնել:

Ինչպես նախկինում՝ աշխարհաժողովների և կանոնադիր

³⁸ Մանրամասն տե՛ս Ա.ՎԱՂԱՐՇԱՆ, *Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920)*, Երևան, 2012:

Ժողովների ժամանակ, այնպես էլ 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում քաղաքական շարժումների, իսկ այնուհետև՝ Հանրապետության ձևավորման և զարգացման ընթացքում մշտապես փորձ արվել է ցուցաբերել ներառական մոտեցում և ներկայացուցչական մարմնում ներգրավել հասարակության տարբեր շերտերի և խմբերի ներկայացուցիչներ՝ ձգտելով ապահովել հնարավորինս շատ հանրային ներուժի կոնսոլիդացիա: Կուսակցություններից տարբեր ժամանակահատվածներում ներկայացված են եղել հիմնականում չորսը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան Կուսակցությունը, սոցիալ-հեղափոխականները և Հայ Ժողովրդական կուսակցությունը: Իշխող կուսակցությունը միշտ եղել է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

Միննույն ժամանակ, այս դրական գործընթացին զուգահեռ զարգանում էր նաև չափազանց բացասական խորհրդարանական քաղաքական մշակույթի մի որակ, որը լուրջ գործոններից մեկը դարձավ ոչ միայն Առաջին Հանրապետության անկման, այլ նաև հետագայում ձևավորված Երկրորդ և Երրորդ Հանրապետություններում խորհրդարանական մշակույթի բացասական դրսևորումների համար: Խոսքը վերաբերում է իշխող քաղաքական ուժի բացարձակ իշխանության ձգտման և փաստացի երկիրը միակուսակցական կառավարման համակարգի տանելու քաղաքականությանը, որտեղ որոշումները փաստացի ընդունվում էին կուսակցական նեղ վերնախավի կողմից, իսկ խորհրդարանը հանդես էր գալիս պարզապես որպես այդ որոշումների վավերացման միջոց:

Եթե Առաջին Հանրապետությունում դա Հայ Յեղափոխա-

կան Դաշնակցություն կուսակցությունն էր, որը դիմում էր բոլոր քաղաքական հնարքներին, այդ թվում՝ 1919թ.-ին Հայաստանի խորհրդի աշխատանքները բոյկոտելը և դրա լուծարումը՝ քաղաքական հակառակորդներին խորհրդարանական ասպարեզից հանելու համար, ապա Երկրորդ Հանրապետությունում՝ Բոլշևիկյան - Կոմունիստական կուսակցությունն (1921-1991թթ.) էր, որը արգելեց պետությունում բոլոր մյուս կուսակցությունների գործունեությունը, իսկ Երրորդ Հանրապետությունում արդեն՝ Հայոց Համազգային Շարժումը (1991-1998 թթ.), անկուսակցական Նախագահի հետ միավորված Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (1999-2008թթ.), արդեն միայնակ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (2008-2018թթ.), «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (2019թ.-ից): Պառլամենտական այս բացասական մշակույթի միտումը դրսևորվում է հիմնականում նրանում, որ քաղաքական ուժը, ինչ-որ կերպ հասնելով մեծամասնության խորհրդարանում և գործադիր իշխանությունում, փորձել է ոչ թե ճանապարհներ փնտրել մյուս քաղաքական ուժերի հետ երկխոսությունը զարգացնելու, դրա արդյունքում այդ քաղաքական ուժերի ներուժը նույնպես հանուն Հանրապետության օգտագործելու ուղղությամբ, այլ ամեն կերպ ձգտել է սահմանափակել որոշումների ընդունման գործում այլ քաղաքական ուժերի մասնակցությունը, հնարավոր բոլոր միջոցներով հանել նրանց որոշումների ընդունման փաստացի կառուցակարգերից և իշխել միայնակ: Տարօրինակն այն է, որ գրեթե բոլոր դեպքերում դա ավարտվել է անհաջողությամբ ու անդառնալի հետևանքներով և՛ այդ քաղաքական ուժի համար, և՛ պետության, սակայն այս բացասական

մշակույթը՝ ի հեճուկս խորհրդարանական աշխատանքի ակնհայտ արդյունավետության առ այն, որ ճշմարտությունը ծնվում է երկխոսության (դիալեկտիկա) և տարբեր կարծիքների բախման արդյունքում, դեռևս մնում է արդիական: Եվ դա այն պայմաններում, երբ պառլամենտ բառի ստուգաբանությունն անգամ հռչակում է «խոսելը» (*ֆրանսերեն՝ parler բառից*)՝ որպես խորհրդարանի աշխատանքի իմաստ և քաղաքական լավագույն որոշումների հասնելու միջոց:

Այնուամենայնիվ, Հայաստանի խորհրդայնացումից և Բոլշևիկյան կուսակցության իշխանության գալուց հետո (նոյեմբեր-դեկտեմբեր, 1920թ.) ստեղծվում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Երկրորդ Հանրապետություն), որն ամբողջությամբ այլ քաղաքական մշակույթ բերեց ոչ միայն խորհրդարանական միջավայրում, այլ նաև ամբողջ քաղաքական համակարգում: Ամբողջությամբ թելադրված լինելով դրսից՝ Մարքսիզմ-լենինյան դոկտրինից, Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքական ու պառլամենտական միջավայրից՝ Երկրորդ Հանրապետության խորհրդարանական մշակույթը մեծամասամբ ներմուծված մշակույթ էր, քան ներկայացուցչական քաղաքական կյանքի բնականոն զարգացման արդյունք:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ անգամ այդ պարագայում հանրության տարբեր շերտերից կամ հատվածներից ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված հարցերի քննարկման և կարծիքների (թեև միատեսակ) արտահայտման այդ միջավայրը (սկզբից բանվորների և գյուղացիների խորհուրդների

տեսքով, այնուհետև Գերագույն խորհրդի տեսքով) մինչ այդ նախադեպը չունեցող յոթ տասնամյակ քիչ թե շատ կայուն շարունակականության և տևականության շնորհիվ կարողացավ ամրապնդել արդեն գոյություն ունեցող հանրապետական կարգի պետականությունում խորհրդարանական, օրենսդիր ու ներկայացուցչական իշխանության միգուցե՝ ոչ արդյունավետ և ոչ իր կոչմանը մեծապես ծառայող, սակայն ձև ու կանոնակարգ ունեցող աշխատանքի ու դրա մշակույթի ձևավորումը:

Դա մեծապես նկատելի էր հատկապես ԽՍՀՄ փլուզման վերջին տասնամյակի՝ 1980-ականների խորհրդարաններում թե՛ հանրապետական, թե՛ միութենական մակարդակում, երբ խորհրդարանական ներկայացուցիչներից շատերը հանրությունում հաճախ բացարձակ հեղինակություն և հարգանք վայելող մտավորականներ ու հանրային գործիչներ էին, ում խոսքը շատ ավելի ծանրակշիռ էր դառնում, քան անգամ Կոմունիստական կուսակցության որոշ առաջնորդների:

Իր բոլոր թերություններով և խորհրդարանական բացասական մշակութային դրսևորումներով հանդերձ, երբ կուսակցական առաջնորդների բոլոր առաջարկները միաձայն ընդունելության էին արժանանում և գրեթե երբեք հակառակ կարծիք չէր հնչում՝ Երկրորդ Հանրապետությունը ցեղասպանության ենթարկված ժողովրդի կյանքի շարունակականության ապահովման, պետականության ինստիտուցիոնալ համակարգի ու ընդհանրապես՝ փախստականներով լցված սոցիալական միջավայրից հասարակության կայացման, կրթական մակարդակի աննախադեպ բարձրացման, գիտատեխնիկական ու արդյունաբերական հսկայական առաջընթացի, ինչպես նաև լայն ու նեղ ա-

ռումով մշակույթի զարգացման գործում անուրանալի դեր է ունեցել, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև խորհրդարանական մշակույթի վրա:

Հենց այս դրական ու բացասական խորհրդարանական մշակույթի ու էթիկայի ժառանգությամբ էլ հայ ժողովուրդը ԽՍՀՄ փլուզումից հետո թևակոխեց Հայաստանի Երրորդ Հանրապետության փուլ՝ սկսելով անկախության պայմաններում ինքնուրույն կառուցել հանրապետական կառավարման ձևի պետականություն և զարգացնել դրա անքակտելի մասը՝ խորհրդարանական մշակույթը և էթիկան:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մինչև ԽՍՀՄ փլուզումը (1991թ. դեկտեմբերի 21)՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում արդեն սկսել էին անկախացման գործընթացի նախադրյալների ի հայտ գալը: Հետաքրքիրն այն է, որ այս գործընթացում առանձնահատուկ և կենտրոնական դեր ունեցել է հենց խորհրդարանը՝ Գերագույն խորհուրդը: Բնականաբար, այդ գործընթացը հենց սկզբից չէր արտահայտվում «անկախության» կարգախոսով, այլ ազգային բնույթ կրող և ժամանակին արտաքին ուժերի ազդեցության ներքո կոծկված խնդիրների ի հայտ գալով:

Հիմնականում դա Արցախի հիմնահարցն էր՝ Ռուսաստանի Կենտրոնական Կոմիտեի բյուրոյի պլենումի՝ դեռևս 1921թ.-ի որոշման վերանայումը, որով Արցախը բռնակցվեց Ադրբեյջանին: Ազգային զարթոնքի հետ զուգահեռ 1988թ.-ից Ղարաբաղ կոմիտեի ստեղծման և դրա աշխատանքների թափ հավաքելուն զուգահեռ արդեն կարելի է տեսնել անկախության գործընթացի քաղաքական և հասարակական նախադրյալները:

Այս ժամանակահատվածում դեռևս ՀԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհուրդն էր գործում (1985-1989թթ.), որտեղ, բնականաբար, առկա էր Կոմունիստական կուսակցության քաղաքական մենաշնորհը: Այդ պայմաններում անգամ Գերագույն խորհուրդն ընդունեց կենտրոնական իշխանությունների կամ-

քին հակառակ մի կարևոր որոշում, ինչը պիտի հիմնաքարային նշանակություն ունենար հաջորդ գումարման Գերագույն խորհրդի կողմից ընդունվելիք Անկախության հռչակագրի համար:

Խոսքը վերաբերում է 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշմանը³⁹:

Արդեն 1990թ.-ին գումարված Գերագույն խորհրդի 12-րդ գումարումը (1990-1995թթ.), որի աշխատանքի ընթացքում արդեն իրավաբանորեն արձանագրվեց անկախությունն ու ընդունվեց Անկախության հռչակագիրը (1990թ., օգոստոսի 23), իրենից ներկայացնում էր քաղաքական և գաղափարական բազմազանության խորհրդարան, շատերի կարծիքով՝ անգամ Հայաստանի Երրորդ Հանրապետության միակ խորհրդարանը, որտեղ գաղափարախոսական բանավեճն ու մտավորական մարդկանց ներկայությունն ամենաբարձրն է եղել ցայսօր գումարված խորհրդարաններից:

Այս խորհրդարանում ներկայացված էին նաև Արցախի ժողովրդական պատգամավորները, քանի որ համաձայն 1989 թվականի դեկտեմբերի 1-ի (11-րդ գումարման) «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման, Արցախը համարվում էր միավորված Հայաստանի հետ:

Հետաքրքիրն այն էր, որ գործող կոմունիստական քաղա-

³⁹ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդ և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ, ՀԽՍՀԳԽՏ 1989/23, 01.12.1989, Նո 1650-11:

քական կարգերի պայմաններում Գերագույն խորհուրդը կարողացել էր ձևավորել այնպիսի խորհրդարանական մշակույթ, որտեղ առավել շատ գործում էր համազգային շարժման մասնակիցների ու կոմունիստական կուսակցության անդամների միջև համագործակցության, քան թե հակադրության մթնոլորտը: Միգուցե, հիմնական պատճառն այն առկա զգացողությունն էր, որ գնում են դեպի մեկ այլ, ավելի կարևոր գաղափարի կենսագործմանը, քան կար այդ ժամանակ: Սա քաղաքական ռոմանտիզմի մի յուրահատուկ ժամանակաշրջան էր, որ, արտահայտված լինելով կարճատև, բայց ազդեցիկ խորհրդարանական մշակույթում, կարողացավ պայմանավորել անկախության ժամանակաշրջանի ամբողջ քաղաքական բանավեճը՝ ազգային և լիբերալ արժեքների շուրջ: Թեև պետք է նաև արձանագրել, որ Գերագույն խորհրդից դուրս դեռևս առկա էր կոմունիստական իշխանություն, և Կենտրոնը՝ Մոսկվան, հնարավորությունը բաց չէր թողնում որևէ կերպ կանխել ազգային շարժման ներկայացուցիչների կողմից իշխանության կոտակումը սեփական ձեռքերով:

Միևնույն ժամանակ, իրավացի է այն պնդումը, որ հենց այս ժամանակաշրջանից ի վեր պառլամենտարիզմի և խորհրդարանական մշակույթի կայացման գործում սկսել են դեր խաղալ այնպիսի գործոններ, որոնք կանխորոշիչ նշանակություն պիտի ունենային ամբողջ անկախության ժամանակաշրջանի համար: Այդպիսի «քաղաքական փոխակերպման ընթացքը կանխորոշող կարևոր գործոնների դերում էին քաղաքական և իշխանական հարաբերությունների բնույթը, պատմական ավանդույթները, հայաստանյան հասարակության սոցիալական դրությունը, քաղաքացիների քաղաքական մասնակցության աստիճանն ու քա-

ղաքական գիրակցության մակարդակը, սոցիալ-պատմական, հոգևոր-մշակութային, քաղաքակրթական և այլ նախապայմանները: ... Բացի դրանից, ՀՀ-ում քաղաքական փոխակերպման բարդ ու հակասական գործընթացն ուղեկցվում էր քաղաքական կյանքի կոնֆլիկտայնության բարձր աստիճանով, իշխանության անձնավորվածությամբ, փոխակերպման գործընթացներում իշխանական քաղաքական առաջնորդների միանձնյա որոշումների կայացման դրսևորումներով, պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների կոնֆլիկտային հարաբերություններով: Քաղաքական փոխակերպման վերը նշված առանձնահատկությունները մեծապես ազդեցին նորանկախ ՀՀ-ում պատվամենտարիզմի կայացման ընթացքի և արդյունքների վրա»⁴⁰:

Ուստի անկախության գործընթացից ի վեր խորհրդարանական մշակույթի և էթիկայի զարգացման ընթացքն առավել համակողմանի հասկանալու համար անհրաժեշտ է այդ ամենը դիտարկել վերոնշյալ գործոնների պրիզմայով:

Անկախության առաջին գումարման խորհրդարանի մշակույթը շահեկանորեն տարբերվում էր մյուս բոլոր գումարումների խորհրդարաններից նախ և առաջ նրանով, որ պատգամավորները հասարակության սերուցքն էին՝ ճանաչված և հարգանք վայելող գրողներ, գիտնականներ (260 պատգամավորից մոտ 60 գիտությունների ակադեմիկոս, դոկտոր և թեկնածու), բժիշկներ, մանկավարժներ, ֆիզիկոսներ, նկարիչներ, մաթեմա-

⁴⁰ Խ.ԱԶԱՏՅԱՆ, Պատվամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2022թ., էջ. 22:

տիկոսներ՝ մտավորականների մի աստղաբույլ, շատերը վաստակավոր և ժողովրդական կոչումներ ունեցող, ում խոսքը, միգուցե, մեծամասամբ քաղաքական չէր (ինչպես այդ ժամանակ գրեթե բոլորինը), սակայն, հանրային ազդեցիկության և արժեքային փարոսիկներ տարածելու առումով, ահռելի էր:

Այս գումարման կարևոր առաջնահատկությունից էր նաև այն, որ խորհրդարանական աշխատանքներում ու դրանց արդյունքներում գերակայում էին խիստ ազատական և խիստ ազգային գաղափարական ուղղվածությունները: Առաջին հայացքից, կարծես, դժվար համակեցող, սակայն փաստացի հետաքրքիր կերպով ներդաշնակեցվող այս գաղափարական ուղղությունները դարձան գերակայող Գերագույն խորհրդի գրեթե բոլոր որոշումներում, օրենսդրական ակտերում, պատգամավորների խոսքերում և ընդհանրապես՝ խորհրդարանական մշակույթում:

Հանրություն – խորհրդարան հարաբերությունները, հատկապես սկզբնական փուլում, գրանցում էր վստահության ամենաբարձր մակարդակը, ինչը ունեցել է խորհրդարանն անկախության ամբողջ ժամանակաշրջանում, նաև հենց ներգրավված պատգամավորների բարձր մտավոր արժանիքների շնորհիվ և հասարակությունում տիրող ազգային գաղափարական ռոմանտիզմի շնորհիվ:

Խորհրդարանական մշակույթի հաջորդ տարրի՝ խորհրդարանի ներսում պատգամավորների միջև հարաբերությունների մակարդակը ևս հարաբերականորեն ամենաբարձր էթիկական և մշակութային մակարդակում էր գտնվում, որովհետև, կրկին, գրեթե բոլորը նայում էին մեկ ուղղությամբ՝ անկախացման դավոր երազանքի իրականացման, իսկ քաղաքականության հայտ ներկայացրած նոր կուսակցական գործիչները զգալիորեն

կաշկանդվում էին մտավորականների ներկայությունից և առաջ-նորդվում նրանց գաղափարներով:

Միգուցե հիմնական դժվարությունները կային գործադիր իշխանության հետ հարաբերություններով, որը սկզբում կոմունիստական էր (մինիստրների խորհուրդը), հետո՝ կրկին նեղ կուսակցական, սակայն արդեն Հայոց համազգային շարժման տեսքով:

Ի վերջո, այս գումարման խորհրդարանն էր, որ 1990թ.-ի օգոստոսի 23-ին ընդունեց Անկախության հռչակագիրն ու հռչակեց.

«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝

արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը,

գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում,

ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմե-րից,

կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը,

հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա,

զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարա-

կարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»⁴¹:

Կարևոր արձանագրումն այն է, որ Գերագույն խորհուրդը հասկացավ, որ մեկ օրում, Հռչակագիր ընդունելով, անկախ չեն դառնում, այլ միայն սկսում են պետականաշինության մի նոր գործընթաց, որը տանելու է դեպի անկախության:

Այս Գերագույն խորհրդի աշխատանքի ընթացքում էր, որ մեկ տարի անց՝ 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին անկախության հանրաքվեով Հայաստանն արդեն իրավաբանորեն անցավ մյուս աստիճանին՝ ամբողջությամբ դուրս գալով ԽՍՀՄ կազմից:

Գերագույն խորհրդի առաջին գումարման աշխատանքներում բավականին մեծ դեր էր զբաղեցնում աշխատանքն արտակարգ պայմաններում, քանի որ երկրում տեղի էր ունեցել 1988թ.-ի ավերիչ երկրաշարժը՝ ոչնչացնելով հյուսիսային մարզերի բնակֆոնդի ու արդյունաբերական ներուժի ահռելի մասը, սպանելով մի քանի տասնյակ հազար մարդ, ընթանում էր Արցախյան պատերազմն Ադրբեջանի դեմ, փակված էր Թուրքիայի հետ սահմանը, երկիրը երկու կողմից շրջափակվել էր, առկա էին հացի, վառելիքի, էլեկտրականության, ջրամատակարարման բացակայության, հանցավորության կտրուկ աճի խնդիրներ:

Այս ճգնաժամային պայմաններում խորհրդարանը շարու-

⁴¹ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդ, ՀՀԳԽՏ 1990/16, 23.08.1990, հ 0072-1

նակեց իր աշխատանքները մինչև 1995թ.-ը՝ մինչև Երրորդ Հանրապետության Սահմանադրության ընդունումը, որից հետո Գերագույն խորհուրդն արդեն հաջորդ գումարումներում հանդես էր գալու որպես Ազգային ժողով:

Ազգային ժողովի խորհրդարանական մշակույթն ու էթիկան համակողմանիորեն ուսումնասիրելու համար մենք առանձնացրել ենք մի քանի ուղղություն:

Նախ հարցը վերլուծել ենք 2005թ.-ի և 2015թ.-ի սահմանադրական փոփոխությունների համատեքստում, իսկ այնուհետև խորհրդարանական մշակույթը դիտարկել ենք՝

1. օրինաստեղծագործության գործընթացում,
2. գործադիր իշխանության վերահսկողության ոլորտում և
3. խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում:

Միևնույն ժամանակ այս բոլոր ուղղությունները փորձել ենք դիտարկել երեք հարթություններում՝ խորհրդարան-հասարակություն հարաբերություններ, խորհրդարան-կառավարություն հարաբերություններ, ներխորհրդարանական հարաբերություններ:

**2.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով: 1995թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն էական դեր ունեցավ Հայաստանում ժողովրդավարության, իրավական պետության հիմքերի հաստատման, պետական իշխանության ինստիտուտների կայացման, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրագրման գործում:

1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը կարևորում էր օրենքի գերակայությունը, ինչը հավելյալ հնարավորությունն էր ընձեռնում խորհրդարանին ընդունել օրենքների և դրան զուգահեռ զարգացնել խորհրդարանական մշակույթը: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության մեջ առանցքային դեր էր կատարում Հանրապետության նախագահը, ով, չլինելով իշխանության ճյուղերի մեջ, համարվում էր գործադիր իշխանության գլուխը, ինչը հնարավորություն չէր տալիս հակակշիռների և զսպումների համակարգի ամբողջական դրսևորմանը:

1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը իր բնույթով բնորոշվում էր «իշխանակենտրոն»՝ «անձնակենտրոն» իշխանական համակարգով: Այդ Սահմանադրության առանցքը ոչ թե մարդն էր՝ իր հիմնական իրավունքներով, այլ Հանրապետության նախագահը՝ իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ

իր գերակա դիրքով, սակայն Ազգային ժողովը այդ ժամանակաշրջանում ընդունեց բազմաթիվ օրենքներ, որոնց հեղինակներ պատգամավորներ էին⁴²: Այդ ժամանակահատվածում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում էր միայն պատգամավորին և կառավարությանը:

Սույն ժամանակահատվածում օրենսդրական նախաձեռնությունների առյուծի բաժինը պատկանում էր Ազգային ժողովի պատգամավորներին, սակայն կառավարությունը նույնպես հանդես էր գալիս օրենսդրական նախաձեռնությամբ: Թեև օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում էր Աժ պատգամավորներին, սակայն օրինագծերը հիմնականում մշակվում էին Աժ-ի իրավաբանական վարչության կողմից: Տվյալ պահին Աժ-ի իրավաբանական վարչությունը ղեկավարում էր իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանը, ով հարցազրույցի ժամանակ նշել էր, որ կառավարությունում պատկերացում չունեն օրենսդրության մասին⁴³: Աժ իրավաբանական վարչության կողմից օրինագծերի մշակումը և դրանց փոխանցումը Աժ պատգամավորներին օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար դրևստորվում էր որպես խորհրդարանական մշակույթ:

Թեև էթիկայի կանոններ սահմանված չէին Աժ կանոնակարգով, սակայն 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ առկա էին անհամատեղելիության մասին սահմանափակումներ: Սահմանադրության 65-րդ հոդվածը սահմանում էր, որ պատգամավորը չի կարող զբաղեցնել պետական այլ

⁴² <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf>

⁴³ <https://www.aravot.am/1998/09/30/783685/>

պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Պատգամավորի վարձատրությունը, գործունեության երաշխիքները սահմանվում են օրենքով: Պատգամավորի համար չէր նշվել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, ինչը հնարավորություն էր տալիս պատգամավորին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բացակայությունը շահերի բախումների դեպքերը մեծացնելու հիմքեր է ստեղծում:

Սահմանադրությունը՝ որպես կենդանի օրգանիզմ, զարգացում է ապրում՝ նպատակ ունենալով ապահովել սահմանադրականությունը հասարակական կյանքում: Որպես կանոն, սահմանադրական բարեփոխումները խորհրդարանական մշակույթի վրա ազդում են հետևյալ ուղղություններով.

1. Թափանցիկություն.
2. Քաղաքացիների մասնակցությունը օրենսդիր իշխանությանը.
3. Ընդդիմության դեր.
4. Էթիկա.
5. Ընտրական համակարգի փոփոխություն.
6. Օրինաստեղծ աշխատանք⁴⁴:

Սահմանադրական առաջին փոփոխությունները և լրացումները կատարվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ին: Սույն բա-

⁴⁴ Մանրամասն տե՛ս DIDIER MINEUR, *Theories of parliamentarism, philosophies of democracy*, Handbook of Parliamentary Studies, 2020, էջեր 86-100:

րեփոխումների միջոցով Հանրապետության Նախագահի լիազորությունները սահմանափակվեցին, իսկ խորհրդարանի լիազորությունները ընդարձակվեցին՝ նպաստելով պառլամենտարիզմի կայացմանը: Սահմանադրական մակարդակով արձանագրվեց պատգամավորների կողմից ձեռնարկատիրական գործունեության զբաղվելու արգելքը, ինչը ապահովեց շահերի հավասարակշռումը: Մինչև 2005 թվականի սահմանադրափրավական բարեփոխումները ԱԺ պատգամավորներից 75 ընտրվում էր մեծամասնական ընտրակարգով, իսկ 56-ը՝ համամասնական ընտրակարգով:

2005 թվականի սահմանադրափրավական բարեփոխումների արդյունքում մեծամասնական ընտրական համակարգով ընտրվող պատգամավորների թվաքանակը նվազեցվեց, իսկ դրա հաշվին ավելացավ համամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորների թիվը, մասնավորապես՝ 90 պատգամավոր ընտրվում էր համամասնական ընտրակարգով, իսկ 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով:

Ընդդիմության մասով հարկ է նշել, որ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրվեց որակյալ մեծամասնության գաղափարը, այլ ոչ թե ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպան ընտրելու համար անհրաժեշտ էր պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդը, որն հնարավորությունն էր ընձեռում, որպեսզի ընդդիմության ձայնը վճռորոշ դեր խաղա:

Ընտրական համակարգի փոփոխությունը նույնպես նպաստում է խորհրդարանական մշակույթի զարգացմանը, քանի որ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները

ներկայացնում են հանրապետության կոնկրետ տարածաշրջանը, իսկ համամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորները ներկայացնում են ողջ հանրապետությունը:

2012 թվականին ձևավորվեց բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, որն գործում էր հանրապետության նախագահին կից: Սույն հանձնաժողովի ձևավորումը պայմանավորված էր այդ պահին գործող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխով:

Ազգային ժողովի պատգամավորները պարտավորվում էին յուրաքանչյուր տարի էթիկայի հանձնաժողով ներկայացնել գույքի մասին հայտարարագիր: 2011 թվականի խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում էր էթիկայի կանոններ խորհրդարանի պատգամավորների համար.

1) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.

2) հարգել հանրության բարոյական նորմերը.

3) իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.

4) ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ.

5) հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս.

6) բացառապես ծառայողական նպատակներով օգտագործել իր գործունեության առնչությամբ տրամադրված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական գաղտնիք պարունակող

տեղեկատվությունը.

7) ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները:

Թափանցիկության լույսի ներքո կարևոր է նշել այն փոփոխությունը, որ նախկինում ՀՀՄ ներկայացուցիչները ոչ միայն կարող էին ներկա լինել ԱԺ նիստերին, այլ նաև ներկա էին լինում ԱԺ նիստերի դահլիճում, իսկ սահմանադրական փոփոխություններից հետո լրագրողները լուսաբանում էին ԱԺ-ի աշխատանքը լրագրողներին հատկացված հատուկ տեղից, այլ ոչ թե նիստերի դահլիճից:

Եվ՝ 1995 թվականի խմբագրությամբ, և՛ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ արձանագրվում էր, որ քաղաքացիները մասնակցում են օրենսդիր իշխանությանը այնքանով, որքանով քաղաքացիների ընտրության միջոցով է ձևավորվում օրենսդիր իշխանությունը: Կարևոր փաստ անհրաժեշտ է նշել, որ մինչ 2005 թվականը անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանող կարգավորումները ամրագրվում էին նաև ենթաօրենսդրական ակտերով, իսկ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանող նորմերը նախատեսվելու էին բացառապես օրենսդրական ակտերով:

Կարևոր փաստ պետք է նշել, որ ազդեցությունն ունեցավ խորհրդարանական մշակույթի ձևավորման վրա, խորհրդարանը սահմանադրական փոփոխությունների արդյունքում սկսեց պաշտոնների նշանակումներ կատարել, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանին, Գլխավոր դատախազին,

Կենտրոնական բանկի նախագահին և այլն:

Օրինաստեղծ աշխատանքի մասով փոփոխություններ տեղի չունեցան, այլ միայն ավելացավ խորհրդարանի աշխատանքի ծավալը, քանի որ, ինչպես նշեցինք վերևում, Սահմանադրությամբ խորհրդարանին պատվիրակվեց որոշակի պաշտոններում նշանակումներ կատարելու իրավասությունը, իսկ ամենակարևորն այն էր, որ մարդու համար իրավունքներ և պարտականություններ սահմանող կարգավորումները այսուհետ պետք ամրագրվեին բացառապես օրենքով:

Սահմանադրական երկրորդ փոփոխությունը եղավ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին: Սահմանադրաիրավական այս բարեփոխման արդյունքում հանրապետությունում սահմանվեց խորհրդարանական կառավարման ձևը, սակայն ոչ թե ուժեղ խորհրդարանով, այլ լայն լիազորություններով ընձեռնված վարչապետով: Վերևում նշված չափորոշիչների ներքո Սահմանադրությունում կատարվեցին փոփոխություններ, որոնց հիման վրա կարծում ենք՝ անհրաժեշտ է նշել հետևյալը, որն ազդեց խորհրդարանական մշակույթի վրա:

Առաջին հայացքից սահմանադրական այս փոփոխությունների արդյունքում տեղի չունեցան այնպիսի նորություններ, որոնք կարող էին ազդել խորհրդարանի աշխատանքի թափանցիկության վրա:

Օրինաստեղծ աշխատանքին քաղաքացիների մասնակցության առումով ամրագրվեցին սահմանադրական կարգավորումներ, որոնք հնարավորություն էին տալիս անձին մասնակցել օրինաստեղծ աշխատանքին: Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման

մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագրի ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Հանրագրի միջոցով հասարակությունը իրավունք է ստանում մասնակցել օրինաստեղծ աշխատանքին: Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով արձանագրվեց, որ ընտրական իրավունք ունեցող 50 000 ՀՀ քաղաքացիներ իրավունք ունեն խորհրդարանին ներկայացնելու օրենսդրական նախաձեռնության իրավունք:

Խորհրդարանական մշակույթի ձևավորման տեսանկյունից կարևոր է նշել, որ ՀՀ քաղաքացիները ստացան սահմանադրական փոփոխություններ կատարելու նախաձեռնության իրավունք: Սահմանադրության 202-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեն նաև ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Միաժամանակ, վերոնշյալ սահմանադրական հոդվածով արձանագրվեց, որ Սահմանադրության մյուս հոդվածներում նախաձեռնությամբ հանդես գալու համար անհրաժեշտ է ընտրական իրավունք ունեցող հիսուն հազար քաղաքացի:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանվել է այն օրգանական (սահմանադրական) օրենքների սպառիչ ցանկը, որոնք պետք է ընդունվեն որակյալ մեծամաս-

նությամբ, այն է՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով: Խոսքն այն օրենքների մասին է, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման վրա, որտեղ ավելի մեծ կայունություն և ավելի մեծ համաձայնություն է պահանջվում, քան սովորական օրենքների դեպքում. «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենք, Ընտրական օրենսգիրք, Դատական օրենսգիրք, «Սահմանադրական դատարանի մասին» օրենք, «Հանրաքվեների մասին» օրենք, «Կուսակցությունների մասին» օրենք և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենք:

Սահմանադրությունը նախատեսում է նաև քաղաքական փոքրամասնությունների հետևյալ իրավունքները. - քննիչ հանձնաժողովներ ստեղծելու և դրանք նախագահելու իրավունք. - կարևոր դերակատարում Գլխավոր դատախազի, ՀՌԱՀ, Վերահսկիչ պալատի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահների և մյուս անդամների ընտրությունների, Կենտրոնական բանկի նախագահի ընտրության ժամանակ, ինչպես նաև դատական իշխանության մարմինների ձևավորման գործում՝ նախատեսելով համապատասխան պաշտոնատար անձանց ընտրություն պատգամավորների ընդհանուր թվի ծայների 3/5-ով:

Սահմանադրությամբ նախատեսվեց նաև Ազգային ժողովի մարմիններում ընդդիմության ներկայացուցչություն, մասնավորապես՝ Ազգային ժողովի փոխնախագահներից մեկի պաշտոնի վերապահում քաղաքական փոքրամասնությանը:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ արձանագրվեց, որ էթիկայի հարցերով խորհրդարանում ձևավոր-

վում է ժամանակավոր հանձնաժողով:

Սույն սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում խորհրդարանը ամբողջությամբ սկսվեց ձևավորվել համամասնական ընտրական համակարգի միջոցով:

Սահմանադրության մեջ հաջորդ փոփոխությունը տեղի ունեցավ 2020 թվականի հունիսի 22-ին: Սույն փոփոխությունը միայն մեկ նպատակ էր հետապնդում՝ սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման համար սահմանել 12 տարվա ժամկետ՝ անկախ տվյալ անդամի նշանակման ժամկետից: Սույն սահմանադրական փոփոխությունը նպատակ էր հետապնդում հրաժարվել սահմանադրական դատարանի բոլոր այն անդամներին մինչև 65 տարին պաշտոնավարման իրավունք տալուց, ովքեր նշանակվել են մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները: Առաջարկվում էր սահմանափակել այդ ժամկետը 2015թ.-ից հետո Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման ժամկետով (12 տարի):

Այս փոփոխության հետ կապված բավականին լուրջ բանավեճ սկսեց թե՛ Ազգային ժողովի ներսում, թե՛ նաև արտախորհրդարանական քաղաքական ու իրավական հանրույթներում, հատկապես նման փոփոխություններ իրականացնելու սահմանադրականության շուրջ: Այս առնչությամբ եղան նաև Վենետիկի հանձնաժողովի եզրակացություն ու Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշում, որոնք ևս ոչ միանշանակ ընդունվեցին իրավական ու քաղաքական հանրույթներում:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ սահմանադրական բարեփոխումները կարևոր դերակատարում ունեն խորհրդարանական մշակույթի ձևավորման և զարգացման գոր-

ծում: Սահմանադրությունը, որպես հիմնական օրենք, ուղղակի կամ անուղղակի նախադրյալներ է ստեղծում խորհրդարանական մշակույթի համար: Թեև Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած բոլոր սահմանադրական բարեփոխումները մեծամասամբ պայմանավորված չէին հասարակության սոցիալ-քաղաքական, պետաիրավական և այլ գործոնների զարգացմամբ, այլ հիմնականում կրում էին քաղաքական ուժերի հետապնդվող նպատակների իրացում, սակայն դրան զուգահեռ բարեփոխությունների էին ենթարկվում նաև զուտ իրավական նշանակության դրույթներ: Իհարկե, սահմանադրական բոլոր փոփոխությունների նպատակներից է նաև այն, որ դրանք նպաստեն բաց, ժողովրդավարական և արդյունավետ խորհրդարանական մշակույթի ձևավորմանը, որի նպատակն է ապահովել անձի ժամանակակից ակնկալիքների իրականացումը խորհրդարանից, սակայն դրանք միանգամից տեղի չեն ունենում, հատկապես՝ եթե դրանց հիմքում ոչ թե կենդանի իրավունքն է, այլ միայն քաղաքական շահը, ինչը անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել, սակայն միայն դա բավարար չէ:

2.3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Խորհրդարանական մշակույթը անխզելիորեն կապված է խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքի հետո: Խորհրդարանական մշակույթը և օրինաստեղծ աշխատանքը հանդիսանում են խորհրդարանի արդյունավետ գործունեության բաղադրիչները, որոնք ազդում են օրենքների որակի վրա, պատգամավորների, պետության և հասարակության փոխգործակցության վրա:

Խորհրդարանական մշակույթի հիմնական բաղադրիչներն են.

ա/ **օրենքների որակը** - խորհրդարանական մշակույթը նպաստում է օրինագծերի մանրամասն և բովանդակալից քննարկմանը և այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք երաշխավորում են հասարակության և իշխանության շահերի հավասարակշռումը և զսպումը.

բ/ **համագործակցությունը** – խորհրդարանական մշակույթը արդյունավետ հիմք է պատգամավորների սերտ համագործակցության համար, որի արդյունքում օրինաստեղծ աշխատանքը կազմակերպվում է առավել արդյունավետ և որակյալ.

գ/ **վստահությունը** – խորհրդարանական մշակույթը նպաստում է հասարակության առջև խորհրդարանի վստահության բարձրացմանը, իսկ դրա համար նախադրյալներ է ստեղծում օրենքների որակը և հասարակության մասնակցությունը օրինաստեղծ աշխատանքին:

Ուստի, խորհրդարանական մշակույթի մասին առավել ամբողջական պատկեր հնարավոր է կազմել միայն օրենքների ո-

րակի միջոցով: Օրենքների որակի գլխավոր ցուցիչը այն է, թե որքանով է այդ օրենքն արտահայտում հասարակության լեզվ-տիմ շահերը և ինչպես է կիրառվում իրավակիրառ պրակտիկա-յում:

Հասարակական հարաբերությունների զարգացումը նպաս-տում է, որ այդ հարաբերությունները արժևորվեն և կարգավոր-վեն օրենքի մակարդակով: Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունը պատկանում է Ազգային ժողովին, այ-սինքն՝ օրենքներ ընդունելու իրավասությունը պատվիրակված է միայն խորհրդարանին, ինչը ամրագրվել է Սահմանադրությ-յամբ:

ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասե-րը համապատասխանաբար սահմանում են, որ Ազգային ժողո-վը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, և օրենսդիր իշ-խանությունն իրականացնում է Ազգային ժողովը:

Սույն բարձր նորմատիվ պատվիրաններից կարելի է ող-ջամտորեն ենթադրել հետևյալը.

ա/ օրենսդիր իշխանությունը հանդիսանում է պետական իշխանության առանձին գործառույթ, որի ներքո խորհրդարա-նը ընդունում է օրենքներ, ինչը պետական իշխանության մար-մինների համակարգում միայն խորհրդարանի մենաշնորհն է.

բ/ խորհրդարանն ունի հանրապետական ներկայացուց-չական բնույթ, քանի որ կազմավորվում է ընտրությունների մի-ջոցով և ներկայացնում է ողջ Հանրապետությունը.

գ/ խորհրդարանը հարաբերականորեն ինքնուրույն մար-մինն է, որը դրսևորվում է օրենքներ ընդունելու միջոցով, ինչը սահմանում է համապարտադիր վարքագծի կանոններ հասա-րակական համակարգի բոլոր մասնակիցների համար, այդ

թվում՝ իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ:

Այսինքն՝ Ազգային ժողովի հիմնական առաքելությունն է օրենքներ ընդունելը, որը խորհրդարանի մենաշնորհն է: Օրինաստեղծ աշխատանքին անդրադարձել է նաև Սահմանադրությունը: Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Ազգային ժողովը օրենքներն ընդունում է քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 3-րդ բաժինը վերաբերում է օրենսդրական գործընթացին: Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, խմբակցությունը և կառավարությունը:

Որևէ հասարակական հարաբերություն օրենսդրական մակարդակով կարգավորելու կարիքը ելնում է հասարակական և քաղաքական պահանջմունքներից: Հասարակական կարիքներից ելնելով նորմատիվ պատվիրանի նախագիծ մշակելու անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ, իսկ քաղաքական կարիքներից ելնելով նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակվում է քաղաքական իշխանության կողմից՝ քաղաքական պահանջմունքները բավարարելու նպատակով:

Հասարակական կարիքներից ելնելով օրենքի նախագիծ մշակելու անհրաժեշտությունն ի հայտ է գալիս նաև պատգամավոր-հասարակություն համագործակցության շրջանակներում, երբ պատգամավորը պարբերաբար հանդիպումներ է ունենում

հասարակության ներկայացուցիչների հետ: Այդ շփումների արդյունքում պատգամավորը բացահայտում է իրավակարգավորման բացը կամ հակասությունը, որի արդյունքում պատգամավորն իր նախաձեռնությամբ կամ այլ պատգամավորների հետ միասին հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնությամբ համապատասխան հասարակական հարաբերությունը կարգավորելու համար:

Ժողովրդավարական հասարակարգ ունեցող պետություններում հասարակության մասնակցությունն օրինագծերի մշակմանը խորհրդարանական մշակույթի դրսևորումներից է:

Օրինաստեղծ աշխատանքին և ոլորտային քաղաքականության մշակմանը հասարակության մասնակցության ապահովումը հնարավորություն է տալիս լուծել մի շարք խնդիրներ.

1) նպաստում է պետության և հասարակության միջև կառուցողական երկխոսությանը,

2) թույլ է տալիս լսել համապատասխան ոլորտում գիտելիքներ և փորձ ունեցող շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները, ինչպես նաև հաշվի առնել հնարավոր կարգավորման հասցեատերերի դիրքորոշումները՝ ապահովելով գործնականում կիրառելի և ամբողջական կարգավորում պարունակող իրավական ակտի գոյությունը,

3) օրինագծի մշակման փուլում վեր հանել և լուծել հասարակական այն մտահոգությունները, որոնք հետագայում կարող են խոչընդոտել օրենքի կիրառմանը իրավակիրառ պրակտիկայում՝ նպաստելով հետագա կենսագործման արդյունավետությանը,

4) հասարակությանը իրազեկել ոլորտում նախատեսվող քաղաքականության մասին, պարզաբանել առաջարկվող կար-

գավորումների բնույթը՝ դրանով երաշխավորելով իրավական կարգավորման կանխատեսելիությունը:

Սահմանադրությամբ արձանագրվել է, որ ընտրական իրավունք ունեցող 50 հազար քաղաքացի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունեն: Քաղաքացիական նախաձեռնությունն իրականացվում է «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի կանոնակարգով օրենսդրական նախաձեռնության համար սահմանված պահանջներին համապատասխան: Երբ հասարակությունն է մշակում օրենքի նախագիծը և ներկայացնում է Ազգային ժողով, իսկ խորհրդարանը համապատասխան ընթացակարգերով անցկացնելուց հետո տվյալ օրինագիծը ընդունում է, դրանով արտահայտվում է հասարակություն-խորհրդարան համագործակցության բարձրագույն ձևը, ինչը էապես նպաստում է խորհրդարանական մշակույթի զարգացմանը:

Հասարակության մասնակցությունը օրինաստեղծ աշխատանքին կատարվում է նաև հանրային քննարկումների կամ խորհրդարանական լսումների միջոցով: Խորհրդարանական լսում կարող են հրավիրել Ազգային ժողովի նախագահը, մշտական հանձնաժողովները, ժամանակավոր հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով, խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծի վերաբերյալ: Խմբակցության կողմից հրավիրվող լսումների պարագայում առկա է քանակական սահմանափակում. յուրաքանչյուր հերթա-

կան նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել միայն մեկ լսում: Խորհրդարանական լսումների ընթացքում հասարակության ներկայացուցիչները ոչ միայն հանդես են գալիս ելույթներով, այլ նաև ներկայացնում են իրենց գրավոր առաջարկները:

Ինչպես նշեցինք վերևում, օրենքի նախագիծ մշակելու անհրաժեշտությունը բխում է հասարակական հարաբերությունները կարգավորելու կամ քաղաքական պահանջմունքները բավարարելու անհրաժեշտությունից: Երբ օրենքի նախագիծ մշակելու անհրաժեշտությունը արձանագրվում է, ապա իրավական ակտի նախագիծը մինչև օրենք դառնալը անցում է որոշակի փուլերի միջոցով:

Օրենքի նախագծի մշակման փուլերն են.

- 1) Օրենքի նախագծի մշակում,
- 2) Օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելը՝ հանրապետական գործադիր մարմիններից կարծիք ստանալու համար,
- 3) Օրենքի նախագծի ներկայացում ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության,
- 4) Օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ,
- 5) Օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն՝ հավանություն ստանալու համար,
- 6) Օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Ազգային ժողով,
- 7) Օրենքի քննարկում և ընդունում Ազգային ժողովում,
- 8) Ընդունված օրենքի նախագծի ներկայացում ՀՀ նախագահին:

Սույն աշխատանքի մեջ կուսումնասիրենք ԱԺ պատգամավորի օրենսդրական նախաձեռնության դրսևորումը: Եթե օրեն-

քի նախագծի հեղինակը պատգամավորն է, ապա օրենքի նախագիծը մշակելուց հետո ներկայացնում է Ազգային ժողովի աշխատակազմ: Հարկ է նշել, որ ԱԺ պատգամավորը կարող է հանդես գալ միայն այնպիսի օրենքների ընդունման նախաձեռնությամբ, որոնց նախաձեռնություն ներկայացնելու բացառիկ իրավասությունը չի պատկանում ՀՀ կառավարությանը: ԱԺ պատգամավորը, օրենքի նախագիծը պատրաստ լինելու դեպքում, ներկայացնում է Ազգային ժողովի աշխատակազմ, վերջինս էլ ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: ԱԺ նախագահը օրենքի նախագիծը ուղարկում է ՀՀ կառավարություն՝ կարծիք ստանալու համար:

ՀՀ կառավարությունը, ստանալով օրենքի նախագիծը, ուղարկում է գործադիր իշխանության հանրապետական մարմիններին՝ կարծիքներ հավաքագրելու համար, ինչպես նաև ուղարկում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության համար: Կարծիքների հավաքագրումից հետո օրենքի նախագիծը քննարկվում է նախարարական կոմիտեում: Նախարարական կոմիտեի հիմնական նպատակն առանձին ոլորտների համար զարգացման անհրաժեշտ ռազմավարության, դրա իրականացման և համակարգված վերահսկման միասնական մոտեցումների ձևավորման, անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի, հայեցակարգերի, ծրագրերի մշակման աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու համակարգումն է:

Հետաքրքիր է, որ ձևավորված ավանդույթի համաձայն, նախարարական կոմիտեի նիստերին մասնակցում է նաև օրենքի նախագծի հեղինակը՝ ԱԺ պատգամավորը: Նախարարական կոմիտեի նիստին պատգամավորը մասնակցում է օրինագծի

քննարկմանը, պատասխանում է հարցադրումներին: Եթե նախարարական կոմիտեն դրական որոշում է կայացնում, ապա օրինագիծը ներկայացվում է ՀՀ կառավարությանը՝ հավանություն ստանալու համար: Կառավարությունը պատգամավորի կողմից հեղինակած նախագծին հավանություն տալուց հետո ներկայացվում է Ազգային ժողով:

Նախարարական կոմիտեի կամ կառավարության նիստերին ԱԺ պատգամավորի մասնակցությունը իր կողմից հեղինակած օրենքի նախագծի քննարկմանը բարձրացնում է պետական իշխանության մարմինների միջև փոխգործակցությունը և համագործակցությունը, ինչը համարվում է խորհրդարանական մշակույթի դրսևորում:

Կառավարության հավանությունը ստանալուց հետո ԱԺ պատգամավորի հեղինակած օրենքի նախագիծը ներկայացվում է ԱԺ մշտական հանձնաժողով՝ եզրակացություն ստանալու համար: Այն մշտական հանձնաժողովը, որի իրավասությանն է վերաբերում օրենքի նախագիծը, իրավունքի ուժով համարվում է գլխադասային: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նիստերին մասնակցում է օրենքի նախագծի հեղինակը՝ պատգամավորը՝ որպես հիմնական զեկուցող, իսկ կառավարության ներկայացուցիչը՝ որպես հարակից զեկուցող: Հանձնաժողովի նիստերի ընթացքում պատգամավորը ներկայացնում է օրենքի նախագիծը:

Խորհրդարանական մշակույթի ձևավորված ավանդույթն է նաև այն, որ եթե հանձնաժողովի նիստերի ընթացքում պատգամավորը օրենքի նախագիծը ներկայացնելիս իր խոսքում անդրադառնում է հանձնաժողովի նիստերին մասնակցող պատգամավորներից որևէ մեկին, ապա որպես խորհր-

դարանական մշակույթի դրսևորում տվյալ պատգամավորը անմիջականորեն իրավունք է ստանում կարծիք հայտնելու՝ շրջանցելով հաստատված օրակարգը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է.

«1. Օրենքի նախագծի նախնական քննարկումը Կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է գլխադասային հանձնաժողովը, ինչպես նաև այլ մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ Խորհրդի առաջարկությամբ կարող են իրականացնել նաև մյուս մշտական հանձնաժողովները:

2. Գլխադասային հանձնաժողովը Կանոնակարգով սահմանված կարգով՝

1) նախագծի առաջին և երկրորդ ընթերցումից առաջ Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն.

2) կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ:

3. Հարցի քննարկումը չի սկսվում և առանց քվեարկության հետաձգվում է հիմնական զեկուցողի առաջարկությամբ, ինչպես նաև քննարկման սկզբում՝ նրա բացակայության դեպքում: Եթե քննարկումը հետաձգվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հիմնական զեկուցողը հանձնաժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով հարցի քննարկմանը չի ներկայանում, ապա այն շրջանառությունից հանվում է: Սույն մասով սահմանված կարգով հարցի քննարկումը կարող է հետաձգվել մեկ անգամ:

4. Եթե գլխադասային հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող

է Ազգային ժողովում հարցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով հատուկ կարծիքը:

5. Գլխադասային հանձնաժողովից բացի, մյուս մշտական հանձնաժողովները կարող են մինչև հարցի քննարկումն սկսվելը իրենց գրավոր եզրակացությունները ներկայացնել Ազգային ժողով: Այդ դեպքում մշտական հանձնաժողովի ներկայացուցիչն իրավունք ունի գլխադասային հանձնաժողովում, ինչպես նաև Ազգային ժողովում նախագծի քննարկման ընթացքում հանդես գալու հարակից զեկուցմամբ:

...»:

Օրենսդիրը սույն նորմատիվ պատվիրանի միջոցով կարգավորել է օրենքի նախագծի նախնական քննարկման հետ կապված հարաբերությունները: Եթե գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը դրական է, ապա ներկայացվում է ԱԺ նախագահին հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկելու և օրենքի նախագիծը առաջին ընթերցման ներկայացնելու համար:

Ինչպես նշեցինք, խորհրդարանական մշակույթը մարմնավորում է խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքը և իրենից ներկայացնում է պրակտիկայի, սովորույթների նորմերի և վարքագծի կանոնների ամբողջություն, որն բնորոշում է խորհրդարանական գործունեությունը: Օրենքի նախագծի առաջին ընթերցումից առաջ գլխադասային հանձնաժողովում տեղի է ունենում օրենքի նախագծի նախնական քննարկում, որի ընթացքում օրենքի նախագծի հեղինակը ներկայացնում է նախագիծը, առաջարկությունները նախագծի վերաբերյալ, այնուհետև՝ հանձնաժողովի անդամները, կառավարության ներկայացուցիչը հարցեր են տալիս հեղինակին, եթե օրենսդրական նախաձեռնությո-

յամբ հանդես չի եկել ՀՀ կառավարությունը: Գլխադասային հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվում են ոչ միայն կառավարության, հանձնաժողովի անդամների առաջարկությունները, այլ նաև ԱԺ աշխատակազմի կողմից ներկայացված առաջարկությունները: ԱԺ աշխատակազմն իր եզրակացությունը պատրաստում է պատգամավորի մշակած օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելուց հետո՝ 3 շաբաթյա ժամկետում: Գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո ներկայացվում է ԱԺ նախագահին, որպեսզի նախագիծը ընդգրկվի ԱԺ հերթական նստաշրջանների օրակարգում:

Ազգային ժողովի նիստը բացելուց առաջ կատարվում է պատգամավորների գրանցում, որի ժամանակ պատգամավորները ունեն 10 վայրկյան էլեկտրոնային եղանակով գրանցվելու համար: Ազգային ժողովի նիստում քննարկվող հարցի հիմնական և հարակից զեկուցողները հանդես են գալիս ամբիոնից՝ նիստը նախագահողի հայտարարությամբ: Ազգային ժողովի նիստում հարցերի համար պատգամավորների հերթագրումն իրականացվում է յուրաքանչյուր զեկուցումից կամ ելույթից հետո: Հիմնական և հարակից զեկուցողների կողմից հարցերին պատասխանելուց հետո օրենքի նախագիծը դրվում է առաջին ընթերցմամբ քվեարկության: Օրինագիծը առաջին ընթերցմամբ ընդունվելու դեպքում գլխադասային հանձնաժողովում քննարկվում են նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկները: Գրավոր առաջարկների հիման վրա, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը մշակվում է և ներկայացվում է ԱԺ նախագահին հերթական նստաշրջանի չորսօրյա օրակարգում ընդգրկվելու համար:

Երկրորդ ընթերցման ժամանակ հարցեր տալու իրավունքը վերապահված է միայն գրավոր առաջարկներ ներկայացնողներին, որից հետո նախագիծը դրվում է քվեարկության: Օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվելու դեպքում օրինագիծը ուղարկվում է ՀՀ նախագահին՝ ստորագրության համար:

Ազգային ժողովում այն քննարկումները, որոնք տեղի են ունենում գլխադասային հանձնաժողովի կամ հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի ընթացքում, նպատակ են հետապնդում ապահովել պատգամավորների համագործակցությունը և փոխադարձ վստահությունը, ինչը նպաստում է օրենքների որակի բարելավմանը, սխալների կամ հակասությունների վերացմանը:

Խորհրդարանական մշակույթի ձևավորվող ավանդույթ է նաև այն, որ սովորաբար գլխադասային հանձնաժողովներում ընդդիմության ներկայացուցչին տալիս են բոլոր իշխանական պատգամավորներից հետո՝ վերջում ելույթ ունենալու հնարավորություն, որպեսզի կարողանա վերջնական հակադարձողի դերը արդյունավետ օգտագործել:

Խորհրդարանական մշակույթի մեկ այլ ավանդույթ է, երբ հրավիրվում է այն ոլորտից ներկայացուցիչ, ինչի առնչությամբ քննարկում է տեղի ունենում օրենսդրական նախաձեռնության կամ որևէ այլ նախաձեռնության շուրջ: Օրինակ՝ սովորաբար Բարձրագույն դատական խորհրդից, Վճռաբեկ, Վերաքննիչ, Ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններից հրավիրվում են դատավորներ, երբ քննարկվում են Դատական օրենսգրքում կամ ճյուղային դատավարական օրենսգրքերում փոփոխություններ: Հրավիրվում են

նաև փաստաբաններ, դատախազներ, քննիչներ, սնանկության կառավարիչներ, արվեստագետներ, մշակույթի գործիչներ, գործարարներ, տնտեսագետներ, ինչպես նաև առանձին գիտնականներ իրենց գործունեության կամ հետազոտության ոլորտի օրենսդրական նախաձեռնությունների քննարկումներին մասնակցելու նպատակով: Նրանք մասնակցում են գլխադասային հանձնաժողովների նիստերին, հանդես են գալիս ելույթներով, պատասխանում են հարցերին: Երևի թե միակ տարբերությունը, որ առկա է նման դեպքերում նրանց և պատգամավորների միջև, նախագծի քվեարկությանը մասնակցելն է:

Արդյունավետ խորհրդարանական մշակույթի դրսևորում է նաև այն, որ Ազգային ժողովը համագործակցության պայմանագրեր է կնքում համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների, ինչպես նաև առանձին փորձագետների հետ, օրենսդրական նախագծերի ազդեցության գնահատում իրականացնելու, ինչպես նաև խորհրդարանական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Օրինաստեղծ աշխատանքը խորհրդարանական մշակույթի շրջանակներում համարվում է շարունակական գործողություններ, ինչը բնորոշ է Դայմինգի որակի ցիկլին⁴⁵:

Մասնավորապես, օրենքի նախագծի մշակումը և քննարկումները համընկնում են որակի ցիկլի պլանավորման փուլի հետ, իսկ օրենքի նախագծի ընդունումը համընկնում է որակի ցիկլի կատարման փուլի հետ, իրավակիրառ պրակտիկայում օրենքի հետ կապված խնդիրների բացահայտումը՝ որակի ցիկլի ստուգման հետ, իսկ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ մշակելը՝ որակի ցիկլի բարելավման հետ:

⁴⁵ <https://balancedscorecard.org/bsc-basics/articles-videos/the-deming-cycle/>

Օրենքի նախագծի շրջանառության փուլում դրսևորվում է պետական իշխանության մարմինների, երբեմն նաև՝ իշխանության և քաղաքական ընդդիմության համագործակցությունը, այդ թվում՝ հասարակության ակտիվ մասնակցությամբ, ինչը ապահովում է խորհրդարանական մշակույթի զարգացումը: Խորհրդարանական մշակույթը առանցքային դեր ունի օրինաստեղծ աշխատանքում, ինչը նպաստում է առավել որակյալ օրենքների ընդունմանը, բարձրացնում է հասարակության վստահությունը և բավարար ու անհրաժեշտ հող է ստեղծում ժողովրդավարական արժեքների զարգացման կամ ամրապնդման համար:

2.4. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ժողովրդավարական պետություններում խորհրդարանական մշակույթը նորմերի, ավանդույթների, սկզբունքների ամբողջությունն է, որի կարգավորման առարկան է նաև խորհրդարանի և գործադիր իշխանության միջև ծագող հարաբերությունները: Խորհրդարանական մշակույթը կարևոր դեր է խաղում իշխանությունների բաժանման, կառավարության հաշվետվողականության և արդյունավետ կառավարման մեջ:

Ընդհանրապես, «սոցիալական միջավայրերը, որտեղ գործում են ինստիտուտները, պայմանավորում են ինստիտուտների վարքագծի և գործելու ձևը»⁴⁶: Այս տեսանկյունից խորհրդարանական հանրապետությունների մեծ մասում, այդ թվում՝ նաև Հայաստանում, գործադիր իշխանության գերակայության քաղաքական մշակույթն ահռելի ազդեցություն ունի խորհրդարան-գործադիր իշխանություն հարաբերությունների վրա:

Խորհրդարանական մշակույթը առավել ցայտուն կերպով դրսևորվում է, երբ խորհրդարանը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Սույն վերահսկողությունը առավել լուսավորվում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում: Խորհրդարանական կառավարման ձևում խորհրդարանը՝ որպես ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած մարմին, պետք է կազմավորի կառավարություն և վերահսկողություն իրականացնի նրա նկատմամբ:

⁴⁶ Մանրամասն տե՛ս THOMPSON, M., ELLIS, R.J. and WILDAVSKY, A. (eds), *Cultural Theory*. Boulder: Westview Press, 1990:

Այս ելակետից է բխում նաև կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև՝ իր վարած քաղաքականության համար:

Խորհրդարանական վերահսկողությունը կարելի է բնորոշել՝ որպես կառավարության կողմից վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն:

Սակայն պետք է նկատել, որ մշակութային տեսանկյունից զարգացման փուլում գտնվող քաղաքական համակարգերում «գործադիրի և պատգամավորների վերադաս-ստորադաս դիրքի մշակութային արժեքի տեսակետից պատգամավորները գրեթե բոլոր առումներով հետ են մնում քաղաքական և վարչարարությամբ զբաղվող գործադիրի դերակատարներից: Ենթադրվում է, որ մշակութային առումով պատգամավորներն աստիճանակարգություն ունեցող հասարակությունում ավելի լավ վիճակում պետք է լինեին գործադիրին հաշվետու պահելու գործում: Սակայն իրականությունը չի համապատասխանում նման մշակութային ակնկալիքներին: Այս պայմաններում ներկայացուցչական մարմնի համար գործադիրին հաշվետու պահելը դառնում է մեծ խնդիր: Գործող մշակույթը ենթադրում է, որ իշխող կուսակցությունը (իշխանությունը) միշտ գերակայում է ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ: Իշխանություն-ընդդիմություն հարաբերությունները թշնամական են, իսկ իշխանությունը կասկածամիտ է ընդդիմության նկատմամբ: Նման հանրույթներում իշխող վարչակարգի գերիշխանության և ոչ-հաշվետվողականության մշակույթը թաքնված է իշխող ռեժիմի գիտակցության մեջ: Հետևաբար, միայն մշակութային արժեքներն են, որոնք կարող են խորապես ազդել իշխող ռեժիմի վրա՝ մշակելու ինստիտուցիոնալ կանոններ, որոնք թույլ կտան [կամ թույլ չեն տա]

շրջանցել հաշվետվողականությունը»⁴⁷:

Հետևաբար խնդիրը խորհրդարան-կառավարություն վերահսկողության և՛ իրավական կարգավորման մեջ է, և՛ միգուցե, առավել շատ՝ քաղաքական ու խորհրդարանական մշակույթի մեջ, որոնց համադրմամբ էլ վերահսկողական մեխանիզմը ցուցաբերում է առավել բարձր արդյունավետություն:

ՀՀ Սահմանադրության իրավահամեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ Սահմանադրությամբ արձանագրված են վերահսկողության հետևյալ գործիքները.

- 1) մշտական և ժամանակավոր հանձնաժողովները.
- 2) քննիչ հանձնաժողովները.
- 3) պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը.
- 4) հարցապնդումները.
- 5) հրատապ քննարկումները.
- 6) վարչապետին անվստահություն հայտնելը.
- 7) խորհրդարանական լսումները.
- 8) բյուջեի ընդունումը և բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Խորհրդարանական մշակույթի ձևավորման և զարգացման հարցում մեծ դերակատարում ունեն **Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները**, որոնց միջոցով խորհրդարանը իրականացնում է իր գործառնությունները:

Պառլամենտական կառավարման ձևում հանձնաժողովները կարևոր մեխանիզմ են նաև իշխող քաղաքական մեծամաս-

⁴⁷ TAIABUR RAHMAN, *Parliamentary Control and Government Accountability in South Asia: Comparative analysis of Bangladesh, India and Sri Lanka*, Routledge Advances in South Asian Studies, 2008, էջ 17:

նության և պառլամենտական փոքրամասնության շահերը հավասարակշռելու համար⁴⁸:

ՀՀ Ազգային ժողովում մշտական հանձնաժողովների թիվը չի կարող գերազանցել 12-ը. ներկայումս խորհրդարանում առկա է 12 մշտական հանձնաժողով: Մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողությունը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. օրենքների կատարման ընթացքի վերաբերյալ վերահսկողություն,

2. կառավարության ծրագրի վերաբերյալ տեղեկությունների ստացում,

3. պետական բյուջեի նկատմամբ վերահսկողություն և

4. պետական մարմինների զեկույցների և հաղորդումների քննարկման վերահսկողություն:

Մշտական հանձնաժողովները ունեն մի շարք գործառույթներ խորհրդարանական վերահսկողության բնագավառում, մասնավորապես՝ հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, հրավիրել խորհրդարանական լսումներ, ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Մշտական հանձնաժողովների՝ հարցումներ կատարելու ինստիտուտը խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետությունների հենասյուններից է: Աժ կանոնակարգի 12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մար-

⁴⁸ I. MAATSON, K. STRØM, Parliamentary Committees //in HERBERT DÖRING, Parliaments and the majority rule in Western Europe, Mannheim Centre for European Social Research (MZES), էջ 249: (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.uni-potsdam.de/fileadmin01/projects/vergleichende-politikwissenschaft/D%C3%B6ring/PMR-W-Europe.pdf>):

միններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում պատասխանել այդ հարցումներին: Խորհրդարանական մշակույթի դրսևորումներից է պաշտոնատար անձանց հրավիրելու և լսելու հանձնաժողովի իրավասությունը: Աժկանոնակարգի 122-րդ հոդվածի 4-րդ մասը մշտական հանձնաժողովներին իրավասություն է վերապահում խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի նիստին և պատասխանել հարցերին:

ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածը վերաբերում է **վերահսկողական կարևոր գործիքին՝ քննիչ հանձնաժողովներ ձևավորելուն**: Խորհրդարանական վերահսկողության կարևորագույն բնութագրիչներից է հանրային հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերով ուսումնասիրություններ իրականացնելը, փաստեր պարզելը և դրանք խորհրդարանական քննարկման առարկա դարձնելը:

Հետևաբար՝ օրենսդիրը նորմատիվ պատվիրանով սահմանել է այն պայմանները, որոնց դեպքում ստեղծվում է քննիչ հանձնաժողովը, մասնավորապես՝

1) հարցը պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի.

2) հարցը պետք է մտնի Ազգային ժողովի իրավասության ոլորտի մեջ. խորհրդարանի իրավասության շրջանակը պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի՝ օրենսդրություն և վերահսկողություն.

3) հարցը պետք է վերաբերի փաստերին. օբյեկտիվ իրականությունում պետք է որոշակի իրադարձություններ տեղի ունենան, որպեսզի դրա կապակցությամբ ստեղծվի քննիչ հանձնաժողով:

Աժ կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն քննիչ հանձնաժողով ձևավորելու համար անհրաժեշտ թվով պատգամավորները գրավոր դիմում են ներկայացնում Ազգային ժողովի նախագահին: Դիմումում պարտադիր նշվում է քննիչ հանձնաժողովի՝

1) քննության առարկան և իրավասության ոլորտը,

2) նախագահի անունը, ազգանունը,

3) լիազորությունների ժամկետը,

4) դիմումին կցվում է քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը, իսկ տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Արդյունքում, քննիչ հանձնաժողովներն արտացոլում են խորհրդարանում ուժերի բաշխման համամասնությունը:

Ազգային ժողովի կանոնակարգը պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչ է տեղի ունենում այն դեպքում, երբ Ազգային ժողովը որոշում չի ընդունում քննիչ հանձնաժողովի անդամների թվի հետ կապված: Այդուհանդերձ, սահմանադրական կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ անթույլատրելի է քննիչ հանձնաժողովի ձևավորումից հետո նրա գործունեության կազմակերպման առնչվող հարցերով խոչընդոտներ ստեղծելը:

Այսինքն՝ այն հանգամանքը, որ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը, հիմք չի տալիս մեծամասնությանը խաթարել հանձնաժողովի ձևավորումը: Նման կերպ քննիչ հանձնաժողովի ստեղծման կամ գործունեության կասեցման հնարավորությունը խնդրահարույց է և գործնականում կարող է հանգեցնել պառլամենտական վերահսկողության համար նման կարևոր գործիքի չեզոքացմանը⁴⁹: Նման խնդիր առաջացել էր ՀՀ Ազգային ժողովի 7-րդ գումարման ժամանակ, երբ ընդդիմության նախաձեռնությամբ ձևավորվում էր COVID-19 համավարակի դեմ պայքարում գործադիրի աշխատանքների վերահսկողության քննիչ հանձնաժողով:

Աժ կանոնակարգի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է մեկ անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ և Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամսով:

Քննիչ հանձնաժողովները իրենց գործունեության ընթացքում մշակում են զեկույցներ, որոնք ներկայացվում են Աժ նախագահին հերթական նիստում քննարկելու համար: Զեկույցում ներկայացվում են այն փաստերը, որոնք իրենց իրավական նշանակությամբ և ներգործությամբ հիմնավորում են բացահայտ-

⁴⁹ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ, Հ.ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հ.ՕԴԱԲԱՇՅԱՆ, խմբագիր՝ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմ ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում*, Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020, էջ 60, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c6615a%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%B0%D5%BD%D5%AF%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_Final.pdf

ված խնդիրները: Ջեկույցի քննարկումն ավարտվելուց հետո, զեկույցը, հատուկ կարծիք լինելու դեպքում նաև դա, ուղարկվում են զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում: Պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում⁵⁰: Ջեկույցի իրավական նշանակությունը և ներգործությունը կայանում է նրանում, որ Ազգային ժողովը, հաստատելով քննիչ հանձնաժողովի կողմից պարզաբանված փաստերը, իր հեղինակությամբ բարձրաձայնում է դրանցում տեղ գտած խնդիրները:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանում մի քանի անգամ ձևավորվել են քննիչ հանձնաժողովներ: 2016 թվականի ապրիլի 4-օրյա պատերազմի վերաբերյալ ձևավորվել է քննիչ հանձնաժողով⁵¹: 2020 թվականի 44-օրյա պատերազմի վերաբերյալ կրկին ստեղծվել է քննիչ հանձնաժողով⁵²: ՀՀ խորհրդարանում ձևավորվել է կորոնավիրուսի հետևանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով⁵³: Սույն հանձնաժողովների գործունեության արդյունքում ձևավորված զեկույցների մասին տեղեկատվությունը համացանցում բացակայում է, ուստի այդ հանձ-

⁵⁰ ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մաս:

⁵¹ <https://armenpress.am/arm/news/976899/>

⁵² <https://www.civilnet.am/news/649554/%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-44-%D6%85%D6%80%D5%B5%D5%A1-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%AB%D5%B9-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE/>

⁵³ <https://www.azatutyun.am/a/31046850.html>

նաժողովների գործունեության արդյունավետության մասին պատկերացում հնարավոր չէ կազմել:

ՀՀ Սահմանադրության 112-րդ հոդվածը վերաբերում է մեկ այլ **վերահսկողական գործիքին՝ պատգամավորների գրավոր և բանավոր հարցերին**: Սույն գործիքի կիրառմամբ Խորհրդարանի կողմից Կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման է համապատասխան տեղեկատվությանը տիրապետելը: Այդ նպատակով ստեղծված մի շարք գործիքներից մեկը Կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցերով դիմելու պատգամավորների իրավունքն է: Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվելու և հարցերին պատասխանելու պարտականությունը վերաբերում է Կառավարության բոլոր անդամներին, այդ թվում՝ վարչապետին, ինչը համահունչ է Խորհրդարանական կառավարման ձևի էությանը:

Աժ կանոնակարգի 120-րդ հոդվածի 2-րդ մասը որոշակի պահանջներ է ներկայացնում Աժ պատգամավորի բանավոր հարցերին, մասնավորապես՝ պատգամավորների կողմից տրված հարցերից յուրաքանչյուրը պետք է վերաբերի կառավարության մեկ անդամի իրավասությանը վերապահված ոլորտին: Այլ կերպ ասած՝ սա նշանակում է, որ, օրինակ, պատգամավորի կողմից տրված հարցը, չի կարող վերաբերել և՛ առողջապահության, և՛ արդարադատության ոլորտներին միաժամանակ, այն պետք է լինի կոնկրետ և վերաբերի միայն կառավարության մեկ անդամի իրավասությանը վերապահված ոլորտին: Բանավոր հարցերի հիմնական փիլիսոփայությունը այն է, որ տվյալ

հարցերը հնչվում են առաջին անգամ խորհրդարանում և կառավարության անդամները ժամանակ չեն ունենում պատրաստվել այդ հարցերին: Օրինակ՝ Գերմանիայում բանավոր հարցերը ներկայացվում են նախօրոք⁵⁴:

Աժ կանոնակարգի 119-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցն ստանալուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում, վարչապետը կամ նրա համաձայնությամբ Կառավարության համապատասխան անդամը գրավոր պատասխանում է հարցին: Գրավոր հարցերի պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հարցապնդումները՝ որպես խորհրդարանական վերահսկողության գործիք, արձանագրվել են 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Հարցապնդումներ իրականացնելու իրավունքը Սահմանադրության 113-րդ հոդվածը պատվիրակել է միայն Աժ խմբակցություններին: Հարցապնդումների մասով սույն սահմանափակումը միակը չէ, այլ Աժ կանոնակարգով սահմանվել է, որ հերթական նստաշրջանի ընթացքում խմբակցությունը կարող է իրացնել մեկ անգամ, մինչդեռ Սահմանադրությամբ հարցապնդումներ իրականացնելու քանակի մասին կարգավորումները բացակայում են:

Հարցապնդումների ինստիտուտը լայնորեն կիրառում ունի խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում և հանդիսանում է խորհրդարանական մշակույթի զարգացման նախադրյալներից մեկը: Մասնավորապես, հարցապնդումների միջոցով խորհրդարանականները ոչ միայն բարձրաձայնում են խնդիրների մասին, այլև ստանալով գործադիր իշխա-

⁵⁴ <https://www.btg-bestellservice.de/pdf/80060000.pdf?fbclid=IwAR18i>

նության գրավոր պատասխանը՝ իրավունք են ստանում կազմակերպել խորհրդարանում քննարկումներ բարձրացված խնդրի և պատասխանի լույսի ներքո: Սույն քննարկումները մի կողմից ապահովում են խորհրդարանի վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ, իսկ մյուս կողմից սույն քննարկումները նպաստում են խորհրդարանի անդամների և գործադիր իշխանության համագործակցությանը և փոխադարձ վստահությանը:

Հարցապնդումների ընթացքում ծագած քննարկումների արդյունքում ծագում են երկու տեսակ իրավական հետևանքներ.

- 1) վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ.
- 2) կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետին ներկայացնելու առաջարկ:

Խմբակցությունը Կառավարությանը **գրավոր հարցապնդմամբ** դիմելու իրավունքն իրականացնում է իր որոշմամբ⁵⁵: Խմբակցության կողմից կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու ընթացակարգի մանրամասների սահմանումը ԱԺ կանոնակարգը վերապահում է խմբակցության կանոնադրությանը: ԱԺ աշխատակարգի համաձայն՝ խմբակցության գրավոր հարցապնդմանը կցվում է խմբակցության որոշումը, ինչպես նաև կարող են ներկայացվել դրան առնչվող տեղեկանքներ, եզրակացություններ, տեղեկատվական ու վերլուծական այլ նյութեր: Հարցապնդումը հանձնվում է Ազգային ժողովի աշխատակազմ, որը 24 ժամվա ընթացքում այն ուղարկում է Կառավարություն:

ԱԺ կանոնակարգը նախատեսում է, որ հարցապնդումը

⁵⁵ ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 3-րդ մաս

ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում վարչապետի հանձնարարությամբ Կառավարության համապատասխան անդամը հարցապնդման գրավոր պատասխանն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

Վարչապետին անվստահություն հայտնելուն կանդիդատանանք ստորև, իսկ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը Հայաստանի Հանրապետությունում երկու անգամ բարձրացրել է «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը: Առաջին անգամ կուսակցությունը հարցապնդմամբ հանդես է եկել ՀՀ ֆինանսների նախարարի մասով 2019 թվականին⁵⁶: Երկրորդ անգամ կուսակցությունը 2021 թվականին հարցապնդման միջոցով բարձրացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հետագա պաշտոնավարման հարցը⁵⁷:

Իրավունքի տեսությունում խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում առաջնային տեղը զբաղեցնում է խորհրդարանը, իսկ վարչապետին անվստահություն հայտնելու միջոցով դրսևորվում է օրենսդիր իշխանության բարձր դերը գործադիր իշխանության նկատմամբ, ինչը խորհրդարանական վերահսկողության տեսակներից մեկն է:

Իրավունքի տեսությունում վարչապետի անվստահության ինստիտուտը դրսևորվում է երկու ձևով՝ սովորական և կոնստրուկտիվ: Սովորական անվստահության քվեի դեպքում խորհրդարանը, կողմ քվեարկելով կառավարությանը անվստահություն հայտնելու նախագծին, դադարեցնում է վերջինիս լիազորությո-

⁵⁶ <https://politik.am/am/lusavor-hayastany-pahanjum-e-finansneri-nakharar-hrazharakany>

⁵⁷ https://arminfo.info/full_news.php?id=54544&lang=1

յունները, որից հետո միայն սկսում է նոր կառավարության կազմավորման գործընթաց:

Կոնստրուկտիվ անվստահության քվեի դեպքում վերոհիշյալ մեխանիզմին ավելացվում է մեկ այլ կարևոր նախապայման, որը դժվարացնում է անվստահություն հայտնելու գործընթացը. կառավարությանը անվստահություն հայտնելու նախաձեռնություն սկսած խորհրդարանի անդամները պետք է միաժամանակ առաջադրեն վարչապետի նոր թեկնածու, որը կվայելի խորհրդարանի մեծամասնության աջակցությունը: Նման կարգավորումը ստիպում է խորհրդարանին լինել կառուցողական և վարչապետի անվստահության հարց բարձրացնել միայն այն դեպքում, երբ առկա է նոր թեկնածուի շուրջ որոշակի փոխհամաձայնություն: Դրանով ապահովվում է կառավարության բնականոն աշխատանքը, և երկրի կառավարումը զերծ է մնում կաթվածահար լինելու վտանգից⁵⁸:

Կոնստրուկտիվ կարգավորումը Սահմանադրությամբ ամրագրվել է 2015 թվականին: Սահմանադրության 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ երրորդը կարող է ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ, միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ

⁵⁸ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ, Հ.ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հ.ՕԴԱԲԱՇՅԱՆ, Խմբագիր՝ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմ ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում*, Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020, էջ 18, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c6615a%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%B0%D5%BD%D5%AF%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_Final.pdf

առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու: Սահմանադրության 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշումն ընդունվելու դեպքում վարչապետը ներկայացնում է հրաժարական: Սահմանադրությունը վարչապետի հրաժարականի հետ է կապում նաև ողջ կառավարության հրաժարականը և սահմանում է, որ վարչապետի հրաժարականը հանգեցնում է ամբողջ կառավարության հրաժարականին:

Բյուջեի ընդունումն ու դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիրի կողմից գործադիրի նկատմամբ վերահսկողության առանցքային ուղղություններից մեկն է: Խորհրդարանական կառավարման ձևի երկրներում խորհրդարանը ավելի մեծ ազդեցություն ունի պետական բյուջեի ընդունման և վերահսկողության նկատմամբ, քան նախագահական կառավարման ձև ունեցող երկրներում: Սակայն, խորհրդարանների ազդեցության աստիճանը գործնականում կախված է ոչ միայն օրենսդրությամբ խորհրդարաններին վերապահված լիազորությունների ծավալից, այլ՝ առավելապես ինստիտուցիոնալ և քաղաքական գործոններից:

Օրենսդիր իշխանության ազդեցության ծավալը ինստիտուցիոնալ առումով սահմանափակված է, քանի որ գործադիր իշխանությունը այս հարցում ունի առաջնայնություն և կրում է ա-

ռաջնային պատասխանատվություն պետական բյուջեի դեֆիցիտը վերահսկելի դարձնելու համար:

Խորհրդարանի՝ պետական բյուջեի գործընթացի վրա ազդելու կարողությունը մեծապես կախված է նաև քաղաքական գործոնից: Այն դեպքերում, երբ խորհրդարանական մեծամասնությունը և կառավարությունը ներկայացնում են նույն քաղաքական ուժը, օրենսդիրը, որպես կանոն, հաշվի է առնում պետական բյուջեի վերաբերյալ գործադիր իշխանության տեսակետը՝ ապահովելով վերջինիս հետագա գործունեությունը⁵⁹:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ընդունվում է քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Պետական բյուջեի ընդունման և չընդունման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրության 110-րդ հոդվածով:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը՝ ի տարբերություն այլ նախագծերի, քննարկվում է հատուկ կարգով, որն սահմանված է ԱԺ կանոնակարգի 20-րդ գլխով: ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սահմանված ելույթների ավարտից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակման փուլը, որից հետո նիստը նախագահողը հայտարարում է ընդմիջում՝ առնվազն 4 օրով: Ընդմիջման ընթացքում պատգամավորները և խմբակցությունները

⁵⁹ R. STAPENHURST, R. PELIZZO, D.M. OLSON, L. VON TRAPP, *Legislative and Budgeting Oversight A World Perspective*, The World Bank, 2008 էջ 3 (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://documents.worldbank.org/curated/en/545851468313500246/pdf/456270PUB0Box3101OFFICIAL0USE0ONLY1.pdf>), էջ 267:

իրավունք ունեն ներկայացնել իրենց գրավոր առաջարկությունները: Նախագծի քննարկման վերսկսումից հետո վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը ներկայացնում է նախագծի վերջնական տարբերակը և ամփոփաթերթիկում ներառված առաջարկները, որից հետո նրան կարող են տրվել հարցեր: Հարցերից հետո կարող են տեղի ունենալ համապատասխան ելույթներ:

Ազգային ժողովում քննարկումների և ելույթների ավարտից հետո 30-րոպեանոց եզրափակիչ ելույթով է հանդես գալիս կառավարության ներկայացուցիչը, ով վերջում առաջարկում է ընդունել պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի չընդունման դեպքում Կառավարությունը պետք է Ազգային ժողով ներկայացնի պետական բյուջեի նոր նախագիծ՝ քվեարկությունից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Նոր նախագիծը քննարկվում և քվեարկվում է Կանոնակարգով սահմանված կարգով՝ մեկ ամսվա ընթացքում: Մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Պետական բյուջեի մասին օրենքում լրացում կամ փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է հատուկ ընթացակարգով⁶⁰: Հարցի քննարկումը հատուկ ընթացակարգով իրականացնելու համար ներկայացվում է Ազգային ժողովի որոշման նախագիծ, որով սակայն չի կարող սահմանափակվել զեկուցողների, նրանց հարց տվողներ-

⁶⁰ ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մաս

րի և ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց տալու համար ԱԺ կանոնակարգով ուղղակիորեն սահմանված ժամանակը:

ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածը կարգավորում է պետական բյուջեի կատարման վերահսկողության հետ կապված հասարակական հարաբերությունները:

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է 2 փուլով՝

1) պետական բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկանքների քննարկման,

2) տարեկան հաշվետվությունների քննարկման և ընդունման միջոցով:

ԱԺ կանոնակարգի 114-րդ հոդվածը վերաբերում է ընթացիկ վերահսկողությանը, մասնավորապես՝ Կառավարությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով տեղեկանք է ներկայացնում պետական բյուջեի, այդ թվում՝ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ: Իրավասու մշտական հանձնաժողովն իր նիստում քննարկում է պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքը:

Կառավարությունը հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին, որի քննարկման արդյունքներով Ազգային ժողովը ընդունում է որոշում⁶¹: Հաշվետվությունը և դրա վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից ներկայացված պաշտոնական

⁶¹ ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի 2-րդ մաս

եզրակացությունը Ազգային ժողով է ներկայացվում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը⁶²:

Ազգային ժողով պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում նաև Հաշվեքննիչ պալատը՝ Կառավարության կողմից Ազգային ժողով հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում. պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովում քննարկման և որոշման կայացման համար Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը պարտադիր է:

Հաշվեքննիչ պալատը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, որի գործունեության նպատակն է հաշվեքննություն իրականացնել հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Ինչպես վերը նշվեց, Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում միայն Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայության դեպքում:

Բյուջետային գրասենյակի նպատակն է նպաստել Ազգային ժողովի պետական բյուջեի կատարմանը, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործ-

⁶² ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 116-րդ հոդված

ման նկատմամբ վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացմանը⁶³:

Բյուջետային գրասենյակի կազմավորման և գործունեության վերաբերյալ մանրամասները սահմանված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգով: Բյուջետային գրասենյակը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) տեղեկանքներ է տրամադրում պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերի և ելքերի ծրագրային և (կամ) այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ,

2) պատրաստում է պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիրը,

3) աջակցում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ձևակերպմանը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ, ինչպես նաև տեղեկատվություն է տրամադրում պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ընդունված առաջարկների վերաբերյալ՝ ըստ ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի և պետական բյուջեի նախագծի աղյուսակի համարի,

4) տեղեկատվություն է տրամադրում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Բյուջետային գրասենյակն իրականացնում է պետական բյուջեի եկամուտների՝ ըստ հարկերի, տուրքերի, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկա-

⁶³ ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 163-րդ հոդված

մուտների տեսակների, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների առցանց դիտարկում՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածների մանրամասնությունների մակարդակով,

5) տեղեկանքներ է տրամադրում պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաև պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման և պակասուրդի (հավելուրդի) վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածը սահմանում է կարգավորումներ **հրատապ հարցերի շուրջ քննարկումներ կատարելու** վերաբերյալ՝ որպես խորհրդարանական վերահսկողության հերթական գործիք: Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություններ կայացնող հրատապ թեմայով քննարկումներ: Սահմանադրական նորմը նաև ընդգծում է, որ այս քննարկումները պետք է ծավալվեն հասարակական հետաքրքրություններ կայացնող հարցերի շուրջ: Թեմայի հրատապության որոշման հարցը թողնված է նախաձեռնող պատգամավորների հայեցողությանը: Սակայն հրատապ քննարկման թեմա ընտրելիս պատգամավորների ընտրությունը պետք է կանգ առնի իրապես անհետաձգելի հարցերի վրա, քանի որ թեմայի հրատապ լինելը սահմանադրական պահանջ է:

Նախորդ պարագրաֆում անդրադարձել էինք խորհրդարան-

նական լումների միջոցով օրինաստեղծ աշխատանքին հասարակության մասնակցությանը: Ստորև կքննարկենք **խորհրդարանական լումների միջոցով վերահսկողություն** իրականացնելու հարցը:

Ազգային ժողովում լումները ժողովրդավարական և թափանցիկ քաղաքական գործընթացների պահանջ են: Խորհրդարանական լումները հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման, տեղեկությունների հավաքման և տարածման մեխանիզմ են, որոնց խորհրդարանը մասնակից է դարձնում հասարակության լայն շերտերին: Սովորաբար դրանք այն հարցերն են, որոնցով հանրային կարծիքի, տրամադրությունների վերհանումն ու հաշվի առնելը, ինչպես նաև մասնագիտական կարծիքի ստացումը կարող է նպաստել կոնկրետ ոլորտում քաղաքականության մշակմանը և ապահովել դրա հետագա իրագործումը: Խորհրդարանական լումների միջոցով խորհրդարանը անուղղակի ազդեցություն է ունենում գործադիր իշխանության գործունեության նկատմամբ, մասնավորապես գործադիր իշխանության մշակած քաղաքականության մասով լումների միջոցով խորհրդարանը հանրային կարիքների վերհանում է իրականացնում, որի միջոցով ներկայացնում է առաջարկություններ՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

2015 թվականի սահմանադրաիրավական բարեփոխումներից հետո ընդլայնվեց խորհրդարանական լումներ հրավիրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Խորհրդարանական լում հրավիրելու իրավունք ունեն ԱԺ նախագահը, մշտական և ժամանակավոր հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերա-

պահված ոլորտներին վերաբերող հարցերով, խմբակցությունը իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով:

Խորհրդարանական լուսմները՝ որպես վերահսկողության գործիք, ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են կառավարության վրա, որպեսզի վերջինս իր քաղաքականությունը մշակելիս հաշվի նստի Խորհրդարանական լուսմների Ժամանակ արտահայտված առաջարկությունների հետ կամ կառավարության կողմից մշակված օրինագծում կատարվեն համապատասխան փոփոխությունները և/կամ լրացումները, որոնք արձանագրվել են Խորհրդարանական լուսմների արդյունքում:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք պնդել, որ **Խորհրդարանական մշակույթն իր առանձնահատկություններով առավել ցայտուն կերպով դրսևորվում է Խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում, որտեղ Խորհրդարանը ունի լայն լիազորություններ գործադիր իշխանության նկատմամբ:** Հայաստանի Հանրապետությունում դասական իմաստով Խորհրդարանը գործնականում չունի լայն լիազորություններ, առավել շատ լիազորություններ ունի վարչապետը: Այդ հանգամանքից ելնելով էլ քաղաքական ելույթներում լայնորեն տարածվել էր այն միտումը, որ ՀՀ սահմանադրական-քաղաքական համակարգը «սուպերվարչապետական» է. այդպիսին է ոչ միայն սահմանադրական և օրենսդրական կարգավորումների ուժով, այլև հենց քաղաքական մշակույթի ուժով, իսկ Խորհրդարանական մշակույթը դեռևս չի կարողացել հասունանալ այնքան, որ քաղաքական մշակույթը փոխի և թելադրողի դերում ներկայացնի հենց Խորհրդարանին:

Այդուհանդերձ, առկա սահմանադրական կարգավորումնե-

րի շրջանակում կարող ենք փաստել, որ գործադիր իշխանության վերահսկողության նկատմամբ խորհրդարանական մշակույթի հիմնական բնութագրիչները հնարավոր և անհրաժեշտ է, որ սահմանվեն:

Դրանք են՝

- **Փոխադարձ հարգանքը և կառուցողական երկխոսությունը.**

Խորհրդարանը և գործադիր իշխանությունը պարտավոր են հարգել միմյանց և վարել կառուցողական երկխոսություն.

- **Թափանցիկությունը և հաշվետվողականությունը.**

Գործադիր իշխանությունը պարտավոր է լինել հաշվետու խորհրդարանին և վարել թափանցիկ գործունեություն.

- **Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի արդյունավետ օգտագործում.**

Խորհրդարանին պետք է հասանելի լինի գործադիր իշխանության գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության գործիքակազմը.

- **Համագործակցությունը և գործընկերությունը.**

Խորհրդարանը և գործադիր իշխանությունը պետք է համագործակցեն և աշխատեն միասին ի շահ հասարակության բարօրության:

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթը գտնվում է կայացման փուլում, ինչին խոչընդոտում են որոշակի խնդիրներ.

1) Թույլ ընդդիմությունը. ընդդիմությունը/ընդդիմությունները չունեն թե՛ օրենսդրական, թե՛ քաղաքական ազդեցության բավականաչափ գործիքակազմ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար.

2) Գործադիր իշխանությունը հիմնականում համագործակցում է իշխող կուսակցությունը ներկայացնող պատգամավորների հետ՝ անտեսելով ընդդիմադիրներին՝ նրանց էական գործիքակազմ չունենալու պատճառով:

3) Խորհրդարանական ընդդիմության և իշխանության ոչ համագործակցային և հաճախ թշնամական միջավայրը, հատկապես՝ ներքին հարցերում և հազվադեպ՝ արտաքին քաղաքականության հարցերում,

4) Գործադիր իշխանության ղեկավարի՝ խորհրդարանական իշխող կուսակցության ղեկավար լինելու հանգամանքը, որով վերահսկողության տակ է պահում և՛ գործադիր, և՛ օրենսդիր իշխանությունը, իսկ վերջինս խորհրդարանական վերահրսկողական գործառույթներն իրականացնում է միայն ձևական-արարողակարգային տրամաբանության ներքո:

5) Հաշվետվողականության ցածր մակարդակը: Բյուջեի կատարողական հաշվետվությունները, որպես կանոն, ներկայացնում են հանրապետական գործադիր մարմնի ղեկավար չհանդիսացող անձինք: Ընդդիմությունը գործնական գործիք չունի չհաստատելու կամ այլ հետևանքներ առաջացնելու:

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Ազգային ժողովը, բացի ներկայացուցչական, օրենսդրական և գործադիրի նկատմամբ վերահսկողական գործառնություններից, ունի նաև դիվանագիտական գործառնություն, ինչը դրսևորվում է մի քանի ձևաչափերով:

Ազգային ժողովը կարող է անգամ կնքել միջխորհրդարանական համաձայնագրեր: Այսպես, Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 158-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է այլ երկրի օրենսդիր կամ բարձրագույն ներկայացուցչական մարմնի հետ կնքել միջխորհրդարանական համաձայնագիր, որով կարգավորվում են բարեկամության և համագործակցության, փորձի փոխանակման, փոխօգնության, բարեկամական խմբեր կազմելու, պատվիրակությունների փոխանակության և այլ հարաբերություններ:

Նման համաձայնագիր ստորագրելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, խմբակցությունները, պատգամավորական և բարեկամական խմբերը, մշտական հանձնաժողովները: Այն ստորագրում է Ազգային ժողովի Նախագահը՝ Ազգային ժողովի Խորհրդի համաձայնությամբ:

Ընդհանրապես, խորհրդարանական դիվանագիտությունը սկսել է զարգացում ապրել 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում, թեև քաղաքական լեզվամտածողության մեջ եղել է

դեռևս 20-րդ դարի կեսերից⁶⁴: Այն սովորաբար բնորոշվում է որպես «խորհրդարանների և խորհրդարանականների կողմից իրականացվող միջազգային հարաբերությունների ողջ շրջանակ՝ ուղղված պետությունների միջև փոխադարձ հասկացվածության բարձրացմանը, կառավարությունների հաշվեպոկոկանության ուժեղացմանը և միջազգային կազմակերպությունների ժողովրդավարական լեգիտիմության ընդլայնմանը»⁶⁵: Թեև արտաքին քաղաքականության ոլորտում խորհրդարանի ազդեցությունը դարերի ավանդույթ ունի⁶⁶, «խորհրդարանական դիվանագիտությունը» հայեցակարգ է, որը միայն վերջին երեք տասնամյակներում սկսեց իր ուղին հարթել միջազգային կազմակերպությունների արժեքանության և ինստիտուցիոնալ համակարգում⁶⁷:

Խորհրդարանական դիվանագիտությունը երբեմն դասակարգում են չորս շերտերի՝ ներպետական, միջպետական, ներտարածաշրջանային և միջտարածաշրջանային մակարդակներում: Խորհրդարաններն ամենաարդյունավետն են գլոբալ խնդիրների լուծման համար տարբեր դերակատարների և շահագրգիռ կողմերի մոբիլիզացման հարցում՝ սկսած զանգվածա-

⁶⁴ Մանրամասն տե՛ս Cf. G. NOULAS, *The Role of Parliamentary Diplomacy in Foreign Policy*, “Foreign PolicyJournal”, 22.10.2011:

⁶⁵ S. STAVRIDIS, D. JANČIĆ, *The Rise of Parliamentary Diplomacy in International Politics*, “The Hague Journal of Diplomacy” 2016, vol. 11(2–3), էջ 113–114:

⁶⁶ J. BLACK, *Parliament and Foreign Policy 1739–1763*, “Parliaments, Estates and Representation” 1992, vol. 12(2), էջ 121:

⁶⁷ S. STAVRIDIS, D. JANČIĆ, *նույն տեղում*, էջ 107, հղումն ըստ՝ JERZY JASKIERNIA, *Parliamentary Diplomacy – A New Dimension of Contemporary Parliamentarism*, *Studia Iuridica Lublinensia* vol. 31, 5, 2022, էջ 87:

յին քարոզարշավի մասնակիցներից մինչև քաղաքական առաջնորդներ⁶⁸: Խորհրդարանների միջազգային դերերից կարելի է թվել հետևյալները՝

1. նպաստել միջկառավարական բանակցություններին և ինստիտուտների կառուցման գործընթացներին,

2. իրականացնել խորհրդարանական վերահսկողություն միջազգային բանակցային գործընթացների վրա,

3. վավերացնել և կիրառել միջազգային համաձայնագրերը,

4. խթանել բազմատեսակ շահառուների երկխոսությունը միջազգային խնդիրների և դրանց արձագանքների վերաբերյալ, և

5. քաղաքացիների շրջանում տեղեկատվություն տարածել միջազգային խնդիրների և կազմակերպությունների վերաբերյալ⁶⁹:

Սույն աշխատանքի արդյունավետության համար եթե փորձենք առանձնացնել խորհրդարանական դիվանագիտության հարթակները կամ ձևաչափերը, ապա կարող ենք պայմանականորեն դրանք դասակարգել հետևյալ կերպ՝

1. **միջանձնային**, երբ պատգամավորները հարաբերություններ են հաստատում այլ պետությունների խորհրդարանների պատգամավորների հետ և միջանձնային հարաբերությունների

⁶⁸ D.FIOTT, *On the Value of Parliamentary Diplomacy*, Madariaga Paper, 2011, 4(7):

⁶⁹ CHHEANG VANNARITH, “*Enhancing Parliamentary Diplomacy for Sustainable Development*”, in Prakash, A. (eds.), 13th Asia-Europe Meeting (ASEM) Summit: Multilateral Cooperation for a Resilient, Sustainable and Rules-Based Future for ASEM, Jakarta: ERIA, Phnom Penh: ASEM13 and The Royal Government of Cambodia, էջեր 185-197. էջ 187:

զարգացման միջոցով նպաստում միջխորհրդարանական, երբեմն էլ՝ միջպետական հարաբերությունների զարգացմանը և ընթացիկ խնդիրների լուծմանը: Այստեղ շատ կարևոր են պատգամավորի անձնական հատկանիշները, հեղինակությունը, հարաբերություններ հաստատելու և զարգացնելու ունակությունները, առկա և արդյունավետորեն օգտագործվող կապերը և այլն.

2. **միջհանձնաժողովային**, երբ խորհրդարանի մասնագիտական հանձնաժողովները համագործակցում են այլ պետությունների խորհրդարանների համապատասխան գործառույթներ իրականացնող հանձնաժողովների հետ (օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովի Պետաիրավական հանձնաժողովը համագործակցում է ՌԴ Պետական դումայի պետականաշինության և օրենսդրության հարցերի կոմիտեի հետ): Գործնականում շատ են դեպքերը, երբ տարբեր երկրների խորհրդարանների հանձնաժողովները համագործակցային կապեր են հաստատել ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովների հետ, փոխադարձ այցեր կազմակերպել, կատարել փորձի փոխանակում և այլն.

3. **միջխմբակցային**, երբ խորհրդարանի ձևավորված խմբակցությունները (կուսակցությունների, դաշինքների կամ այլ միավորների շուրջ ձևավորված խմբակցություններ) համագործակցում են այլ պետությունների խորհրդարանների հիմնականում իրենց քաղաքական ուղղության խմբակցությունների հետ (աջեր, ձախեր, ցենտրիստներ, լիբերալներ, պահպանողականներ և այլն): Օրինակ. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը միջկուսակցական համագործակցային կապեր է հաստատել Միացյալ Ռուսաստան կուսակցության, Եվրոպայի Ժողովրդական կուսակցության հետ, որոնք դրսևորվել են նաև այդ

կուսակցությունների ԱԺ խմբակցությունների համագործակցության բնագավառում, Եվրոպայի ժողովրդական կուսակցության հետ համագործակցության կապեր է հաստատել նաև Ժառանգություն կուսակցությունը, նույնն արել են Լուսավոր Հայաստան կուսակցությունն ու Հայ ազգային կոնգրես կուսակցությունը Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինքի հետ (ALDE) և այլն.

4. **Բարեկամական խմբեր**, երբ խորհրդարանում տարբեր խմբակցությունների և/կամ անկախ պատգամավորներից ձևավորվում են պատգամավորների խմբեր, որոնք համագործակցում են այլ պետությունների խորհրդարաններում ձևավորված բարեկամական խմբերի հետ (օրինակ՝ Հայ-Ֆրանսիական պատգամավորական բարեկամական խումբը, որն ունի ՀՀ Ազգային ժողովից և Ֆրանսիայի Ազգային ժողովից անդամ պատգամավորներ ու երկու համանախագահներ՝ համապատասխանաբար երկու խորհրդարաններից): Բարեկամական խմբերը զբաղվում են իրենց ազգային խորհրդարաններում բարեկամ մյուս երկրի շահերի ու հետաքրքրությունների ներկայացմամբ, համագործակցության ուղղությունների մշակմամբ, զարգացմամբ և յուրօրինակ կամուրջ են դառնում երկու պետությունների ժողովրդական-ներկայացուցչական մարմինների միջև.

5. **միջխորհրդարանական**, երբ խորհրդարանը պաշտոնապես՝ ի դեմս Ազգային ժողովի նախագահի կամ նրա բացակայության դեպքում՝ տեղակալների, հարաբերություններ է հաստատում մեկ այլ պետության խորհրդարանի հետ: Այդպիսի դեպքերը ևս շատ են, իսկ ԱԺ կանոնակարգ օրենքի վերոնշյալ հոդվածը մեծամասամբ կարգավորում է հենց նման հարաբերությունները.

6. **բազմակողմ խորհրդարանական**, երբ պետությունը անդամակցում է միջազգային կազմակերպությանը, իսկ իր խորհրդարանը դառնում է այդ միջազգային կազմակերպության ներքո գործող խորհրդարանական վեհաժողովի անդամ: Օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովը անդամակցում է ԱՊՀ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովին, Ուղղափառության խորհրդարանական վեհաժողովին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին, Եվրոպական Միության Արևելյան գործընկերության խորհրդարանական վեհաժողովին, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովին և այլն:

Հաճախ այն հարցերը, որոնք ցանկալի կամ հնարավոր չէ, որ Հանրապետության Նախագահը և/կամ Վարչապետը, Արտաքին գործերի նախարարությունը հնչեցնեն, այլ կերպ բարձրաձայնեն կամ զբաղվեն դրանց անմիջական լուծմամբ, իրականացվում են հենց պատգամավորների միջոցով:

Այդպիսի լուծվում են մի քանի հարցեր:

Նախ՝ բարձրացված հարցը չի դիտարկվում որպես պետության պաշտոնական դիրքորոշում, որովհետև պետության Արտաքին գործերի նախարարության, Վարչապետի և/կամ Նախագահի գործողությունները, արտահայտած կարծիքներն ու դիրքորոշումները (միակողմանի ակտեր) միջազգային իրավունքի շրջանակներում կարող են և հաճախ վերագրվում են պետությանը՝ որպես պաշտոնական դիրքորոշում⁷⁰: Դրանք նույնիսկ կարող են համարվել սովորության միջազգային իրավուն-

⁷⁰ Տե՛ս, օրինակ, Fifth report on unilateral acts of states, by Mr. Víctor Rodríguez Cedeño, Special Rapporteur, DOCUMENT A/CN.4/525 and.1 and 2(Incorporating A/CN.4/525/Add.1/Corr.1 and 2.), UN, 2002, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://legal.un.org/ilc/documentation/english/_a_cn4_525.pdf, EVA KASSOTI, Interpretation of Unilateral Acts in International Law, [Netherlands International Law Review](#), 18 August 2022, Volume 69, էջեր 295–326:

քի առաջացման կարևոր բաղադրիչ՝ *opinio juris sive necessitatis*⁷¹: Իսկ պատգամավորի, պատգամավորական խմբերի, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների կարծիքն ու գործողությունը չեն համարվում պետության պաշտոնական դիրքորոշում:

Այնուհետև հարցը բարձրացվում է քաղաքական էլիտաների՝ փաստացի որոշում ընդունողների մակարդակում և հայցվում է բարձրացված հարցին առնվազն արձագանք, այլ կերպ ասած՝ քաղաքական հաղորդագրությունը տեղ է հասնում:

Իսկ ինչ վերաբերում է, օրինակ, խորհրդարանական վեհաժողովների աշխատանքներին, ապա դրանց արժեքն այնքան բարձր է, որ վեհաժողովներում ընդունված համատեղ հայտարարությունները, բանաձևերը, որոշումները, ճիշտ է՝ պարտադիր բնույթ չեն կրում, սակայն դառնում են միջազգային իրավունքի մեկ այլ կարևոր դրսևորում՝ փափուկ իրավունք (*soft law*), որի քանակական ու որակական աճը կարող է նաև արտահայտվել իրավունքում ու կաշկանդել պետությանը միջազգային հարաբերություններում՝ որպես գործող միջազգային իրավունք⁷²:

⁷¹ Մանրամասն տե՛ս BRIAN D. LEPARD, *Customary International Law: A New Theory with Practice Applications*, Chapter 12: General Sources of Evidence of *Opinio Juris*, Cambridge University Press, 2012, J.TASIOULAS, "*Comment: Opinio Juris and the Genesis of Custom: A Solution to the 'Paradox'*", *Australian Year Book of International Law* 199, (2007) 26, J.TASIOULAS, "*Customary International Law and the Quest for Global Justice*" in A PERREAU-SAUSSINE and J B MURPHY (eds), *The Nature of Customary Law: Philosophical, Historical and Legal Perspectives* (2007) 320:

⁷² Մանրամասն տե՛ս ANDREW T. GUZMAN and TIMOTHY L. MEYER, "*International Soft Law*", *Journal of Legal Analysis*, Spring, 2010: Volume 2, Number 1, էջեր 171-225, M.BRUS, "*Soft Law in Public International Law: A Pragmatic or a Principled Choice? Comparing the Sustainable Development*

Միջազգային հարաբերությունների մասնակցության մասով, իհարկե, պետք է տարանջատում մտցնել խորհրդարանական դիվանագիտության և արտաքին քաղաքականության դասական միջոցների միջև, ինչպես նաև հասկանալ այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են այդ գործունեությամբ առկա ազդեցությունը խորհրդարանական մշակույթի վրա:

Այսպես, օրինակ, 20-րդ դարի միջազգային իրավունքի ակնավոր ներկայացուցիչ Ֆ. Ջեսսափը առանձնացնում էր խորհրդարանական դիվանագիտության և բազմակողմանի բանակցությունների այլ ձևերի միջև առկա տարբերության հետևյալ տարրերը՝

1. այն մշտական կազմակերպություն է, որի պատասխանատվությունն ու իրավասությունը դուրս է գալիս մեկ նստաշրջանի օրակարգից.

2. դրանք հանրային են և ներկայացվում են զանգվածային լրատվության միջոցներով.

3. դրանք կիրարկվում են ձևական գործընթացների հիման վրա, համաձայն որոնց՝ մեկ տեսակետը կարող է ընդունվել, իսկ մյուսը՝ մերժվել.

4. քննարկումը փակվում է մեծամասնության կողմից ըն-

Goals and the Paris Agreement”, Book chapter under review, based on a paper presented at a conference ‘Validity and Public Trust’, 17 and 18 December 2015, University of Groningen, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2945942, M.COLDMANN, “We Need to Cut off the Head of the King: Past, Present and Future Approaches to International Soft Law”, *Leiden Journal of International Law* (2012), 25, էջեր 335–368:

դունված բանաձևով⁷³:

Կան նաև խորհրդարանական և դասական դիվանագիտությունների տարանջատման այլ չափորոշիչներ: Օրինակ՝

1. խորհրդարանական դիվանագիտությունը իրականացվում է խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի լայն շրջանակի կողմից, իսկ դասական դիվանագիտությունը՝ իշխող մեծամասնության կողմից և արտացոլում է նրա քաղաքականությունը:

2. խորհրդարանական դիվանագիտությունը հիմնված է համոզելու, հատկապես՝ բարոյական ուժի վրա, ուստի այն չի հանգեցնում պարտադիր որոշումների. ազգային, էթնիկ կամ կրոնական հակամարտությունների դեպքում, սակայն, նման ոչ պարտադիր ազդեցությունը կարող է երկարաժամկետ հեռանկարում բերել ակնկալվող արդյունքների:

3. խորհրդարանական դիվանագիտությունն իրականացվում է այն անձանց կողմից, ովքեր մասնագիտական պատրաստվածություն չունեն այս բնագավառում, բայց իրենց գիտելիքները քաղում են խորհրդարանական փորձից: Այնուամենայնիվ, խորհրդարանականներն այս առումով սովորաբար օգտվում են խորհրդարանական գրասենյակներում աշխատող արհեստավարժ դիվանագետների օգնությունից:

4. խորհրդարանական դիվանագիտությունն իրականացվում է ժամանակավոր հիմունքներով, ուստի այն չի ներառում մշտական ներկայացուցչություն արտասահմանում: Խորհրդարանականները հաճախ օգտվում են դեսպանատների միջնոր-

⁷³ P.C. JESSUP, Parliamentary Diplomacy: An Examination of the Legal Quality of the Rules of Procedure of Organs of the United Nations, "Recueil des Cours" 1956, vol. 89(1), էջ 178:

դությունից, սակայն սովորաբար գործնական քայլերը ձեռնարկում են միջխորհրդարանական համաժողովների ժամանակ.

5. քանի որ միջխորհրդարանական պատվիրակությունների կազմում (հատկապես նոր ժողովրդավարական երկրներում) մեծ ռոտացիա է նկատվում, խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում ձեռնարկվող գործունեության ոչ շարունակականության երևույթը լայն տարածում ունի⁷⁴:

Խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում Հայաստանի Հանրապետության անկախության տարիների ձևավորած փորձը բավականին լայն է ու բազմաշերտ, ինչն էլ հնարավորություն է տալիս տեսնել որոշ ձևավորված մշակութային տարրեր, որոնք էլ՝ իրենց հերթին դառնում են խորհրդարանական մշակույթի մի մասը: Բերենք այդպիսի մի քանի օրինակներ:

Այսպես, վստահորեն կարելի է ասել, որ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում ձևավորված մշակութային դրսևորումներից է այն, որ արտաքին հարաբերություններում, միջխորհրդարանական հանդիպումներում և/կամ միջխորհրդարանական վեհաժողովներում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները՝ լինեն իշխանության, թե ընդդիմության ներկայացուցիչներ, **(1) հանդես են գալիս ընդհանուր՝ համագործակցային աշխատանքով՝** երբեմն անտեսելով ներպետական հարցերում իրենց ունեցած սկզբունքային անհամաձայնությունները, դիրքորոշումների տարբերությունները, որոնք ակտիվորեն բանավեճի և առճակատման առարկա են դարձնում ներպետական՝ ներխորհրդարանական աշխատանքներում:

⁷⁴ J.J. WIATR, *Parliamentary Diplomacy after Cold War*, “Romanian Journal of International Affairs” 1995, vol. 1(5), էջ 99–100

Իհարկե, խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում սա միանշանակ պրակտիկա չէ, և եղել են դեպքեր, երբ խորհրդարանական վեհաժողովներում (հատկապես՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում) ՀՀ Ազգային ժողովի քաղաքական ընդդիմության ներկայացուցիչները հանդես են եկել կոշտ և բացահայտ քննադատությամբ նույն ՀՀ քաղաքական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ (երբեմն նույնիսկ անձնական մակարդակում), սակայն սա հիմնականում վերաբերել է առանձին դեպքերին և կրել է բացառությունների բնույթ:

Դեպքերի մեծ մասում աշխատանքը եղել է ներդաշնակեցված և համագործակցային: Այդպիսի համագործակցային շատ դեպքեր անկախության երեք տասնամյակների ընթացքում գրանցվել են հատկապես ազգային հարցերի շուրջ: Օրինակ՝ Ադրբեյջանի և/կամ Թուրքիայի կամ դրանց (երբեմն՝ կոռուպցիոն) ջանքերով այլ պետությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվող Արցախի հիմնահարցի և/կամ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ հակահայկական բանաձևերի դեմ տարվող պայքարի գործերում: Եվ քանի որ փորձը ցույց է տվել նման աշխատանքի արդյունավետության բարձր մակարդակ, համագործակցային աշխատանքը, հատկապես ազգային և համապետական հարցերի շուրջ, դարձել է խորհրդարանական դիվանագիտական մշակույթի անքակտելի մասը:

Ձևավորված մեկ այլ (2) **համագործակցային դիրքորոշումների ավանդույթի** համաձայն, որ կրկին խորհրդարանական մշակույթի մաս է, այն սուր հարցերը, որ պետությունը չէր ցանկանա միջխորհրդարանական հարաբերություններում հնչելին

քաղաքական իշխանությունը ներկայացնող պատգամավորների շուրթերից, սակայն կարևոր է, որ դրանք բարձրաձայնվեն, պայմանավորվածության շրջանակներում բարձրաձայնում են ընդդիմության ներկայացուցիչները: Լինում են դեպքեր նաև, երբ խորհրդարանական վեհաժողովներում ակտիվության և բարձր հնչելու նախաձեռնությունը վերցնում են իրենց վրա ընդդիմադիր պատգամավորները, եթե, օրինակ, վեհաժողովում ներգրավված են ավելի շատ այն քաղաքական ուղղության կամ խմբակցության պատգամավորներ այլ երկրներից, որոնք քաղաքական համագործակցության մեջ են գտնվում իրենց հետ: Իսկ իշխանական պատգամավորները փորձում են առավել քիչ ներգրավվածություն ունենալ և խնդիրները լուծել՝ համագործակցելով ընդդիմադիր պատգամավորների հետ:

Բավականին տարածված մշակույթ է նաև այն, որ կրկին որոշ սուր միջազգային քաղաքական հարցերի շուրջ կազմակերպվում են **(3) համագործակցային քվեարկություններ**, համաձայն որոնց ընդդիմության որոշ պատգամավորներ կողմ են քվեարկում այն հարցին, որին դեմ պետք է քվեարկեն իշխանության պատգամավորները և/կամ հակառակը:

Այսկերպ փորձ է արվում մեղմել այն պետությունների քաղաքական վերաբերմունքը, որոնք այլ պայմաններում բացասական կվերաբերեին ամբողջ պատվիրակության միասնական քվեարկության/դիրքորոշման դեպքում: Օրինակ, երբ խորհրդարանական պատվիրակությունը կողմ է ինչ-որ բանաձևի բովանդակությանը, սակայն այդ բանաձևը հակառակվում է դաշնակից կամ բարեկամ պետության շահերին, սովորաբար պատվիրակությունը քվեարկությունը միաձայն չի կազմակերպում, այլ որոշակի համամասնությամբ ձայների բաշխում է տեղի ունե-

նում՝ նպատակ ունենալով ապահովել և՛ համաձայնության արտահայտությունը, և՛ դաշնակից կամ բարեկամ պետության նկատմամբ բարի կամքի դրսևորումը:

Խորհրդարանական դիվանագիտական զարգացող մշակույթ է նաև **(4) հանձնառությունների բաշխման ավանդույթը**, երբ, օրինակ, խորհրդարանական պատվիրակությունների ղեկավարներ նշանակվում են իշխանական քաղաքական ուժի ներկայացուցիչները, սակայն, օրինակ, խորհրդարանական վեհաժողովներում առանձին մարմինների պաշտոններում առաջադրվում են խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչներ:

Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավարը միշտ եղել է քաղաքական իշխանության ներկայացուցիչ, մինչդեռ, օրինակ, ԵԽԽՎ երկու հանձնաժողովների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների ընտրության և Մոնիթորինգի հանձնաժողովների անդամ եղել է ընդդիմության ներկայացուցիչը:

Մեկ այլ՝ Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովում կրկին ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավարը միշտ եղել է քաղաքական իշխանության ներկայացուցիչ, իսկ Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի Տնտեսական ինտեգրացիայի, իրավական մոտարկման և ԵՄ քաղաքականության հետ համաձայնեցման հանձնաժողովի համանախագահ 2019թ.-ին ընտրվել է ընդդիմության ներկայացուցիչ: Ավելին, այդ հանձնաժողովում ընդդիմության ներկայացուցիչն առաջարկել և հեղինակել է բանաձև, որը, որպես Հայաստանի պատվիրակության նախաձեռնության արդյունք, ընդունվել է Եվրանես-

թի խորհրդարանական վեհաժողովի կողմից (*Բանաձև՝ ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում կրթության և տնտեսության միջև սիներգիայի վերաբերյալ*⁷⁵): Նման օրինակների թվին է դասվում նաև այն, որ խորհրդարանական իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների միջև բաշխվում են խորհրդարանական բարեկամական խմբերի հայկական կողմի նախագահների պաշտոնները՝ ըստ քանակական համամասնության:

Խորհրդարանական դիվանագիտությունում դրսևորվող այս և մյուս ավանդույթները հենց այն աղյուսներն են, որ կամաց-կամաց ձևավորում են արտաքին հարաբերություններում խորհրդարանական յուրահատուկ մշակույթը:

Որպես խորհրդարանական մշակույթում բոլորովին նոր ուղղություն, որ երեք տասնամյակի պրակտիկա ունի և հասակակից է Հայաստանի Երրորդ Հանրապետության պետականությանը՝ խորհրդարանական դիվանագիտությունը լայնորեն կիրառվում է նաև ՀՀ Ազգային ժողովի և դրա պատգամավորների կողմից:

Խորհրդարանական դիվանագիտության բացասական մշակույթի դրսևորում, որ անտես աչքով անգամ տեսանելի է խորհրդարանական դիվանագիտության զարգացման բնագավառում և կանխում է այդ բնագավառում խորհրդարանական մշակույթի զարգացումը, խորհրդարանական տարբեր վեհաժողովներում տարածվող կոռուպցիոն լոբբինգի դրսևորումներն են, որոնք բնորոշվում են արդեն միջազգային ասպարեզում լայ-

⁷⁵ Resolution on synergies between education and the economy in the EU and Eastern Partnership countries, Document 22021P0908(02), հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://eur-lex.europa.eu/legal-content/GA/ALL/?uri=CELEX:22021P0908\(02\)](https://eur-lex.europa.eu/legal-content/GA/ALL/?uri=CELEX:22021P0908(02)).

նորեն կիրառվող տերմինով՝ «խավհարային դիվանագիտություն»։ Այս խավհարային դիվանագիտությունը խորհրդարանական վեհաժողովների աշխատանքներում տարածվել է հիմնականում Ադրբեջանի կողմից, երբ վերջինս խորհրդարանական վեհաժողովի տարբեր պատվիրակությունների անդամ պատգամավորներին կաշառելու միջոցով փորձում էր/է անցկացնել ադրբեջանական շահերը սպասարկող բանաձևեր⁷⁶։ Այդպիսի մի քանի դեպքեր բացահայտվել են, իսկ կաշառք վերցրած անձինք ենթարկվել քրեական հետապնդման⁷⁷։

Այսուհանդերձ պետք է նշել, որ դրականը խորհրդարանական դիվանագիտությունում ավելի շատ է, քան բացասականը։ Այս մտահանգմանը աջակցող շատ ավելի փաստեր կան։ Օրինակ, «խորհրդարանական դիվանագիտության զարգացումը նպաստել է արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում խորհրդարանական վերահսկողության ոլորտում առաջացող ժողովրդավարական դեֆիցիտի սահմանափակմանը, ինչը չի կարելի անտեսել քաղաքական համակարգերում իշխանությունների բաժանման ժամանակակից վերլուծություններում։ Այսպիսով, այն դարձել է ժամանակակից դարաշրջանում խորհրդարանի գործառույթների ավանդական տեսակերը փոփոխող գործոն»⁷⁸։

⁷⁶ DW Documentary, *Corruption in Europe, For oil and gas from Azerbaijan*, <https://www.youtube.com/watch?v=WAorRRm4cfU>, Caviar diplomacy in Azerbaijan <https://www.economist.com/1843/2016/08/31/caviar-diplomacy-in-azerbaijan>.

⁷⁷ Caviar Diplomacy: Why every European should care, <https://www.esiweb.org/proposals/caviar-diplomacy>.

⁷⁸ JERZY JASKIERNIA, *Parliamentary Diplomacy – A New Dimension of Contemporary Parliamentarism*, *Studia Iuridica Lublinensia* vol. 31, 5, 2022, էջ 98:

Բացասական երևույթներով հանդերձ՝ խորհրդարանական դիվանագիտության այս կարևոր՝ խորհրդարանական վեհաժողովների հարթակը և խորհրդարանական դիվանագիտությունն՝ ընդհանրապես, շարունակում են մնալ առանցքային նշանակություն ունեցող հնարավորություն նույն խորհրդարանական մշակույթի զարգացման գործում, որովհետև այն ձևավորված ավանդույթներն ու փոխհամագործակցության մթնոլորտը, որ արդեն առկա է վերջին երեք տասնամյակների ընթացքում վեհաժողովների և ընդհանրապես՝ դիվանագիտական հարթակներում, բավականին լուրջ հիմքեր են տալիս հուսալու, որ խորհրդարանական գործունեության նաև այս ուղղության զարգացումը, իր թերություններով հանդերձ, նպաստում է խորհրդարանական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նաև միջազգային հարաբերություններում:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդարանական էթիկայի օրենսդրական կարգավորումը նորություն չէ իրավունքի տեսությունում: Խորհրդարանական էթիկան որոշ երկրներում այնպես է արժևորվել, որ ընդունվել են հատուկ օրենքներ:

Կանադայում, օրինակ, գործում է խորհրդարանական էթիկայի մասին օրենք, որը սահմանում է վարքագծի կանոններ և՛ ներկայացուցիչների պալատի, և՛ սենատի համար: Եվրոպական որոշ երկրներում խորհրդարանական էթիկան կարգավորվում է ոչ թե առանձին օրենքով, այլ էթիկայի մասին դրույթներ պարունակում են պատգամավորի կարգավիճակի մասին օրենքը և այլ օրենքներ: Գերմանիայում էթիկայի հետ կապված հարցերը կարգավորվում են Բունդեսթագի պատգամավորների կարգավիճակի մասին օրենքով, Միացյալ Թագավորությունում՝ պատգամավորների կարգավիճակի մասին օրենսգրքով, Ռուսաստանի Դաշնությունում՝ Պետական դումայի պատգամավորի և Դաշնության խորհրդի անդամի կարգավիճակի մասին օրենքով⁷⁹:

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական էթիկայի մասին առանձին օրենսդրական ակտը բացակայում է: Խորհրդարանական էթիկան առաջին անգամ ամրագրվեց 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքով:

⁷⁹ <https://www.ipu.org/>, <https://www.ifla.org/units/services-for-parliaments/>

Սահմանադրության 107-րդ հոդվածով արձանագրվեց, որ առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ: Աժ կանոնակարգի 4-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորը պարտավոր է պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները:

Էթիկայի կանոնները սահմանված են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք): Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է պատգամավորական էթիկայի կանոնները, որոնք վերաբերում են ինչպես պատգամավորի լիազորությունների իրականացմանը, այնպես էլ նրա ամենօրյա վարքագծին:

Պատգամավորական էթիկայի կանոններն են՝

1) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.

Սույն կանոնը ունի առանցքային նշանակություն խորհրդարանական էթիկայի համար: Այս կանոնի պահպանումը նպաստում է խորհրդարանի անդամների, պետական իշխանության, հասարակության ներկայացուցիչների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Սույն կանոնը հնարավորություն է տալիս համապատասխան երաշխիքներ ստեղծել իրավական անվտանգության համար: Քաղաքացիական հասարակության կայացման համար այս կանոնը հանդիսանում է կարևոր նախապայման, քանի որ այս կանոնը հնարավորություն է տալիս ուսումնասիրել օրենքները, դրսևորել օրինապահ

վարքագիծ:

2) հարգել հանրության բարոյական նորմերը.

Բարոյական նորմերի նկատմամբ հարգանքը ժողովրդավարական երկրներում համարվում է պատգամավորի վարքագծի հիմնական կանոն, քանի որ խորհրդարանը համարվում է ժողովրդաիշխանության ուղղակի դրսևորման արդյունք: Խորհրդարանի անդամները՝ որպես հասարակության ներկայացուցիչներ, ոչ միայն քաղաքական, այլ նաև հանրային պատասխանատվություն են կրում հասարակության առջև, քանի որ խորհրդարանում ներկայացնում են հասարակությունը:

Բարոյական նորմերի հարգանքը խորհրդարանում դրսևորվում է պատգամավորների համար չորս մակարդակում՝

- պատգամավոր-պատգամավոր,
- պատգամավոր-խորհրդարանի աշխատակազմ,
- պատգամավոր-հասարակություն,
- պատգամավոր-պետական իշխանություն:

Ազգային ժողովում հանձնաժողովի և/կամ չորսօրյա նիստերի ընթացքում պարտավոր է պահպանել բարոյական նորմերը պատգամավոր-պատգամավոր հարաբերությունների մակարդակում: Պատգամավոր-խորհրդարանի աշխատակազմ մակարդակում պատգամավորը պարտավոր է հարգալից լինել ԱԺ աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ և պահպանել բարոյական նորմերը: Պատգամավոր-հասարակություն մակարդակում հանրության բարոյական նորմերի պահպանումը պետք է կատարվի ինչպես հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ, այնպես գրավոր հաղորդակցության ընթացքում:

Պատգամավորը իր գործունեության ընթացքում, ինչպես

նաև գործունեությունից դուրս պետք է պահպանի բարոյական նորմերը, քանի որ ներկայացնում է ողջ հանրապետությունը:

3) պահպանել Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի և խորհրդարանական լուսմների անցկացման կարգը.

Սույն կանոնը սերտորեն կապված է նախորդ կանոնների հետ, քանի որ Ազգային ժողովի նիստերի ընթացքում պատգամավորը պարտավոր է հարգել հանրության բարոյական նորմերը, դրսևորել Սահմանադրությանը, ԱԺ կանոնակարգին և այլ նորմատիվ իրավական ակտերին համահունչ վարքագիծ:

4) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով.

Պատգամավորի գործունեությունը պետք է բխի միայն հանրության շահերից և պետք է բացառի ցանկացած տեսակի շահերի բախումը: Սույն կանոնը հնարավորություն է տալիս բացառել կոռուպցիան, ապահովել պատգամավորների գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

5) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունն ի շահ իրեն կամ այլ անձի.

Էթիկայի այս կանոնը կարգավորում է շահերի բախումը պատգամավորի գործունեության ընթացքում: Շահերի բախումը ծագում է այն ժամանակ, երբ պատգամավորի մասնավոր շահերը ազդում են նրա պաշտոնական լիազորությունների և պարտականությունների իրականացման վրա⁸⁰: Օրինակ՝ պատգամավորին պատկանում է շինարարական կազմակերպություն,

⁸⁰ <https://www.oecd.org/gov/ethics/oecdguidelinesformanagingconflictsofinterestinthepublicservice.htm>.

իսկ խորհրդարանում քվեարկելու է այն օրինագծին, որը կարգավորում է անվտանգության կանոնները շինարարության ոլորտում: Արդյունքում պատգամավորը գուցե ավելի բարձր համարի իր մասնավոր կազմակերպությունից շահույթ ստանալը, քան հասարակության ռացիոնալ շահերին ծառայելու իր պարտականությունը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

Աժ պատգամավորները համարվում են պետական պաշտոնատար անձինք, ուստի նրանց վրա տարածվում են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիաները, որոնց հիման վրա պատգամավորները պարտավորվում են ներկայացնել գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագիր⁸¹:

Պատգամավորների շահերի բախման վերաբերյալ առկա է երկու մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ պատգամավորներին արգելվում է զբաղեցնել որոշակի պաշտոններ, ինչը արձանագրվել է Սահմանադրության 95-րդ հոդվածում: Պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմա-

⁸¹ Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, Միավորված ազգերի կազմակերպություն, Հոդված 8 https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/corruption.shtml.

նադրական սույն կարգավորման համաձայն՝ պատգամավորին արգելվում է կատարել ցանկացած տեսակի աշխատանք, բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Շահերի բախման երկրորդ մոտեցման համաձայն՝ պատգամավորը կարող է զբաղվել նաև գործունեության այլ տեսակներով՝ պայմանով, որ դրանք կհայտարարագրի⁸²:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2000 թվականի 1214 բանաձևով արձանագրել է. «*Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար խորհրդարանը՝ որպես քաղաքական բարձրագույն մարմին, և վերահսկող մարմինները անհրաժեշտ են այն երկրներում, որտեղ հնարավոր է ... պատգամավորների և մերձավոր ազգականների գույքի, եկամույների և փարեկան հայտարարագրման վարում*⁸³»:

Երկրորդ մոտեցումը լայն կիրառում ունի Շվեդիայում, և մանդատի անհամատեղելիության կոշտ կանոններ սահմանված չեն, այլ միայն այն քննարկումներում և քվեարկություններում, որտեղ պատգամավորը կարող է ունենալ շահերի բախում, պարտավոր է չմասնակցել⁸⁴:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ առկա է երկու մոտեցում շահերի բախումը բացահայտելու ուղղությամբ:

⁸² Մանրամասն տե՛ս GAY, OONAGH AND LEOPOLD, PATRICIA, *Conduct Unbecoming: The Regulation of Parliamentary Behaviour*, London, Politico's, 2004.

⁸³ Role of parliaments in fighting corruption, (Former) Committee on Economic Affairs and Development, Res. 1214, 05/04/2000, <https://pace.coe.int/en/files/16794>.

⁸⁴ House of Commons, Canada, Procedure and Practice, Second Edition, 2009, <https://www.ourcommons.ca/procedure-book-livre/en/document?sbdid=2ae20cbe-e824-466b-b37c-8941bbc99c37&sbspid=2a73c573-7a64-4c90-b4ab-72ab7830dbbd>.

Դրանք են՝ շահերի ռեեստրը և գույքի, եկամուտների հայտարարագրումը: Պատգամավորը շահերի ռեեստրում հայտարարագրում է իր եկամուտների աղբյուրները և պարտավորությունները, որոնք իրականացնում է պատգամավորական մանդատին զուգահեռ: Շահերի ռեեստրը առաջին անգամ կիրառվել է 1970-ական թվականներին ԱՄՆ-ում և Միացյալ Թագավորությունում⁸⁵: Նիդերլանդներում առկա է երեք առանձին ռեեստր, որոնք հասանելի են հասարակությանը: Առաջին ռեեստրը վերաբերում է պատգամավորի եկամուտներին և պաշտոններին, երկրորդը՝ խորհրդարանի կողմից չվճարվող արտասահմանյան գործողումներին, երրորդը՝ նվերներին⁸⁶:

ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովը (ԱՊՀ ՄԽՎ) նշանակալի դեր է խաղացել Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում խորհրդարանական մշակույթի և էթիկայի չափանիշների մշակման և զարգացման գործում: Սույն մարմինը ստեղծվել է ԱՊՀ անդամ պետությունների օրենսդրական ինտեգրմանը նպաստելու և իրավական կարգավորման համադրված մոտեցումներ մշակելու նպատակով:

Ստորև ներկայացված են ԱՊՀ ՄԽՎ-ի հիմնական ներդրումը խորհրդարանական մշակույթի և էթիկայի ձևավորման գոր-

⁸⁵ Декларации активов для государственных служащих, инструмент для предотвращения коррупции, Борьба против коррупции в Восточной Европе и Центральной Азии <https://www.oecd.org/daf/anti-bribery/48973261.pdf>, OECD (2011), Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption (Russian version), OECD Publishing. <http://dx.doi.org/9789264118799-ru>.

⁸⁶ Парламентская этика, Справочное руководство для реформаторов, ОБСЕ, Варшава, 2022, էջ 68, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.osce.org/files/f/documents/7/c/518826.pdf>.

ծում.

1. Մոդելային օրենքների մշակում. ԱՊՀ ՄԽՎ-ը մշակում է մոդելային ակտեր և առաջարկություններ անդամ-պետությունների օրենսդրության միասնականացման համար: Սույն գործընթացը իր մեջ ներառում է խորհրդարանականների էթիկայի վերաբերյալ մոդելային օրենքների մշակումը, որի միջոցով խորհրդարանականների աշխատանքում սահմանվում են բարձր չափանիշներ՝ կապված վարքագծի, ազնվության, և թափանցիկության հետ:

2. Խորհրդարանական էթիկայի կանոնագրքեր. ԱՊՀ ՄԽՎ-ը ակտիվորեն խթանում է ԱՊՀ անդամ-պետությունների խորհրդարաններում էթիկայի կանոնագրքերի մշակումը և կիրառումը: Այս կանոնագրքերը կարգավորում են շահերի բախման, կոռուպցիայի, մասնագիտական և հանրային վարքագծի հետ կապված հարցերը:

3. Համաժողովներ և սեմինարներ. ԱՊՀ ՄԽՎ-ը պարբերաբար կազմակերպում է աշխատաժողովներ, համաժողովներ և սեմինարներ ԱՊՀ անդամ-պետությունների խորհրդարանական մշակույթի և էթիկայի մասին փորձի փոխանակման վերաբերյալ: Սույն միջոցառումները նպաստում են ձևավորել միասնական մոտեցումներ և քննարկել լավագույն փորձը՝ քաղաքական էթիկայի բարձր մակարդակը պահպանելու համար:

4. Խորհրդարանական ընթացակարգերի վերաբերյալ առաջարկություններ. ԱՊՀ ՄԽՎ -ը մշակում է նաև առաջարկություններ խորհրդարանական ընթացակարգերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ներառյալ՝ մշակութային վարքագծի նորմերի, բանավեճերի վարման կանոնների և խորհրդարանական գործունեության այլ ասպեկտների պահպանման

վերաբերյալ, որոնք կապված են գործընկերների կարծիքների և իրավունքների հարգման հետ:

5. Մոնիտորինգ և չափանիշների պահպանման հարցում աջակցություն. ԱՊՀ ՄԽՎ-ը համագործակցում է ազգային խորհրդարանների հետ՝ էթիկայի նորմերի պահպանման նկատմամբ հետևողականություն ապահովելու համար, առաջարկելով կարգապահական պատասխանատվության և էթիկական նորմերին հետևելու խրախուսման մեխանիզմներ:

Այսպիսով, ԱՊՀ ՄԽՎ-ը փորձի փոխանակման հարթակ է, որտեղ մշակվում են միասնական չափանիշներ խորհրդարանական մշակույթի և էթիկայի ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համար, ինչը նպաստում է խորհրդարանական ինստիտուտների թափանցիկության և վստահության բարձրացմանը⁸⁷:

Հայաստանի Հանրապետությունը դասվում է այն երկրների ցանկում, որտեղ պատգամավորը յուրաքանչյուր տարի ներկայացնում է գույքի, եկամուտների և շահերի մասին հայտարարագիր:

6. Իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.

7. Ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ.

8. Հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, լրագրողների, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր

⁸⁷ <https://cyberleninka.ru/article/n/yuridicheskaya-priroda-modelnyh-zakonov-mezhparlamentskoy-assamblei-gosudarstv-uchastnikov-sodruzhestva-nezavisimyh-gosudarstv/viewer>.

լիազորություններն իրականացնելիս:

6-8-րդ կետերով սահմանված կանոնները սերտորեն կապված են միմյանց հետ: Աժ պատգամավորի գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ մակարդակների՝

- Աժ շենքում,
- Աժ շենքից դուրս պետական իշխանության մարմինների հետ,
- Աժ շենքից դուրս հասարակության ներկայացուցիչների հետ,
- Աժ շենքից դուրս արտասահմանյան գործողումների ժամանակ:

Այդ չորս մակարդակներում պատգամավորը պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որն կնպաստի ոչ միայն պատգամավորի նկատմամբ, այլ նաև Ազգային ժողովի նկատմամբ վստահության բարձրացմանը:

3.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴԵՊԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածը սահմանում է, որ առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

2015 թվականի սահմանադրաիրավական բարեփոխումներից հետո Սահմանադրությամբ ամրագրվեց, որ էթիկայի հարցերով ձևավորվելու է ժամանակավոր հանձնաժողով: Մինչև սահմանադրական մակարդակով ամրագրելը էթիկայի հետ կապված հարցերը կարգավորվում էին միայն ԱԺ կանոնակարգով:

ԱԺ կանոնակարգի 6-րդ գլուխը վերաբերում է ժամանակավոր հանձնաժողովներին: Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են ԱԺ որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունք ունեն միայն խմբակցությունները: Էթիկայի հանձնաժողով ստեղծելու որոշմամբ սահմանվում են նաև եզրակացություններ ներկայացնելու ժամկետները: Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև երկու ամիս է, որը կարող է հարցի քննարկումն ավարտելու նպատակով ԱԺ որոշմամբ երկարաձգվել մեկ ամսով՝ հանձնաժողովի առաջարկությամբ:

Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝

1) քննարկում և Ազգային ժողով եզրակացություն է ներկայացնում իր իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ.

2) կարող է հարցմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց.

3) հարցմամբ կարող է պահանջել և օրենքով սահմանված կարգով ստանալ հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

4) կարող է հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար պատվիրել փորձաքննություններ և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները:

Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի պահանջած տեղեկությունները և եզրակացությունները պետք է նրան ուղարկվեն հարցումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե հարցման մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում: Հանձնաժողովի անդամները հարցմամբ պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Էթիկայի հանձնաժողովին հասանելի են նաև պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները: Ինչպես նշեցինք վերևում, էթիկայի հանձնաժողովը տրամադրում է եզրակացություն: Այդ եզրակացությունը չի քննարկվում Ազգային ժողովի նիստի ընթացքում, այլ միայն տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Էթիկայի հարցերով հանձնաժողովը իր գործունեությունը

իրականացնում է դռնփակ նիստերի միջոցով: Նիստերին մասնակցում են ոչ միայն հանձնաժողովի անդամները, այլ նաև այն պատգամավորը, ով ենթադրյալ խախտել է էթիկայի կանոնները, ինչպես նաև մասնակցում են հանձնաժողովի կողմից հրավիրված անձինք:

Էթիկայի հանձնաժողովի գործունեությունը դադարում է միայն Ազգային ժողովի որոշմամբ, որի նախաձեռնությունը պատկանում է միայն խմբակցությանը: Այսինքն գործում է միևնույն մեխանիզմը, ինչը առկա է էթիկայի հանձնաժողովի ձևավորման ժամանակ:

Աժ կանոնակարգի 162-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ մինչև պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում և երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողովի ստեղծվելուց հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) քաղաքացիական ծառայող է:

Օրենսդիրը սույն նորմատիվ պատվիրանի միջոցով, արժևորելով էթիկայի կանոնների պահպանությունը և աշխատանքի անընդհատությունը ապահովելու համար, սահմանել է, որ աշխատակազմը կատարում է աշխատանքներ մինչև էթիկայի հանձնաժողովի ձևավորումը:

Էթիկայի կանոնները բազմիցս խախտել են Աժ պատգամավորները: 2013 թվականին միջադեպ էր տեղի ունեցել Աժ պատգամավոր Մ.Սեդրակյանի և լրագրող Մ. Արշակյանի միջև: Մի-

ջադեպի արդյունքում ԱԺ էթիկայի հանձնաժողովը որոշել էր, որ Մ.Սեդրակյանը խախտել է էթիկայի կանոնը, որն արձանագրված է ԱԺ կանոնակարգով, մասնավորապես՝ պատգամավորը պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերի ոչ միայն իր ընդդիմախոսների նկատմամբ, այլև այն անձանց հետ, ում հետ շփվում է ի պաշտոնե:

«Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստան» հիմնադրամը հրապարակել է «5-րդ գումարման Ազգային ժողով. էթիկայի հարցեր, բացակայություններ» զեկույցը:

Զեկույցում արձանագրվել է, որ 4 տարվա ընթացքում հանձնաժողովը 7 անգամ է էթիկայի կանոնների խախտում արձանագրել: Որոշումներից 3-ը վերաբերել է Առաքել Մովսիսյանին, 2-ը՝ Մհեր Սեդրակյանին, 1-ը՝ Սամվել Ալեքսանյանին:

1-ին որոշմամբ էլ էթիկայի կանոնների խախտում է արձանագրվել ուրիշի փոխարեն քվեարկած 7 պատգամավորի՝ ՀՀԿ-ականներ Սպարտակ Մելիքյանի, Համլետ Հարությունյանի, Սեդրակ Սարոյանի, Առաքել Մովսիսյանի, Կարեն Սարիբեկյանի, ԲՀԿ-ականներ Արշակ Մխիթարյանի և Բազմասեր Առաքելյանի վերաբերյալ⁸⁸:

2015 թվականին էթիկայի հանձնաժողովը արձանագրել է, որ պատգամավոր Ա.Մովսիսյանը խախտել է էթիկայի կանոնը՝ պատգամավորը պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերի ոչ միայն իր ընդդիմախոսների նկատմամբ, այլև այն անձանց հետ, ում հետ շփվում է ի պաշտոնե⁸⁹:

2020 թվականի մայիսի 8-ին ԱԺ նիստերի դահլիճում, երբ ելույթով հանդես էր գալիս պատգամավոր Է.Մարությանը,

⁸⁸ <https://www.osf.am/wp-content/uploads/2018/02/1504908966.pdf>.

⁸⁹ <https://www.7or.am/am/news/view/69119/>.

պատգամավոր Ս.Միքայելյանը հարձակվեց Է.Մարությանի վրա, և սկսվեց ծեծկռտուք⁹⁰: Սույն միջադեպի կապակցությամբ այդպես էլ չձևավորվեց էթիկայի հանձնաժողով: Ավելին, ԱԺ նախագահը, ով ԱԺ կանոնակարգի 52-րդ հոդվածի լույսի ներքո իրավունք ունի կիրառել կարգապահական տույժի միջոցներ, այդպես էլ չկիրառեց:

ԱԺ կանոնակարգի 52-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել ստորև նշված կարգապահական տույժերը.

1) նախազգուշացում՝ անունը, ազգանունը հրապարակելով.

2) խոսափողի անջատում.

3) մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում.

4) հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից.

5) Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում:

2021 թվականի Ազգային ժողովի նիստերի դահլիճում կրկին տեղի ունեցավ միջադեպ ԱԺ պատգամավորների Ս.Օ. հանյանի և Հ.Սարգսյանի միջև⁹¹: Սույն միջադեպի կապակցությամբ կրկին էթիկայի հանձնաժողով չձևավորվեց, իսկ ԱԺ նախագահը կարգապահական միջոցներ չկիրառեց պատգամավորների նկատմամբ:

Համացանցի հասանելի տիրույթներում ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ միայն 2020 թվականին ԱԺ նախա-

⁹⁰ <https://hetq.am/hy/article/116878>.

⁹¹ <https://lurer.com/?p=431048&l=am>.

գահը պատգամավորների նկատմամբ կիրառել է հետևյալ կարգապահական միջոցը՝ հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից⁹²:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշմամբ արձանագրել է.

«Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև պատգամավորական էթիկայի կանոնների հարցին՝ Ազգային ժողովի բնականոն գործունեության երաշխավորման և այդ առնչությամբ՝ Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի ապահովման համարեքսպում՝ նկատի առնելով նաև դիմողի դիրքորոշումն առ այն, որ «(...) Բարձր դատարանը պետք է գնահատի նաև առհասարակ ՀՀ ԱԺ պատգամավորի ելույթի նկատմամբ նիստը նախագահողի կողմից փաստացի գրաքննության բացառման հանգամանքը և դրանով Պատգամավորին կաշկանդելու բացառումը: Այսինքն, եթե ինքնին ելույթում հնչեցված ակնհայտ Պատգամավորի վարքագծի տեսանկյունից պատգամավորական էթիկային առնչվող հարցեր առաջանան, ապա նման դեպքերի համար առկա է լրիվ այլ գործիքակազմ համապատասխան ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու միջոցով»⁹³:

⁹² <https://fip.am/10154>

⁹³ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 4-րդ մասի և 7-րդ մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշում, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://concourt.am/decision/decisions/61fd6ab45617e_sdv-1627.pdf

Սահմանադրական դատարանը փաստում է, որ «թեև պատգամավորական էթիկայի, այդ հարցերով ժամանակավոր հանձնաժողովի վերաբերյալ սահմանադրական և օրենսդրական կարգավորումները/կառուցակարգերը միտված են պատգամավորի էթիկական վարքագիծն ապահովելուն, նրա առերևույթ ոչ էթիկական վարքագիծը քննության առնելուն և վերջինիս գնահատական տալուն, սակայն դրանք չեն կարող ապահովել Ազգային ժողովի նիստի ընթացքում կարգուկանոնի պահպանումը՝ երաշխավորելով օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը: Թեև քննարկվող իրավիճակներում խոսքը վերաբերում է պատգամավորի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելուն, որը կարող է դիտարկվել/գնահատվել որպես ոչ էթիկական, հարկ է նկատի ունենալ, որ Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի ապահովումը ենթադրում է նաև արագ և համարժեք արձագանք նիստի բնականոն ընթացքը խաթարող գործողություններին, և այդ հարցում հապաղումը (գործուն միջոցներ չձեռնարկելը) կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ (ՄԻԵԴ-ը նշել է, որ պատգամավորի կողմից նիստի բնականոն ընթացքը խախտելու դեպքում, նրա նկատմամբ անմիջապես կիրառվում է կարգապահական միջոց (Immediate sanctions) (...), այս համարեքստում պատգամավորի ակնհայտ վիրավորական արտահայտությունները կամ վարքագիծը իմաստազրկում են նրա՝ խոսքի ազատության իրավունքի պաշտպանությունը կամ դրսևորվում են որպես այդ իրավունքի չարաշահում»⁹⁴ **ընդհուպ մինչև Ազգային ժողովի աշխատանքների կազմալուծումը: Հենց նշված հանգամանքով է պայմանավոր-**

⁹⁴ Case of Karncsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 155

ված Օրենքում պատգամավորական էթիկային առնչվող և Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքն ապահովելուն միտված տարբեր իրավակարգավորումների/կառուցակարգերի ամրագրումը»:

Սահմանադրական դատարանը նշել է, որ էթիկայի և կարգապահական կանոնների միաժամանակյա գոյությունը և կարգապահական միջոցների կիրառումը, ըստ էության, Սահմանադրական դատարանը կապել է միայն ԱԺ նիստերի ընթացքում կարգուկանոն ապահովելու հետ, ինչը մտահոգություն է առաջացնում էթիկայի կանոնների խախտման սանկցիաների կիրառման տեսանկյունից:

Հարկ է փաստել, որ էթիկայի հանձնաժողովը, չունենալով իրավական ներգործության միջոցներ կիրառելու արդյունավետ հնարավորություն, համապարփակ զարգացում չի ապրում, ինչն էլ նպաստում է հանձնաժողովի ինստիտուցիոնալ կերպով չկայանալուն:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ընդգծել, որ **էթիկայի հանձնաժողովը պետք է լինի կենդանի օրգանիզմ և արձագանքի ԱԺ պատգամավորների բոլոր տեսակի արարքներին՝ ապահովելով պատասխանատվության և պատժի անխուսափելիությունը:**

3.3. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

21-րդ դարում պետական իշխանության ինստիտուտների նկատմամբ վստահությունը նվազում է: Համացանցի հասանելիությունը նպաստում է, որ հասարակությունը ամբողջությամբ տեղյակ լինի պետական իշխանության ինստիտուտների գործունեությունից: Իրազեկվածության այդ պայմաններում նվազում է նաև խորհրդարանի նկատմամբ վստահությունը: Խորհրդարանի նկատմամբ վստահության նվազման պատճառները բազմաթիվ են՝ ժողովրդավարության պակաս, արժեհամակարգերի փոփոխություն և այլն:

Խորհրդարանական էթիկայի մասով կարևոր ձեռքբերում եղավ, երբ սահմանադրական մակարդակով արձանագրվեց էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու մասին կարգավորումը:

Խորհրդարանական էթիկայի զարգացման մասով տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ, մասնավորապես՝ ներդրվել է պատգամավորների գույքի, եկամուտների և շահերի մասին հայտարարագիր ներկայացնելու ինստիտուտը, սահմանվել են պատգամավորական էթիկայի կանոնները, կարգապահական միջոցները:

Թեև կատարվել է որոշակի աշխատանք այդ ուղղությամբ, սակայն դեռևս ներդրված միջոցները համարվում են ոչ բավարար, քանի որ պատգամավորի էթիկայի կանոնները այն ցուցիչն են, որոնց միջոցով հնարավոր է չափել խորհրդարանի նկատմամբ վստահությունը, ուստի անհրաժեշտ է կատարել շա-

րունակական բարեփոխումներ խորհրդարանական էթիկայի զարգացման ուղղությամբ:

Համացանցը նպաստում է պատգամավորների արարքների մասին իրազեկվելուն: Համացանցը ոչ միայն տեղեկություն է տարածում խորհրդարանի ներսում պատգամավորների գործունեության մասին, այլ նաև խորհրդարանի շենքից դուրս, մասնավորապես, երբ պատգամավորները սոցիալական կայքերում ակտիվություն են դրսևորում: Ուստի պատգամավորների վարքագիծը պետք է լինի վերահսկելի ոչ միայն խորհրդարանի շենքի ներսում աշխատանքներ կատարելիս, այլ նաև խորհրդարանի շենքից դուրս:

Հասարակությունը պատգամավորներից պահանջում է այնպիսի վարքագծի դրսևորում, որի շրջանակներում կպահպանվեն պատգամավորի էթիկայի կանոնները: Միչդեռ համացանցի ազդեցությունը դրսևորվում է նրանում, որ խորհրդարանի անդամների անզգույշ կամ դիտավորյալ արտահայտությունների մասին հասարակությունը անմիջապես իրազեկվում է:

Օրինակ՝ ԱԺ պատգամավոր Հակոբ Ասլանյանը «ArmLur.am» կայքին տված հարցազրույցում ասել է. «Այսօր փողոցում հավաքվել է Ժողովրդի փոքրիկ մասնիկը, որոնք զրկվել են լափամանից, եղել են աբիժնիկ, մարդիկ են, որոնք պաշտոն են ուզում, որպեսզի երկիրը էլի տանեն կործանման»⁹⁵: ԱԺ պատգամավորը սույն արտահայտություններով խախտել է պատգամավորական էթիկայի կանոնները, սակայն, որպես հետևանք, չի ձևավորվել էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով:

⁹⁵ <https://armlur.am/1366403>.

Մեկ այլ դեպքում ԱԺ պատգամավորն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «*Հարգելի՛ ցուցարարներ, աղբամաններով փողոց փակելու փոխարեն ձեզ գցեք աղբամանի մեջ ու սպասեք զիրիլի մեքենային: Ձեր վայրը աղբանոցում է:*»⁹⁶:

Երկու դեպքերում էլ ԱԺ պատգամավորները խախտել են էթիկայի կանոնները, իսկ պատգամավորների արտահայտությունները լայնորեն տարածվել են համացանցի միջոցով:

Հետևաբար՝ անհրաժեշտ է կատարել ԱԺ պատգամավորների վերապատրաստումներ, թե ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորեն համացանցից օգտվելիս: Այս կապակցությամբ հարկավոր է մշակել առարկայական ծրագրեր և վերապատրաստումներին մասնակից դարձնել նաև ԶԼՄ ներկայացուցիչներին:

Էթիկայի կանոնների պահպանման մասով բացակայում են առավել արդյունավետ և իրավակիրառ մեխանիզմները, ինչի արդյունքում էթիկայի հանձնաժողովի աշխատանքը լինում է ոչ արդյունավետ և ոչ բավարար՝ հաշվի առնելով վարույթների թվաքանակը և կիրառված տույժերը: Էթիկայի հանձնաժողովի ոչ արդյունավետ աշխատանքը նպաստում է խորհրդարանի նկատմամբ վստահության կորստին:

Ութերորդ գումարման ԱԺ-ում բացակայում է էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվությունը⁹⁷, ինչը նպաստում է վստահության նվազմանը:

Էթիկայի հարցերով հանձնաժողովի գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու համար, կարծում ենք, որ էթիկայի հանձնաժողովում պետք է գերակշռեն ընդդիմության ներ-

⁹⁶ <https://shamshyan.com/hy/article/2024/05/13/1261474>.

⁹⁷ http://www.parliament.am/committees.php?lang=arm&show_session=8.

կայացուցիչները, ինչը կապահովի հանձնաժողովի արդյունավետ աշխատանքը: Էթիկայի հանձնաժողովում ընդդիմության ներկայացուցիչների թվաքանակով է պայմանավորված խորհրդարանի մեծամասնության ամենաթողության սահմանափակումը՝ որպես զսպումների և հակակշիռների համակարգի կիրառում:

Աժ պաշտոնական կայքէջում անհրաժեշտ է առանձին տեղ հատկացնել Էթիկայի հանձնաժողովին, որտեղ կներկայացվի հանձնաժողովի աշխատանքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև կսահմանվի Էթիկայի հանձնաժողովին դիմելու կարգը:

Հարկ է նշել, որ պատգամավորական Էթիկայի կանոնները սահմանվել են 2016 թվականին: Սույն կանոնները ընդհանրական բնույթ են կրում և կարող են տարբեր մեկնաբանություններ լինել: Սույն կանոնները 8 տարվա ընթացքում որևէ փոփոխություններ չեն կրել, չնայած հասարակական հարաբերությունների զարգացմանը և տեխնոլոգիաների ներթափանցմանը հասարակական կյանք:

Էթիկայի կանոնների մեջ հարկավոր է արձանագրել այն կանոնը, որ եթե Աժ պատգամավորը դուրս է գալիս խմբակցությունից, մանդատը պետք է վայր դնի: Սույն կանոնի հիմնավորվածությունը կայանում է նրանում, որ ներկա ընտրական համակարգի պայմաններում Աժ պատգամավորը ընտրվում է կուսակցական ցուցակով և ներկայացնում է ողջ հանրապետությունը: Այս կանոնի վերաբերյալ անգամ առկա է Սահմանադրական դատարանի որոշում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի

Հանրապետությունում առկա ընտրակարգի շրջանակներում, երբ պատգամավորը մանդատը ստանում է կուսակցությանը տված ձայների շնորհիվ, ինքը նշված չի եղել քվեաթերթիկում և նրա վերաբերյալ ընտրողը որևէ կամաարտահայտություն չի դրսևորել, սակայն ցանկանում է դուրս գալ խորհրդարանական խմբակցությունից, ապա դա կարող է անել մանդատը կամավոր վայր դնելուց հետո միայն, քանի որ հակառակ դեպքում կնպաստի **խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությանը, որը փոխում է ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում և չի բխում իրավական պետության և ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից**⁹⁸:

Պատգամավորական էթիկայի կանոնների մասով անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ և մշակել ուղեցույցեր, թե պատգամավորը էթիկայի կանոնների ներքո ինչպիսի գործունեություն պետք է ծավալի:

Ներկայումս պատգամավորական էթիկայի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները տարածվում են միայն այն անձանց վրա, ովքեր հանդիսանում են ԱԺ պատգամավոր: Կարևորելով ԱԺ պատգամավորի դերը խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում՝ կարծում ենք, որ պատգամավորական էթիկայի կանոնները պետք է լինեն պարտադիր նաև այն անձանց համար, ովքեր երբևէ եղել են ԱԺ

⁹⁸ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14 հոդվածների Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://concourt.am/decision/decisions/633eb07c95856_sdv-810.pdf

պատգամավոր:

Անձը, ստանալով ԱԺ պատգամավորի մանդատը, պարտավորվում է ապագայում մանդատ վայր դնելու պարագայում նույնպես պահպանել էթիկայի կանոնները: Պատգամավորական էթիկայի կանոնների դերի բարձրացումը կնպաստի նաև խորհրդարանի նկատմամբ վստահության և հեղինակության բարձրացմանը:

Նախկինում ՀՀ-ում գործում էր parliamentmonitoring կայքէջը, որի միջոցով հասարակությունը վերահսկողություն էր իրականացնում ԱԺ պատգամավորների աշխատանքի նկատմամբ, մասնավորապես՝ որքան նիստի է մասնակցել, ինչպես է քվեարկել, արդյոք հանձնաժողովի նիստերին մասնակցել է, թե ոչ, և այլն: Ներկայումս տվյալ կայքէջը հասանելի չէ: Կարծում ենք, որ հասարակության մասնակցությունը պատգամավորական էթիկայի կանոնների կատարման մասով վերահսկողությանը մեծացնելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան գործիքակազմ, ինչի շնորհիվ քաղաքացին ոչ միայն կտեղեկանա ԱԺ պատգամավորի աշխատանքի, այլև նրա կողմից էթիկայի կանոնների պահպանման մասին:

Ազգային ժողովի պատգամավորների նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու իրավասությունը պատկանում է ԱԺ նախագահին: Օրենսդիրը սահմանել է կարգապահական միջոցներ կիրառելու դեպքերը, մասնավորապես՝ նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարելու, քննարկվող հարցից ելույթում շեղվելու, վիրավորական արտահայտություն անելու, բացակա պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու

կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու դեպքում ԱԺ նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական միջոցներ: Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում, Միացյալ Թագավորությունում նույնպես սահմանվել են կարգապահական միջոցներ պատգամավորական էթիկայի կանոնների խախտման համար⁹⁹: Ուստի, կարծում ենք, որ իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության տեսանկյունից հարկավոր է սահմանել էթիկայի կանոնների խախտումների արդյունքում ծագող կոնկրետ իրավական հետևանքները սանկցիաների տեսքով:

Խորհրդարանական էթիկայի զարգացման և դրա կիրառման ուղղությամբ բարեփոխումները կնպաստեն խորհրդարանի աշխատանքի թափանցիկության, ինչպես նաև հասարակության կողմից վստահության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կապահովի խորհրդարանական մշակույթի շարունակական զարգացումը:

⁹⁹ Парламентская этика, Справочное руководство для реформаторов, ОБСЕ, Варшава, 2022, էջ 101, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.osce.org/files/f/documents/7/c/518826.pdf>.

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԷԹԻԿԱՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

4.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ԷԹԻԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Զարմանալի ոչինչ չի լինի, եթե հայտարարենք, որ Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության երեսուներեք տարիների ընթացքում սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական անկայունությունն ամբողջ պետաիրավական համակարգի մշտական ուղեկիցն են եղել: Դա, ըստ էության, պայմանավորված է եղել և ինքն էլ պայմանավորել է հայկական հանրության անցումային բնույթը, երբ սոցիալիստական հասարակարգն ու կոմունիստական տոտալիզմը՝ իրենց դրական ու բացասական հատկանիշներով, անցում են կատարում կապիտալիստական հասարակարգին ու չկարգավորված ազատականությանը՝ կրկին իրենց դրական ու բացասական հատկանիշներով:

Այս ամենը գալիս է հուշելու, որ Հայաստանի Հանրապետությունն իր քաղաքական, տնտեսական, իրավական, պետական ու արժեքային համակարգերով դեռևս գտնվում է անցումային ու դրանից բխող անկայուն փուլում, որը դժբախտաբար կամ բարեբախտաբար կայունության անցման որևէ նշույլ չի ցույց տալիս՝ հաշվի առնելով ներքին ու արտաքին մի շարք գործոններ¹⁰⁰:

¹⁰⁰ Մանրամասն տե՛ս Տ.Վ. ՍԻՄՈՆՅԱՆ, «Անցումային և անկայուն սոցիալ-պետական համակարգերի համալիրություն. սիներգետիկ աշխարհընկալում: Պետաիրավական համալիրություն և սիներգետիկա. Մաս 1», Երևան, 2013:

Սրան գումարվում է նաև այն, որ անգամ այնպիսի խորհրդարանական աշխատանքում, ինչպիսին օրինաստեղծագործությունն է, բացակայում է արդի իրավունքի համալիրության գիտակցումը նաև այն պատճառով, որ ոչ միայն հայրենական, այլ նաև նույնիսկ միջազգային իրավագիտությունը չի կարողանում դեռևս ամբողջությամբ թևակոխել էպիստեմալոգիայի կամ գիտական մտածողության երրորդ՝ հետ-ոչ-դասականության մակարդակ, որտեղ բարդացող սոցիալ-պետական երևույթները կսկսվեն դիտարկվել արդեն այդ մակարդակին բնորոշ մեթոդաբանությամբ¹⁰¹:

Սա շարունակվող ճգնաժամ է, որ երբեմն իր շարունակական լինելու պատճառով չի ընկալվում որպես այդպիսին, սակայն թողած հետևանքների իմաստով ամբողջությամբ համապատասխանում է այդ խորքային երևույթի ամբողջ փիլիսոփայությանը:

Փոփոխություններ ու կերպափոխումներ են տեղի ունենում ոչ միայն տնտեսական միջավայրում (պլանային տնտեսությունից ազատական շուկայական հարաբերություններ, այնուհետև՝ պայքար սոցիալական հավասարակշռության պայմաններում դեպի գործող ազատ շուկայական տնտեսության¹⁰²), այլ նաև պետական կարգում, պետական կառավարման մեջ, օրենսդրական ու իրավական համակարգերում, կենսիմաստի փիլիսոփայության ու նույնիսկ արժեքային կողմնորոշիչներում:

¹⁰¹ Մանրամասն տե՛ս Տ.Վ. ՍԻՄՈՆՅԱՆ, «Իրավունքի սիներգետիկա: Պեդագոգիկական համալիրություն և սիներգետիկա. Մաս 2», Երևան, 2023:

¹⁰² Վերջին անցումը հստակ երևում է 2015թ-ի Սահմանադրության արդեն 11-րդ հոդվածում, որտեղ ամրագրված «շուկայական տնտեսություն» բառերից առաջ ավելացվեց «շուկայական» բառը՝ որպես Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմք:

Հաճախ այդ փոփոխությունները տեղի են ունենում, նույնիսկ երբ բավարար չափով չեն մարսվել նախորդ փոփոխությունների հետևանքները, ինչպես, օրինակ, սահմանադրական փոփոխությունների պարագայում, երբ նույնիսկ այդ փոփոխություններով սահմանված անցումային դրույթների կեսն էլ կենսագործված չի լինում, սեղանին է դրվում նոր փոփոխությունների փաթեթը: Իսկ այդ փոփոխությունների կուտակվող շերտերը սոցիալական դինամիկայում առաջացնում են անկարգավորվածության ու անորոշության բարդ խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներն ու դրանց հեղինակները իրենք պետք է առնվազն լինեն համալիրության մտածողության մակարդակում, որ գոնե տեսնեն պատճառահետևանքային կապերի խորքն ու համալիրությունը:

Այս ներհասարակական փոփոխությունների բազմազանությունը վակուումային միջավայրում չի տեղի ունենում, այլ արագության մի քանի անգամ ավելի բարձր փոփոխությունների մակարդակ ունեցող արտաքին միջավայրում: Իսկ այդ արտաքին միջավայրն արդեն ունի իր առանձնահատկություններն ու յուրահատկությունները, սոցիալական ժամանակի ու արագության իր չափորոշիչները, աշխարհաքաղաքականության ու միջազգային ֆինանսատնտեսական համակարգերի շահերը, դրանց կոշտ ու ճկուն բախումներն ու զարգացման ուղղությունները, արդյունաբերական երրորդից դեպի չորրորդ հեղափոխության անցման փուլի մարտահրավերները¹⁰³՝ պայմանավոր-

¹⁰³ Մանրամասն տե՛ս KLAUS SCHWAB, «*The Fourth Industrial Revolution*», World Economic Forum, Geneva, 2016, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://law.unimelb.edu.au/_data/assets/pdf_file/0005/3385454/Schwab-The_Fourth_Industrial_Revolution_Klaus_S.pdf , ENGR. A. K. M. FAZLUL

ված տեխնոլոգիական գերարագ ու թռիչքային զարգացումներով, որոնք շատ դեպքերում առաջացնում են անկանխատեսելի և որևէ կերպ վերահսկելու հնարավորություն չտվող միջավայր:

Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, ձեռք է բերել նոր որակներ, որոնք աննախադեպ տարբերություններ են մտցնում՝ նախկին սոցիալական, քաղաքական և իրավական միջավայրերի հետ համեմատության մեջ: Հիմնական առանձնահատկությունը փոփոխությունների տեմպն է, պարբերականությունը, ծավալը և փուլերը, որոնք մենք տեսնում ենք մեկ անձի կյանքի ընթացքում: Այս ամենն անձանց, հասարակությունների, պետությունների և, ընդհանուր առմամբ, մարդկության իրական կյանքը դարձնում է նոր փոփոխություններով և դրանց համար լուծումների խորը բացերով լի¹⁰⁴:

Սոցիալական արագ կերպափոխումներն այս տեսակ իրականությունների անքակտելի մասն են: Երբեմն դրանք առաջացնում են քաոսի զգացողություն, և սոցիալ-քաղաքական, պետահրավական, ֆինանսատնտեսական մարտահրավերները դրսևորվում են քաոսի սահմանայնությունում, որտեղ սոցիալա-

HOQUE, *The 4th Industrial Revolution: Impact and Challenges*, Conference paper, Conference: National Conference on Electronics and Informatics jointly organized by Bangladesh Electronics Informatics Society and Bangladesh Atomic Energy Commission held at Atomic Energy Centre, Dhaka, 4-5 December 2019, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.researchgate.net/publication/337830441_4th_Industrial_Revolution- Impact_and_Challenges, VIRGINIA BACAY WATSON, *The Fourth Industrial Revolution and its Discontents: Governance, Big Tech, and the Digitization of Geopolitics*, Hindsight, Insight, Foresight: Thinking about Security in the Indo-Pacific, September, 2020, էջեր 37-48:

¹⁰⁴ T.SIMONYAN, «*The Fourth Industrial Revolution and the New Path of Law*», Journal of Yerevan University. Jurisprudence, YSU Press, 2023. No 2, էջեր 21-35, էջ 21:

կան կյանքի կազմակերպումը դառնում է նոր մեթոդներ և նոր հարացույցներ պահանջող համալիր խնդիր: Հարացուցային փոփոխությունները պահանջվում են նաև սոցիալական իրականության նկատմամբ իրավական հայացքում:¹⁰⁵

Այս ամենով հանդերձ՝ սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, պետաիրավական և արժեքային այս արագացող փոփոխությունների միջավայրը, քառսային զգացողություն առաջացնելու իր գործառույթից զատ, իրական կյանքում բերում է աճող մարտահրավերների մի համալիրություն, որ քաղաքական և իրավական լուծումներ փնտրող, գտնող ու կիրառող պետական պաշտոնատար անձը պետք է առնվազն տեսնի (հետո եթե հասկանա, շատ ավելի լավ), որ ինքն էլ ներդրում չունենա մի գործընթացի զարգացման մեջ, որ կոչվում է ճգնաժամ: Այդ ճգնաժամն արտահայտվում է քաղաքական, պետական կառավարման, իրավական կարգավորման և այլ դրսևորումներով:

Ստացվում է, որ երբ մենք դիտարկում ու ուսումնասիրում ենք Հայաստանի Հանրապետության խորհրդարանական մշակույթն ու էթիկան վերջին երեք տասնամյակների ընթացքում և նույնիսկ այսօր, մենք դա ակամայից անում ենք հենց ճգնաժամային պայմաններում, որովհետև Հայաստանի Հանրապետությունը երեք տասնամյակի ընթացքում դեռևս դուրս չի եկել անկայուն սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական ու մնացյալ սոցիալական (նույնիսկ հոգևոր-արժեքային) բնույթ կրող փոփոխությունների համալիրությունից, ասել է թե՛ անցումային փուլից, ասել է թե՛ ճգնաժամային միջավայրից, թեև երբեմն այդ

¹⁰⁵ Տ.Վ. ՍԻՄՈՆՅԱՆ, «Իրավունքի մարդահրավերները սոցիալական քառսային սահմանայնությունում», Երևանի համալսարանի բանբեր, Իրավագիտություն, ԵՊՀ, 2022, 1, էջեր 3-18, http://ysu.am/files/OIT_Simonyan.pdf

ճգնաժամերի հաճախականությունն ու դրանց ներսի փոփոխությունների արագությունները փոխվել են՝ առաջացնելով կայունության թյուր զգացողություն: Իսկ արտաքին միջավայրային փոփոխությունները (զինված բախումներից մինչև տեխնոլոգիաներով պայմանավորված սոցիալական կյանքի փոփոխությունն ու գլոբալիզացիա) միայն սնուցել են այդ անկայունությունը: Թեև առանձին բացառություններով նաև եղել է կայունացման ուղղությամբ կազմակերպված աշխատանք:

Հանրային գիտակցության ու հանրային զգայական ընկալումների գերակշիռ մասը ևս քաղաքական կյանքի կազմակերպման և իմաստավորման գործում լավագույն դեպքում առաջնորդվում է 19-20-րդ դարերի ծնունդ համարվող ուղենիշերով, իսկ վատագույն դեպքում՝ անհիշելի ժամանակներից մինչև 20-րդ դարը եկած ու կերպափոխված արխետիպային զգայական հիշողություններով: Քաղաքական գործիչների պարագայում, ովքեր պատասխանատու են ընդհանրապես՝ քաղաքական մշակույթի և մասնավորապես՝ խորհրդարանական մշակույթի ու էթիկայի զարգացման համար, այս ամենը ևս չափազանց կարևոր է գիտակցելու ու չմանիպուլացնելու տեսանկյունից:

Մինչդեռ պետք է ինքներս մեզ համար փաստենք, որ համամարդկային զարգացումները, տեխնոլոգիական սրընթաց աճը, անվտանգային խնդիրների բարդացումը, դրանից բխող սոցիալ-քաղաքական գրեթե բոլոր ոլորտներում անորոշության աճը, տեղեկատվության փոխանցման և կուտակման միջոցների աննախադեպ ու կյանքի արագության թոփքաձև զարգացումները մեր համար օբյեկտիվորեն ստեղծել են այն, ինչ ժամանակի մեջ անվանում ենք 21-րդ դարի միջավայր:

Քաղաքականություն ու ռազմավարություն մշակողների հա-

մար բարդություն է դարձել այն, որ «*նրանք վստահ չեն կարող լինել, թե երբ, ինչու և ինչպես այս զարգացումները (դինամիկաները) կհանգեցնեն ռազմավարական փոփոխությունների: Այն, ինչ նրանք պետք է իմանան, դա այն է, որ այս լարումների աճը չպետք է անուշադրության մատնվի*»¹⁰⁶:

Միևնույն ժամանակ կարևոր է, որ մենք երևույթները չգիտակցենք միայն ժամանակի մեջ, այլ նաև ժամանակը բխեցնենք երևույթների փոփոխությունների տրամաբանությունից, այլապես մեզ համար քաոսի պատկերը կշարունակի սովորական մնալ, և մենք, չհասկանալով սոցիալական փոփոխությունների պատճառահետևանքային կապերը, ամեն ինչ կվերագրենք քաոսին՝ «ազատելով» մեզ երևույթները հասկանալու պարտավորությունից:

Հետևաբար շատ կարևոր է գիտակցել, որ սոցիալական փոփոխությունը մենք դիտարկում ենք ժամանակի մեջ, բայց հենց «*ժամանակի ընկալումն ու գաղափարը բխում են իրականության փոփոխվող բնույթից: Անհնար է հասկանալ ժամանակն առանց հղում կատարելու սոցիալական փոփոխությանը: Եվ հակառակը. ժամանակը պարզապես անհասկանալի է փոփոխության գաղափարից դուրս*»¹⁰⁷: Ուստի պետք է հրաժարվենք այն գաղափարից, որ սոցիումում կամ համամարդկային միջավայրում կա մեկ ժամանակի ընթացք, որ նույնական է բոլորի համար, քանի որ տարբեր փոփոխությունները, փոփոխությունների տարբեր արագություններն առաջացնում են տարբեր ժամանա-

¹⁰⁶ PAUL CORNISH, KINGSLEY DONALDSON, 2020, *World of War*, Hodder & Stoughton, UK, 2017, էջ 38:

¹⁰⁷ PIOTR SZTOMPKA, *The Sociology of Social Change*, Blackwell Publishers, Oxford, UK, 1st published in 1993, 2003, էջ 41:

կի ընկալումներ և հետևաբար՝ իրականության տարբեր պատկերացումներ:

Այսինքն՝ և՛ հայկական հանրությունը, և՛ շատ այլ հանրություններ ապրում են ժամանակային տարբեր ընկալումներում՝ գտնվելով գրեթե միևնույն տարածության մեջ: Սա նպաստում է սահմանայնության որակի առավել ցայտուն դրսևորմանը հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ կենցաղից մինչև պետական կառավարում, բարոյականությունից մինչև իրավունք:

Այն իր մեծ ազդեցությունն է ունենում նաև պետահրավական միջավայրի վրա: Հատկապես դա շատ լավ նկատելի է հայկական միջավայրում վերջին տարիների սոցիալ-քաղաքական արագ զարգացումների պայմաններում: Այն իր ազդեցությունն է թողնում նաև իրավաընկալման և օրենսդրության վրա¹⁰⁸:

Եթե փորձենք պարզապես թվել ճգնաժամային իրավիճակները խորհրդարանական աշխատանքներում, հետո փորձենք հասկանալ, թե խորհրդարանական մշակույթն ինչպես է արձագանքել այդ մարտահրավերներին, ապա, միգուցե, նախ պետք է առանձնացնել վերջին երեք տասնամյակների սոցիալ-քաղաքական միջավայրի մշտական ճգնաժամային իրավիճակների առանձին դեպքերն իրադարձություններով պայմանավորված ճգնաժամերից:

Եթե առաջինը գրեթե մշտապես գոյություն ունեցող իրավիճակ է, որն արդեն սովորական է դարձել, շատերի աչքին էլ ճգնաժամ չի հիշեցնում, ապա երկրորդ պարագայում դրանք արդեն բարձր ուշադրության ճգնաժամեր են ներկայացնում:

¹⁰⁸ T.V. SIMONYAN, *Legal Dynamics in Social Systems out of Equilibrium: the Problem of Random Interventions*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովի հոգվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 34:

Այդպիսի ճգնաժամերի թվին կարելի է դասել՝

- 1988թ.-ի աղետալի երկրաշարժն ու դրա հետևանքները (ավերված ենթակառուցվածքներ, արդյունաբերական միավորներ, քաղաքներ ու գյուղեր, մի քանի տասնյակ հազար զոհեր),
- Անկախացման գործընթացը,
- 1990-1994թթ.՝ Արցախյան Առաջին պատերազմն Ադրբեջանի դեմ, Արցախի ազատագրում, Ադրբեջանից Հայաստան փախած հարյուր հազարավոր փախստականներ և մի քանի հազար զոհեր,
- Ֆինանսատնտեսական ճգնաժամը թուրք-ադրբեջանական շրջափակման պայմաններում՝ 1993թ.-ից,
- Էներգետիկ ճգնաժամը՝ 1991-1996թթ.,
- 1996թ.-ից սկսած ընտրական գործընթացների ձախողումներն ու քաղաքական շարունակվող ճգնաժամերը, բախումները ցուցարարների ու իշխանության միջև, քաղաքական իշխանության լեգիտիմության բացակայություն,
- 1999թ.-ի հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունն Ազգային ժողովում և Վարչապետի, ԱԺ նախագահի, մի քանի պատգամավորի ու Կառավարության անդամների սպանությունները,
- Ժողովրդավարության ու քաղաքական անկայունության ճգնաժամերը 2000-ականներին,
- 2003թ.-ի ընտրական գործընթացների ձախողումներն ու քաղաքական շարունակվող ճգնաժամերը, բախումները ցուցարարների ու իշխանության միջև, քաղաքական իշխանության լեգիտիմության բացակայություն,
- 2008թ.-ի ընտրական գործընթացների ձախողումներն ու քաղաքական շարունակվող ճգնաժամերը, մարտի 1-ի բախումները ցուցարարների ու իշխանության միջև, առաջին անգամ՝ զոհերը ցուցարարների շրջանում,

- 2008թ.-ից սկսած համաշխարհային ու ներպետական ֆինանսատնտեսական ճգնաժամը,
- 2013թ.-ի ընտրական գործընթացների ծախսողումներն ու քաղաքական շարունակվող ճգնաժամերը, բախումները ցուցարարների ու իշխանության միջև, քաղաքական իշխանության լեգիտիմության բացակայություն,
- 2016թ.-ի ապրիլյան 4-օրյա պատերազմն Ադրբեջանի դեմ,
- 2018թ.-ի իշխանափոխությունը (առավել հայտնի որպես «Թավշյա հեղափոխություն»),
- 2020թ.-ի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված համաշխարհային և հայաստանյան ճգնաժամը,
- 2020թ.-ի 44-օրյա պատերազմ Ադրբեջանի դեմ, ծանր պարտություն, հազարավոր զոհերը, Արցախի զգալի մասի հայաթափումը,
- 2021-2022թթ. Ադրբեջանի կողմից ագրեսիայի դրսևորումը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, օկուպացված հայկական տարածքները,
- 2022-2023թթ. Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը,
- 2023թ. Ադրբեջանի կողմից ագրեսիան Արցախի Հանրապետության դեմ, ցեղասպանությունը, Արցախի հայաթափում և արցախահայերի էթնիկ զտումները, 160 հազար փախստական Հայաստանի Հանրապետությունում¹⁰⁹:

¹⁰⁹ The Planning, Inciting, Ordering, Instigating, and Implementing of Genocide by President Ilham Aliyev and other High Ranking Officials, <https://www.cftjustice.org/wp-content/uploads/2024/04/ICC-Communication-NEW-IND.pdf>

Ահա այս՝ դեռևս ոչ ամբողջական ցանկում ներկայացված ճգնաժամային իրադարձությունների պայմաններում էլ, որոնցից մեկն էլ բավարար էր շատ ավելի մեծ ռեսուրսներ ունեցող պետությանը տասնամյակներով զարգացումից հետ կտրելու համար, Հայաստանի Հանրապետության խորհրդարանը փորձել է ոչ միայն դիմագրավել ավելացող ու բարդացող մարտահրավերներին, այլև զարգացնել խորհրդարանական մշակույթ և էթիկա:

Թե որքանով է դա ստացվել, կարող ենք դատել ու տարբեր կարծիքներ առաջարկել, սակայն այն, ինչը ձևավորվել է առանձին մարդկանց մեծ ջանքերի, հնագույն ժամանակներից՝ Հայաստանից, Ուրարտուից, Աշխարհաժողովներից ու Կանոնադիր ժողովներից եկած ավանդույթների ու որոշ ռոմանտիկ գաղափարախոսների թողած ժառանգության շնորհիվ, կարևոր արժեք է ներկայացնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև խորհրդարանական մշակույթը զարգացնել ցանկացող այլ պետությունների համար, միանշանակ է:

4.2. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական, պետաիրավական և այլ ճգնաժամերը չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել խորհրդարանական մշակույթի և էթիկայի վրա: Որպես երեք համակարգեր, որ գտնվում են միմյանց հետ անքակտելի փոխկապվածության, փոխկախվածության և փոխներազդեցության մեջ՝ համաշխարհային միջավայր (աշխարհաքաղաքական) ու սոցիալ-քաղաքական միջավայրն (ներքին հայաստանյան) ու խորհրդարանը՝ միմյանցով պայմանավորվածության մակարդակն այնքան բարձր է, որ որևէ հարթության մեջ տեղի ունեցած ցանկացած ազդակը հնարավորություն ունի մյուսում առաջացնել համակարգաստեղծ, համակարգաքանդող կամ որևէ կերպ էական նշանակություն ունեցող փոփոխություն: Իհարկե, հիմնականում արտաքին և ներքին սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ ազդակներն ավելի մեծ ազդեցություն կարող են ունենալ խորհրդարանի վրա, քան թե հակառակը, սակայն չի կարելի բացառել նաև սիներգիայի ազդեցությունը հակառակ ուղղությամբ:

Թեև, միջազգային իրավակարգի փաստացի ոչնչացումից մինչև շարունակվող էթնիկ զտումներ ու ցեղասպանություններ համաշխարհային նշանակության ժամանակակից փոփոխությունները հաշվի առնելով՝ պետք է փաստել, որ այսօր «*աշխարհաքաղաքականությունն ունի ժողովրդավարության խաթարումը սնուցելու զգալի ներուժ*»¹¹⁰, այնուամենայնիվ պետք չէ վա-

¹¹⁰ HELEN THOMPSON, *Disorder: Hard Times in the 21st Century*, Oxford University press, 2022, էջ 277:

տատեսական ակնկալիքներ ձևավորել նաև խորհրդարանական մշակույթի զարգացման միտումներում (թեև դրանք էլ են տեսանելի): Անհրաժեշտ է խորքային պայքար հենց մշակույթի բնագավառում: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է առնվազն ճանաչել այդ ճգնաժամերը:

Երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած այն բոլոր իրադարձությունները, որ ներկայացվել են այս գլխի նախորդ պարագրաֆում, լուրջ ճգնաժամերի առիթ և/կամ պատճառ են դարձել, որ խորհրդարանական մշակույթում և էթիկայում ձևավորվեն ու զարգանան ինքնուրույն ճգնաժամեր:

Այդ ճգնաժամերը կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝

- ավարտված և
- շարունակվող ճգնաժամեր:

Խորհրդարանական մշակույթի և էթիկայի **ավարտված ճգնաժամերի** մեջ կարելի է դասակարգել այն իրադարձությունները, որոնք սկսվել և ավարտվել են ժամանակի ինչ-որ հատվածում, թեև կարող են պահպանած լինել իրենց քաղաքական ազդեցությունը: Այդպիսի իրադարձությունների թվին կարելի է դասել, օրինակ, այն իրավիճակը, երբ 1998թ.-ի Նախագահ Լևոն Տեր Պետրոսյանի հրաժարականից հետո՝ մեկ օրվա ընթացքում, նրա կուսակցությունը Ազգային ժողովում իշխանությունից դառնում է ընդդիմություն, քանի որ նրան սատարող պատգամավորները և/կամ քաղաքական ուժերը մեկ օրում փոխեցին քաղաքական կողմնորոշումն ու համալրեցին նոր ձևավորվող քաղաքական հոսանքի շարքերը: Հետագայում խմբակցությունները փոխելու կամ հին իշխանությունից նոր իշխանություն տեղափոխվելու նման պրակտիկան դառնում է հաճախակի կրկնվող, երբ այլ քաղաքական ծրագրով Ազգային ժողովում

հայտնված քաղաքական ուժերն ու պատգամավորները, երկրում քաղաքական ուժերի դասավորվածության ու քաղաքական կոնյուկտուրանների փոփոխության դեպքում դուրս են գալիս իրենց քաղաքական թիմից ու դառնում լրիվ այլ քաղաքական ծրագրի մաս համարվող քաղաքական ուժի կամ հոսանքի սատարող, որպեսզի պահպանեն իրենց կարգավիճակը կամ որևէ այլ նեղ անձնական ու խմբային շահը: Սա, իհարկե, նաև ընդհանուր քաղաքական մշակույթի թերզարգացվածության հետևանք է, որն արձագանքում է խորհրդարանական մշակույթում, սակայն ակնհայտ ապացույց է խորհրդարանական մշակույթում առկա ճգնաժամի:

Խորհրդարանական մշակույթի և էթիկայի ավարտված ճգնաժամերի առանձին դրսևորումներ են նաև հայիոյանքները, վիրավորանքներն ու բախումները խորհրդարանականների միջև, օրինակ՝ Հակոբ Հակոբյանի և Լևոն Սարգսյանի միջև (2002թ.), Առաքել Մովսիսյանի ու լրագրողների միջև (2015թ.), Սասուն Միքայելյանի ու Էդմոն Մարությանի միջև (2020թ.), Սեյրան Օհանյանի ու Հայկ Սարգսյանի միջև (2021թ.), Վահագն Ալեքսանյանի ու Վահե Հակոբյանի միջև (2021թ.) և այլն:

Ուշագրավն այն է, որ այս վերջին դեպքերի հետ կապված էթիկայի խախտումների միայն մեկ դեպքն է արձանագրվել, մյուսներով որևէ հետևանք չի առաջացել, ինչն էլ հերթական ապացույցն է այն բանի, որ խորհրդարանական էթիկայի ճգնաժամերն ժամանակին ու պատշաճ արձագանք չստանալու պարագայում իրենց բացասական ազդեցությունն են թողնում ամբողջ խորհրդարանական մշակույթի վրա:

Ինչ վերաբերում է խորհրդարանական մշակույթի և էթիկայի **շարունակվող ճգնաժամերին**, ապա դրանց թվին կարելի է

դասել՝

- 1918թ.-ի Առաջին Հանրապետությունից սկսած, Երկրորդ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում արմատավորված և Երրորդ Հանրապետությունում կրկնվող մեկ քաղաքական ուժի՝ կուսակցության ձեռքում ամեն ինչ, իշխանության ամբողջ ծավալը կուտակելու արդեն կայացած (կուսակցապետության) քաղաքական մշակույթը, որը խորհրդարանական մշակույթում արտահայտվում է հենց ճգնաժամի տեսքով, որովհետև զրկում է խորհրդարանին՝ որպես ինքնուրույն իշխանության ճյուղ կայանալու, առավել ևս՝ գործադիրին հակակշիռ դառնալու հնարավորությունից: Արդյունքում խորհրդարանը դառնում է գործադիրի որոշումների, օրենսդրական նախաձեռնությունների վավերացման և ընդհանրապես՝ գործադիրի գործողությունների լեգիտիմացման ու լեգալացման գործիք: Դա արտահայտվում է նաև վիճակագրական տվյալներով, համաձայն որոնց՝ վերջին քսան տարիների ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների 85%-ից ավելին բերվում է Կառավարության կողմից, որոնց հաստատման գրեթե 95%-անոց ցուցանիշ կա:

- Այս որակին զուգահեռ, ի տարբերություն այլ հետխորհրդային շատ պետությունների, որտեղ այս նույն պայմաններում նաև առկա չէ իրական ընդդիմություն կամ ընդդիմությունը զրկված է «բարձր խոսելու» հնարավորությունից, Հայաստանում ընդդիմությունը միշտ եղել է, այդ թվում՝ խորհրդարանում, սակայն *զրկված է եղել որոշումների կայացման վրա ազդելու իրական լծակներից*, այդ թվում՝ օրենսդրական, քանի որ թե՛ Սահմանադրությամբ, թե՛ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված լծակներն ու մեխանիզմները բավարար չեն եղել ո-

որոշումների վրա ազդելու իրական լծակներ ունենալու համար: Արդյունքում ընդդիմությունը ընդամենը դարձել է խնդիրները բարձրաձայնող խոսսափող՝ չունենալով դրանք որևէ կերպ լուծելու իրական գործիքակազմ: Այս ճանապարհը սովորաբար տարել է կա՛մ ընդդիմության ծայրահեղականացման, այդ թվում՝ արմատական դառնալուն, կա՛մ այդպիսին չդառնալու պարագայում նրա քաղաքական հեղինակության անկման և հաջորդ խորհրդարանական ընտրություններում Ազգային ժողովից դուրս մնալուն: Ուշագրավ է, որ գրեթե բոլոր դեպքերում և բոլոր գումարման Ազգային ժողովներում նախորդ գումարման ընդդիմության քաղաքական ուժերը չեն հաղթահարել հաջորդ գումարման համար ընթացող ընտրությունների նվազագույն շեմը և չեն ընդգրկվել հաջորդ գումարման խորհրդարանում: Իսկ նոր ընդդիմության դերում հանդես է եկել արտախորհրդարանական ընդդիմությունը, որը նախորդ ընդդիմությանը մեղադրում էր իշխանության հետ համագործակցելու և «ոչ իրական» ընդդիմություն լինելու համար: Հաջորդ գումարման խորհրդարանում էլ նույնն է կրկնվել վերջինիս հետ: Սրա հիմնական պատճառը քաղաքական որոշումների վրա ազդելու ընդդիմության իրական գործիքակազմի բացակայությունն է, ինչը շատ լավ երևում է ժողովրդի մոտ ձևավորված խոսույթում. «*միայն խոսում են ու գործ չեն անում*», իսկ «*գործ չեն անում*», որովհետև գործ անելու իրական (այդ թվում՝ օրենսդրական) գործիք չունեն:

- Խորհրդարանում ընդդիմություն-իշխանություն համագործակցության մշակույթի ճգնաժամը ևս բնորոշ հատկանիշ է հայկական պառլամենտարիզմին: Պատճառները հիմնականում հանգում են քաղաքական մշակույթի ոչ բարձր մակարդակին, ինչն էլ իր հերթին պայմանավորված է պետականության երի-

տասարդ լինելով: Չնայած ազգային պետականության ավանդույթներն ու դրանց քաղաքական հիշողությունը հայ ժողովրդի մոտ հազարամյակների պատմություն ունեն, սակայն պետականությունների շարունակականության գործում առկա են հարյուրամյակների բացեր, որոնք էլ այդ քաղաքական ավանդույթները չեն կարողացել հունցել մինչև քաղաքական մշակույթի մակարդակ, որպեսզի վերջինս էլ արտահայտելի դառնա խորհրդարանական մշակույթում: Այսպես, օրինակ, Հայկական վերջին թագավորության՝ Կիլիկյան Հայաստանի կործանման և Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման մեջ առկա է առանց պետականության ապրելու հայ ժողովրդի 543 տարվա փորձ, ինչը, բնականաբար, ահռելի մեծ ժամանակ է պետականության ավանդույթներն ու քաղաքական մշակույթն արդյունավետ փոխանցելու համար: Քաղաքական մշակույթի ոչ բարձր մակարդակը ցայտուն ձևով արտահայտվում է խորհրդարանում քաղաքական ուժերի հաճախ թշնամական հարաբերություններում: Կարելի է մի քանի բացառություններ առանձնացնել Երրորդ Հանրապետության խորհրդարանական պատմության ընթացքում, երբ բարձր լեգիտիմության խորհրդարանների ձևավորման զուգահեռ ներխորհրդարանական հարաբերությունները կառուցվել են հանդուրժողականության և համագործակցության մթնոլորտում, որն առավել արդյունավետ է դարձրել քաղաքական տարբեր դիրքորոշումների օգտագործումը ազգային շահի սպասարկման ուղղությամբ: Այդպիսի բացառություններից կարելի է նշել անկախացման մեջ մեծ դեր ունեցած վերջին Գերագույն խորհուրդը (1990-1995թթ.) և 2018թ.-ի իշխանափոխությունից հետո՝ 2019թ.-ին ձևավորված 7-րդ գումարման Ազգային ժողովի աշխատանքների առաջին տարին: Մնացած գրե-

թե բոլոր գումարման խորհրդարաններում ներհանրապետական մակարդակում բացակայել է քաղաքական ուժերի միջև համագործակցության մշակույթը: Արտաքին քաղաքականության բնագավառում, մասնավորապես՝ համագգային հարցերում նման համագործակցությունը հիմնականում եղել է:

- Խորհրդարանական մշակույթի շարունակվող ճգնաժամ է նաև խորհրդարանի թե՛ աշխատանքների, թե՛ քաղաքականության որակի շարունակական անկումը՝ պայմանավորված աշխարհում լայն տարածում ստացած օլիգարխիայի ազդեցության, իսկ այնուհետև՝ քաղաքական պոպուլիզմի դրսևորումներով: Ժամանակագրական և վիճակագրական առումով նաև Հայաստանի Երրորդ Հանրապետության առաջին խորհրդարանից մինչև գործող խորհրդարանը գրանցվել է որակի շարունակական անկում: Թե՛ հանրությանը ներկայացնող պատգամավորների անհատական մշակույթը (կրթության, դաստիարակության, ընդհանրապես՝ քաղաքական գիտակցության և քաղաքակրթական արժեքի տեսանկյունից), թե՛ նրանց աշխատանքի արդյունքը (օրենսդրական¹¹¹, ներկայացուցչական, վերահսկողական, դիվանագիտական և այլն) անկախության սկզբնական հատվածում շատ ավելի բարձր է եղել, քան այսօր է: Եթե, օրինակ, 1990-ականների սկզբին խորհրդարանում ընդգրկվելու և արդյունավետ պատգամավոր աշխատելու համար անհրաժեշտ էր անկախության գործընթացի, արցախյան գործընթացի առաջամարտիկ լինելը, հանրությունում բարձր

¹¹¹ Խորհրդարանում 1990-ականներին պատգամավորական նախաձեռնություններ եղել են մոտ 80%, Կառավարության նախաձեռնություններ՝ մոտ 20%: 2000-ականներից սկսած դինամիկան փոխվել է՝ հօգուտ Կառավարության, և հիմա գործում է հակառակ վիճակագրությունը:

մտավորական անձի հեղինակություն ունենալը, ապա 1990-ականների երկրորդ կեսին արդեն անհրաժեշտ էր պարզապես իշխող քաղաքական ուժի հետևորդ լինելը, 2000-ականներին անհրաժեշտ էր քաղաքական համակարգի ազդեցության օլիգարխիկ լծակների առկայություն, իսկ 2020-ականներին անհրաժեշտ է պոպուլիստական գործիքների լավ տիրապետումը և հակառակորդ քաղաքական ուժերի առավելագույնս անվանարկումը: Սա ևս, իհարկե, ընդհանուր, քաղաքական մշակույթի ճգնաժամի արդյունք է, սակայն այն լավագույնս դրսևորված է նաև խորհրդարանական մշակույթում:

Խորհրդարանական մշակույթի և էթիկայի ճգնաժամերի այսպիսի օրինակների դասակարգումը կարելի է շարունակել, սակայն, կարծում ենք, առկա դասակարգումը բավարար է ընդհանուր պատկերացում կազմելու և այսօրվա մարտահրավերները գիտակցելու համար:

Եվս մեկ ավելացումը, որ անհրաժեշտ ենք գտնում անել, այն է, որ յուրաքանչյուր ճգնաժամի մեջ պետք է տեսնել ավելի լավ համակարգ ու կառուցակարգեր ձևավորելու հնարավորություն, որը կապահովի նախորդ խնդիրների վերհանումը, ախտորոշումը, ճշգրիտ գնահատումը, դրանք որպես մարտահրավեր դիտարկելը և դրանց հաղթահարման ուղղությամբ արդյունավետ և նպատակամղված աշխատանքների կազմակերպումը:

Ճգնաժամերի հաղթահարման ուղղությամբ տարվող աշխատանքները միակ միջոցն են խորհրդարանական մշակույթի և էթիկայի զարգացման ընթացքը արդյունավետ դարձնելու համար, որի հիման վրա փոքր քայլերով զարգացում պետք է ապրի նաև ընդհանուր քաղաքական մշակույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1.

Խորհրդարանական մշակույթի հիմնական բնութագրիչն այն է, որ արդյունավետ գործում են ժողովրդավարական կառուցակարգերը, հարգվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, ընդունվում են այնպիսի օրենքներ, որոնք պարունակում են հասարակության արժեքների ողջ համակարգը, իսկ խորհրդարանը ձևավորվում է ազատ և արդար ընտրությունների միջոցով: Սույն աշխատության մեջ անդրադարձանք խորհրդարանական մշակույթի, էթիկայի ձևավորմանը և պատմական զարգացմանը, ինչպես նաև ճգնաժամերին, որոնք առաջանում են խորհրդարանական էթիկայում և մշակույթում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ խորհրդարանական էթիկայի զարգացման, դրա պահպանության և վերահսկողական մեխանիզմների առումով առկա է հարաբերական կոնսենսուս՝ ձևակերպված միջազգային կազմակերպությունների խորհրդատվական ակտերում և ազգային օրենսդրություններում:

Խորհրդարանական մշակույթի որակն ու զարգացման մակարդակը հասկանալու համար սովորաբար առանձին-առանձին դիտարկվում են հարաբերությունների նշված երեք հարթությունները՝ «խորհրդարան-հանրություն, խորհրդարան-կառավարություն և ներխորհրդարանական հարաբերություններ», և դրանց համադրման արդյունքում գնահատվում է ընդհանուր առմամբ խորհրդարանական մշակույթը:

Ի վերջո, խորհրդարանական մշակույթի զարգացվածության աստիճանի գնահատական կարող է լինել այն, թե արդյոք

խորհրդարանականներն իրենց վարքագծում ու աշխատանքում, և խորհրդարանն՝ ընդհանրապես, հասել են այն գիտակցմանը, որ խորհրդարանը ոչ թե տարբեր և թշնամական շահեր ունեցող ներկայացուցիչների կոնգրես է, այլ ամբողջին պատկանող մեկ շահով միավորված խորհրդակցական ժողով:

Այս ամենը պահպանելով որպես տեսական ու գործնական ճշմարտություններ՝ վերլուծության ենք ենթարկել հայ ժողովրդի «խորհրդարանական մշակույթն ու էթիկան» պատմական համատեքստում: Սկսելով դեռևս բրոնզեդարյան պետական կազմավորումների ներկայացուցչական մարմինների զարգացած մշակույթից մինչև Հայաստանի Առաջին Հանրապետություն՝ փորձել ենք վեր հանել ժողովրդական հիշողության խորքերը ներթափանցած խորհրդարանական ավանդույթները, որոնք այսօր էլ կազմում են քաղաքական մշակույթի մասը:

Կարճ ժամանակ գոյություն ունեցած Հայաստանի Առաջին Հանրապետությունը չկարողացավ զարգացնել կայուն խորհրդարանական մշակույթ և էթիկա, սակայն կարողացավ ցույց տալ այն հիմքերը, որոնց վրա կարելի է և պետք է ձևավորել այդ մշակույթը: Ցույց տվեց, իհարկե, այն բացասականը, որոնք ծանր խոչընդոտներ են նման մշակույթի զարգացման ճանապարհին:

Իր բոլոր թերություններով և խորհրդարանական բացասական մշակութային դրսևորումներով հանդերձ՝ Հայաստանի Երկրորդ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ցեղասպանության ենթարկված ժողովրդի կյանքի շարունակականության ապահովման, պետականության ինստիտուցիոնալ համակարգի ու ընդհանրապես՝ փախստականներով լցված սոցիալական միջավայրից հասարակության կայացման, կրթական

մակարդակի աննախադեպ բարձրացման, գիտատեխնիկական ու արդյունաբերական հսկայական առաջընթացի, ինչպես նաև լայն ու նեղ առումով մշակույթի զարգացման գործում անուրանալի դեր է ունեցել, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև խորհրդարանական մշակույթի վրա:

Գլուխ 2.

Հենց այս դրական ու բացասական խորհրդարանական մշակույթի ու էթիկայի ժառանգությամբ էլ հայ ժողովուրդը ԽՍՀՄ փլուզումից թևակոխեց Հայաստանի Երրորդ Հանրապետության փուլ՝ սկսելով անկախության պայմաններում ինքնուրույն կառուցել հանրապետական կառավարման ձևի պետականություն և զարգացնել դրա անքակտելի մասը՝ խորհրդարանական մշակույթը և էթիկան:

Երրորդ Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումները կարևոր դերակատարում ունեցան խորհրդարանական մշակույթի ձևավորման և զարգացման գործում: Սահմանադրական բարեփոխումները սովորաբար նպաստում են բաց, ժողովրդավարական և արդյունավետ խորհրդարանական մշակույթի ձևավորմանը, որի նպատակն է ապահովել անձի ժամանակակից ակնկալիքների իրականացումը խորհրդարանից: Այդպիսի փորձ արվել է նաև մեզանում, սակայն մասնագետների մոտ առկա է լայն անհամաձայնություն, թե որքանով էին դրանք արդյունավետ:

Խորհրդարանական մշակույթի զարգացմանը մեծապես նպաստում է խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքը, որի շրջանակներում դրսևորվում է պետական իշխանության մարմինների, երբեմն նաև՝ իշխանության և քաղաքական ընդդի-

մության համագործակցությունը, այդ թվում՝ հասարակության ակտիվ մասնակցությամբ, ինչը ապահովում է խորհրդարանական մշակույթի զարգացումը: Խորհրդարանական մշակույթը առանցքային դեր ունի օրինաստեղծ աշխատանքում, ինչը նպաստում է առավել որակյալ օրենքների ընդունմանը, բարձրացնում է հասարակության վստահությունը և բավարար ու անհրաժեշտ հող է ստեղծում ժողովրդավարական արժեքների զարգացման կամ ամրապնդման համար:

Խորհրդարանի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս դրսևորվում են խորհրդարանական մշակույթի կարևոր առանձնահատկությունները՝ փոխադարձ հարգանքը և կառուցողական երկխոսությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը, խորհրդարանական գործիքակազմի արդյունավետ օգտագործումը, համագործակցությունը և գործընկերությունը:

Խորհրդարանական դիվանագիտության՝ խորհրդարանական վեհաժողովների հարթակը և խորհրդարանական դիվանագիտությունն՝ ընդհանրապես, շարունակում են մնալ առանցքային նշանակություն ունեցող հնարավորություն նույն խորհրդարանական մշակույթի զարգացման գործում, որովհետև այն ձևավորված ավանդույթներն ու փոխհամագործակցության մթնոլորտը, որ արդեն առկա է վերջին երեք տասնամյակների ընթացքում վեհաժողովների և ընդհանրապես՝ դիվանագիտական հարթակներում, բավականին լուրջ հիմքեր են տալիս հուսալու, որ խորհրդարանական գործունեության նաև այս ուղղության զարգացումը, իր թերություններով հանդերձ, նպաստում է խորհրդարանական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նաև միջազգային հարաբերություններում:

Գլուխ 3.

Խորհրդարանի պատգամավորների համար էթիկայի կանոնների օրենսդրական սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել պատգամավորի այնպիսի վարքագծի դրսևորումը, որը կնպաստի ոչ միայն պատգամավորի նկատմամբ, այլ նաև Խորհրդարանի նկատմամբ վստահության բարձրացմանը:

Թեև էթիկայի կանոնների պահպանումը դրված է Խորհրդարանի պատգամավորների վրա, սակայն այդ կանոնների պահպանման հսկողությունը կատարվում է էթիկայի հարցերով հանձնաժողովի կողմից, որն լայն լիազորություններով օժտված է, հետևաբար էթիկայի հանձնաժողովը պետք է լինի կենդանի օրգանիզմ և արձագանքի ԱԺ պատգամավորների բոլոր տեսակի արարքներին՝ ապահովելով պատասխանատվության և պատժի անխուսափելիությունը:

Գլուխ 4.

Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության երեսուներեք տարիների ընթացքում սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական անկայունությունն ամբողջ պետաիրավական համակարգի մշտական ուղեկիցն են եղել: Դա, ըստ էության, պայմանավորված է եղել և ինքն էլ պայմանավորել է հայկական հանրության անցումային բնույթը: Այս ամենը գալիս է հուշելու, որ Հայաստանի Հանրապետությունն իր քաղաքական, տնտեսական, իրավական, պետական ու արժեքանական համակարգերով դեռևս գտնվում է անցումային ու դրանից բխող անկայուն փուլում, որը դժբախտաբար կամ բարեբախտաբար կայունության անցման որևէ նշույլ չի ցույց տալիս՝ հաշվի առնելով ներքին ու արտաքին մի շարք գործոններ:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մեծաթիվ ճգնաժամային իրադարձությունների պայմաններում էլ, որոնցից մեկն էլ բավարար էր շատ ավելի մեծ ռեսուրսներ ունեցող պետությանը տասնամյակներով զարգացումից հետո կտրելու համար, Հայաստանի Հանրապետության խորհրդարանը փորձել է ոչ միայն դիմագրավել ավելացող ու բարդացող մարտահրավերներին, այլև զարգացնել խորհրդարանական մշակույթ և էթիկա: Թե որքանով է դա ստացվել, կարող ենք դատել ու տարբեր կարծիքներ առաջարկել, սակայն այն, ինչը ձևավորվել է առանձին մարդկանց մեծ ջանքերի, հնագույն ժամանակներից եկած ավանդույթների ու որոշ ռոմանտիկ գաղափարախոսների թողած ժառանգության շնորհիվ, կարևոր արժեք է ներկայացնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև խորհրդարանական մշակույթը զարգացնել ցանկացող այլ պետությունների համար, միանշանակ է:

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի և էթիկայի ճգնաժամերի օրինակների դասակարգումը կարելի է եթե ոչ անվերջ, ապա շատ երկար շարունակել, սակայն, դրանց մի քանի վերլուծությունն էլ բավարար է ընդհանուր պատկերացում կազմելու և այսօրվա մարտահրավերները գիտակցելու համար:

Պետք է նաև ընդգծել, որ յուրաքանչյուր ճգնաժամի մեջ պետք է տեսնել ավելի լավ համակարգ ու կառուցակարգեր ձևավորելու հնարավորություն, որը կապահովի նախորդ խնդիրների վերհանումը, ախտորոշումը, ճշգրիտ գնահատումը, դրանք՝ որպես մարտահրավեր, դիտարկելը և դրանց հաղթահարման ուղղությամբ արդյունավետ և նպատակամղված աշ-

խատանքների կազմակերպումը:

Ճգնաժամների հաղթահարման ուղղությամբ տարվող աշխատանքները միակ միջոցն են խորհրդարանական մշակույթի և էթիկայի զարգացման ընթացքը արդյունավետ դարձնելու համար, որի հիման վրա փոքր քայլերով զարգացում պետք է ապրի նաև ընդհանուր քաղաքական մշակույթը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐՔԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՕԳՏԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐ

1. ԱԶԱՏՅԱՆ Խ., *Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը*, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2020, 6 (11), էջեր 118-130

2. ԱԶԱՏՅԱՆ Խ., *Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միությունները փոխակերպվող հասարակություններում*, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2022թ.

3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա., *«Ազգային եկեղեցական ժողովները Հայաստանում ԴԺԱ [4-11] դարերում»*, Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում / խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Ա. Մովսիսյան, Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Մելքոնյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2023թ., էջեր 79-118

4. ԵՂԻՇԷ, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*

5. ՀՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍ, *Հրեական հնախոսություն (հատվածներ)* // ՀԺՊՔ, հ.1, 1981

6. ՄՈՎՍԻՍՅԱՆ Ա., *«Համակեցության մշակույթի տարրերը նախաքրիստոնեական Հայաստանում. աշխարհաժողովների պետականագիտական դերն ու նշանակությունը»*, Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում / խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Ա. Մովսիսյան, Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Մելքոնյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնի հրատարակչություն, 2023թ., էջեր 25-39

7. ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմություն

8. ՍԻՄՈՆՅԱՆ Տ.Վ., «Անցումային և անկայուն սոցիալ-պետական համակարգերի համալիրություն. սիներգետիկ աշխարհընկալում: Պետահրավական համալիրություն և սիներգետիկա. Մաս 1», Երևան, 2013

9. ՍԻՄՈՆՅԱՆ Տ.Վ., «Իրավունքի սիներգետիկա: Պետահրավական համալիրություն և սիներգետիկա. Մաս 2», Երևան, 2023

10. ՍԻՄՈՆՅԱՆ Տ.Վ., «Իրավունքի մարտահրավերները սոցիալական քառսի սահմանայնությունում», Երևանի համալսարանի բանբեր, Իրավագիտություն, ԵՊՀ, 2022, 1, էջեր 3-18

11. ՍԱՐԳՍՅԱՆ Ն., ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ., ՕԴԱԲԱՇՅԱՆ Հ., Խմբագիր՝ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմ ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020, էջ 18, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c6615a%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%B0%D5%BD%D5%AF%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_Final.pdf

12. ՎԱՂԱՐՇՅԱՆ Ա., Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920), Երևան, 2012

13. ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒՋԱՆԴ, Հայոց պատմություն

14. Декларации активов для государственных служащих, Инструмент для предотвращения коррупции, Борьба против коррупции в Восточной Европе и Центральной Азии

<https://www.oecd.org/daf/anti-bribery/48973261.pdf>, OECD (2011), Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption (Russian version), OECD Publishing. <http://dx.doi.org/9789264118799-ru>

15. МАРТЫНОВ А., А.КРЫЛОВ, Е.МАШКОВЦЕВА, *Современный европейский парламентаризм: парламентские республики Европы и тренд централизации власти*, Москва, 2017

16. НАЗАРОВА Ю.В., *Парламентская этическая культура – международный опыт*, Научные сообщения, Гуманитарные ведомости ТГПУ им. Л.Н. Толстого, No. 1-2(4-5), июль 2013

17. Парламентская этика, Справочное руководство для реформаторов, ОБСЕ, Варшава, 2022

18. СУКИАСЯН А.Г., *Очерк истории государства и права Биайнили-Урарту*, Ереван, 1975

19. Background study: professional and ethical standards for parliamentarians, OSCE. 2012, հասանելի հետևյալ հասցեով՝ <https://www.osce.org/odihr/98924?download=true>

20. BAILEY D. SYDNEY, *Parliamentary Diplomacy, Parliamentary Affairs*, Volume XVI, Issue 3, March 1962, էջեր 308–314

21. BERLIN A., *Enmerkar and Ensuhrksdanna*, Philadelphia, 1979

22. BRUS M., “Soft Law in Public International Law: A Pragmatic or a Principled Choice? Comparing the Sustainable Development Goals and the Paris Agreement”, Book chapter under review, based on a paper presented at a conference ‘Validity and Public Trust’, 17 and 18 December 2015, University of Groningen, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://papers.ssrn.com/sol3/>

papers.cfm?abstract_id=2945942

23. CARLYLE THOMAS, *The French Revolution. A History*, 2022 (Originally published in 1837)

24. Codes of conduct for parliamentarians: A comparative study, King Prajadhipok's Institute. 2009, հասանելի հետևյալ հասցեով՝

http://knjiznica.sabor.hr/pdf/E_publikacije/Codes_of_conduct_for_parliamentarians.pdf

25. COLDMANN M., “*We Need to Cut off the Head of the King: Past, Present and Future Approaches to International Soft Law*”, *Leiden Journal of International Law* (2012), 25, էջեր 335–368:

26. CORNISH PAUL, DONALDSON KINGSLEY, 2020, *World of War*, Hodder & Stoughton, UK, 2017

27. ENGR. A. K. M. FAZLUL HOQUE, *The 4th Industrial Revolution: Impact and Challenges*, Conference paper, Conference: National Conference on Electronics and Informatics jointly organized by Bangladesh Electronics Informatics Society and Bangladesh Atomic Energy Commission held at Atomic Energy Centre, Dhaka, 4-5 December 2019, հասանելի է հետևյալ հասցեով՝

https://www.researchgate.net/publication/337830441_4th_Industrial_Revolution-Impact_and_Challenges

28. FIOTT D., *On the Value of Parliamentary Diplomacy*, Madariaga Paper, 2011, 4(7)

29. GAY, OONAGH AND LEOPOLD, PATRICIA, *Conduct Unbecoming: The Regulation of Parliamentary Behaviour*, London, Politico's, 2004

30. GERHARD LOEWENBERG, *British and French*

Parliaments in Comparative Perspective, 1st edition, Routledge, London-New York, 2017

31. GUZMAN T. ANDREW and MEYER L. TIMOTHY, “*International Soft Law*”, *Journal of Legal Analysis*, Spring, 2010: Volume 2, Number 1, էջեր 171-225

32. Handbook on parliamentary ethics and code: A guide for parliamentarians, GOPAC. 2009, հասանելի է հետևյալ հասցեով՝ http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/GOPAC%20Handbook%202009_EN.pdf

33. JASKIERNIA JERZY, *Parliamentary Diplomacy – A New Dimension of Contemporary Parliamentarism*, *Studia Iuridica Lublinensia* vol. 31, 5, 2022

34. JESSUP P.C., *Parliamentary Diplomacy: An Examination of the Legal Quality of the Rules of Procedure of Organs of the United Nations*, “*Recueil des Cours*” 1956, vol. 89(1)

35. LANFRANCHI G./PARPOLA S., *The Correspondence of Sargon II*, part II; Letters from the Northern and Northeastern Provinces // SAA, V, 1990, N. 90

36. Legislative ethics: a comparative analysis, National Democratic Institute. 1999, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.ndi.org/files/026_ww_legethics.pdf

37. LEPARD D. BRIAN, *Customary International Law: A New Theory with Practice Applications*, Chapter 12: General Sources of Evidence of *Opinio Juris*, Cambridge University Press, 2012

38. MARGARYAN M., *The Development of Parliamentary Culture from an Axiological Perspective: Interview with Mariam Margaryan*, by Magda Arsenjan, *EUCACIS in Brief*, No. 7, May, 2019, Berlin, էջ 4, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.cife.eu/Ressources/FCK/EUCACIS%20inBrief%20Arseny>

an.pdf

39. MAATSON I., K. STRØM, *Parliamentary Committees* //in HERBERT DÖRING, *Parliaments and the majority rule in Western Europe*, Mannheim Centre for European Social Research (MZES), էջ 249: (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.uni-potsdam.de/fileadmin01/projects/vergleichende-politikwissenschaft/D%C3%B6ring/PMR-W-Europe.pdf>)

40. MINEUR DIDIER, *Theories of parliamentarism, philosophies of democracy*, Handbook of Parliamentary Studies, 2020, էջեր 86-100

41. NOULAS Cf. G., *The Role of Parliamentary Diplomacy in Foreign Policy*, “Foreign PolicyJournal”, 22.10.2011

42. *Parliamentary Ethics Committees, Good Practices in Organizing Parliamentary Ethics Commissions, Transparency International - Slovenia*, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.transparency.si/wp-content/uploads/2017/01/TI_Slovenia_Ethics-committees.pdf

43. POLLARD A.F., M.A., LITT.D., *The Evolution of Parliament, Second Edition, Revised*, 1926, էջ 3, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://core.ac.uk/download/pdf/7048897.pdf>

44. RAHMAN TAIABUR, *Parliamentary Control and Government Accountability in South Asia: Comparative analysis of Bangladesh, India and Sri Lanka*, Routledge Advances in South Asian Studies, 2008

45. SCHWAB KLAUS, «*The Fourth Industrial Revolution*», World Economic Forum, Geneva, 2016, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://law.unimelb.edu.au/_data/assets/pdf_file/0005/3385454/Schwab-The_Fourth_Industrial_Revolution_Klaus_S.pdf

46. SIMONYAN T.V., *The Fourth Industrial Revolution and the New Path of Law*, Article, Journal of Yerevan University. Jurisprudence, YSU Press, 2023. No 2, էջեր 21-35

47. SIMONYAN T.V., *Legal Dynamics in Social Systems out of Equilibrium: the Problem of Random Interventions*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2016

48. STAPENHURST R., PELIZZO R., OLSON D.M., VON TRAPP L., *Legislative and Budgeting Oversight A World Perspective*, The World Bank, 2008 էջ 3 (հասանելի է հետևյալ հղումով՝ http://documents.worldbank.org/curated/en/545851468313500246/pdf/456270PUB0Box31_01OFFICIAL0USE0ONLY1.pdf)

49. STAVRIDIS S., JANČIĆ D., “*The Rise of Parliamentary Diplomacy in International Politics*”, “The Hague Journal of Diplomacy” 2016, vol. 11(2–3)

50. SZTOMPKA PIOTR, *The Sociology of Social Change*, Blackwell Publishers, Oxford, UK, 1st published in 1993, 2003

51. TASIOULAS J., “*Comment: Opinio Juris and the Genesis of Custom: A Solution to the 'Paradox'*”, Australian Year Book of International Law 199, (2007) 26,

52. TASIOULAS J., “*Customary International Law and the Quest for Global Justice*” in A PERREAU-SAUSSINE and J B MURPHY (eds), *The Nature of Customary Law: Philosophical, Historical and Legal Perspectives* (2007) 320

53. THOMPSON M., ELLIS, R.J. and WILDAVSKY, A. (eds), *Cultural Theory*. Boulder: Westview Press, 1990

54. THOMPSON HELEN, *Disorder: Hard Times in the 21th Century*, Oxford University press, 2022

55. VANNARITH CHHEANG, “*Enhancing Parliamentary Diplomacy for Sustainable Development*”, in Prakash, A. (eds.), 13th Asia-Europe Meeting (ASEM) Summit: Multilateral Cooperation for a Resilient, Sustainable and Rules-Based Future for ASEM, Jakarta: ERIA, Phnom Penh: ASEM13 and The Royal Government of Cambodia, ២០២១ 185-197.

56. WIATR J.J., *Parliamentary Diplomacy after Cold War*, “Romanian Journal of International Affairs” 1995, vol. 1(5)

57. WATSON BACAY VIRGINIA, *The Fourth Industrial Revolution and its Discontents: Governance, Big Tech, and the Digitization of Geopolitics*, Hindsight, Insight, Foresight: Thinking about Security in the Indo-Pacific, September, 2020, ២០២១ 37-48

Չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 11 տպ. մամուլ:
Հանձնվել է տպագրության 10.10.2024:
Քանակը՝ 100 օրինակ:

ISBN 978-9939-887-54-8

